

U.U.R Q.U.R

Qymnophylax

891.99
J-35

muszratis

6 NOV 2001

106-29503



S 2 JUN 2015

92968

891.99

5-35

մը.

ՄԱՐԳԱՐ

ԶՈՐԱՆՑՈՒՄ

$\frac{1006}{29503}$

3085



1934

ՄԱՐԳԱՐ

25 JUN 2013

Պատ. Խմբ. 
Տեխ. Խմբ. Տ. ԽԵԶՋԱՆՔՅԱՆ
Շապիկը՝ Մ. ԱԼԵԳՅԱՆՅԱՆԻ

Ն Վ Ե Ր

Զորանոցային կյանքից վերցրած պատմվածքները նվիրում եմ ձե'զ, ընկեր կարմիր բանակայիններ, վոր յերկու կյանքինք համեմատեք...

Մեզ բառում ելին բանակ մտրակներով, սաստով ու հայնոյանեմով: Մենք ծառայության մեջ տառապում ելինք չիմանալով ինչի՞ համար, ի՞նչ նպատակով: Մեր կացությամբ ստրոկ ելինք, մեր գործողությամբ կույր գործիք մեզ ատելի հրամայողների ձեռքում:

Դուք, վոր խաղալով գնում եք բանակ, ինչպես ուսումնատեն պատահին դպրոց, ինչպես գիտության ծարակ յերիտասարդը դեպի համալսարան, գիտակցում եք այն բարձր նպատակը, վորին ծառայում եք: Դիմեք, վոր գնում եք իբրև պրոլետարիատի ու աշխատավոր զյուղացիության զավակներ ձեր դասակարգի շահերը վատնահարողներին վոչնչացնելու համար մի կուռ, անխորտակելի բանակ կազմելու:

Մենք ըստալդարներ ելինք բաղադացու տարրական իրավունքներից զուրկ, անպատճիվ, արհամարհիված, մեր հագուստից ամաչող, բայցում ելինք զյուահակ:

Դուք բաղադացի եք ազատ. խորհրդային հասարակության ու համաշխարհային պրոլետարիատի հարգանքով ու սիրով գուրգուրված: Դուք պարծենում եք ձեր համագետով, բայցում եք զյուխներդ բարձր, նպարտ այն գիտակցությամբ, վոր բոլոր յերկների պրոլետարիատի ու ստրկացած ժողովրդների իրավունքների պատվալոր պահակն եք...

Չեզ եմ նվիրում, վոր հակագրեք ձեր վիճակը մեր կյանքին:

Հեղինակ

ԳՈՂԸ

(Զինվորի հիշատակաբանից)

Բոլորս սարսափեցինք, յերբ աչքներս դիմավ նրա
այլագունած դեմքին... Կապիտան Ֆոմինը՝ մեր զո-
րանցի ավագ սպան, համարյա միշտ մռայլ եր. վոչ-
վոք չեր կարող պնդել թե ինքը յերբ ևե տեսել եր
նրան ժպտալիս. Միջահասակ, թխադեմ, ու ու յեր-
կար մազկերով՝ յերբ հանկարծ նա յերեռւմ եր զորա-
նոցի շեմքին, և նրան առաջինը տեսնող զինվորն ամ-
բողջ ուժում գոռում եր „Смирно!..“ (զգաստ), մենք
բազեի սրարշավ ստվերից սարսափած ճնճղուկի նման
վեր եյինք թռչում տեղներիցս. և յերբ շեմքի մոտ
ֆելգֆերելը* անշարժ արձանի նման ցցվում եր նրա
առաջ կրունկները միմյանց սեղմած, ու աջ ձեռքը ամ-
բողջովին ձգած ճակատին դնելով զեկուցում եր տալիս,
մենք ինչպես ցաք ու ցրիկ սյուներ գամկում եյինք
տեղներումս և աչքներս անթարթ նրա յերեսին ձգում:
Վնչ մի ձայն, վնչ մի շարժում. միայն ֆելգֆերելի շըր-
թունքներն արագ բախվում եյին միմյանց, և բառեն-
հոսում եյին այնպես արագ ու համաշափ, ինչպես վոտա-
նավորի տողերը՝ անզիր ասող աշակերտի շըթունքնե-
րից. Կապիտանը նույնպես անշարժ, ձեռքն աջ կողմից
ճակատին մեխած, նայում եր շեշտակի այդ մեքենայի
նման արագ շարժվող շըթունքներին: Ապա ֆելգֆերելն
արագությամբ ծովում եր և, մի քայլ յետ գնալով, ճա-

* Ֆելգֆերել — ոստայի ավագ յենթասպա:

Նապարհ եր տալիս նրան։ Այդ ժամանակ կապիտանն առաջ եր գալիս և գլուխն ուղիղ պահած, աջ ու ձախ հայացք ձգելով, բարձրաձայն ասում եր.

— Здорово братцы!... (Ваше, я к вам пришел):

Հնդկահավերի խմբի նման, վորոնց վրա հանկարծ քար ես շպրտում, վզներս յերկարացնելով և ձայներս միմյանց հարմարեցնելով, աղաղակում եյինք մենք.

— Здравия желаем, ваш... сок... род (вашему высокоблагородию — аռողջություն ենք ցանկանում ձերդ բարձր աղնվությանը): Ապա նա անցնում եր զորանոցի այս գլխից այն գլուխը, խոժու աչքերը դարձնելով մի մահճակալից մյուսի վրա և դառնալով մեղ, բարձր ու խոպոտ բասով հրամայում եր. „На занятие“ (զբաղմունքի), կամցած ու կարծես ակամա հնչվող ձայնով ասում. „Вольно!“ (ազատ): Այն որը, յերբ լսում եյինք այս վերջին բառը, ազատ շունչ եյիք քաշում, գուշակելով, վոր նրա տրամադրությունը լավ ե և մեղ շատ չի չարչարելու: Իսկ յերբ անմիջապես հրամայում եր հագնվել և հրացանները վերցնել այդ նշան եր, վոր նա բարկացած ե. նշան եր, վոր կնոջ հետ մեծ ճակատամարտ եր ունեցել լուսագեմին տուն դառնալուց հետո և բարկության մի մասը գենչչիկի վրա յեր թափել, կրունկներով նրա կողերը ջարդելով. այդպիսի գեպիքնում նա բերանը բաց ու խուփ եր անում, պնչերն ուղցրած փնչացնելով կատաղած գոմեշի նման, լորձունքի շիթեր ու թթված գինու գարշահուառություն արճակելով։ Այդպիսի որերում նրա սև դիմագծերում մի տեսակ կարմրություն եր նկատվում. և այդպիսի որերում մենք շատ քրտինք եյինք թափում, հրացանն ուսներիս վագելով։ Իսկ այդ որերը հաճախ եյին և անհամեմատ

ավելի շատ, քան այնպիսիները, յերբ նրա արամադրությունը լավ եր լինում:

Բայց այդ որը նրա ղեմքից վոչ թե բարկություն, այլ սարսափի, քարացնող սարսափի եր ցայտում։ Մենք պարզ նկատեցինք, թե ինչպես մինչև անգամ ֆելդֆերելի ծնկները՝ գեկուցում տալու ժամանակ, վորոնք այդպիսի գեպիքերում ուղիղ ու հաստատուն սյուների նման անշարժ եյին լինում, այս անգամ կարծես տատանվեցին. իսկ ձեռքը ճակատին դրած՝ գողգողաց, և նա բառերն արտասանելիս աչքերը մի քանի անգամ թարթեց ու թուքը կուլ տվեց։

Մրանք նշաններ եյին, վորոնք գուշակում եյին մեղ համար մի մեծ փոթորիկ. սակայն նրա հավաքված կնճիռների մեջ այս անգամ սովորական կարմրությունը չեր նկատվում. ընդհակառակը նրանք գողգողում եյին, և այնտեղից մի մահաբեր գունատություն եր արտացոլում։

— Դուքս լեր բոլորին հագնված, — հրամայեց նա բարկությունից գողացող ձայնով ֆելդֆերելին և ինքը զորանոցից յեկալ։

— Հագնվեցնք շուտով, — վորոտաց ֆելդֆերելի ուժգին ձայնը և թնդաց զորանոցից գերեզմանային լուսության մեջ. կարծես յերկրաշարժի սառը բրկը թնդյուն եր, վոր մեր ականջներին դիպչելով, գլխից մինչև վոտք ցնցեց մեղ։

Ել չիմացանք մենք, թե վորքան ժամանակ տևեց մեր հագնվելը. մեկ թե յերկու բռպեցից վամփուշտամանները գոտիներիս կապած, շինելները ձախ ուսներիս խամուտի պես անցկացրած, հրացանը ձևոներիս՝ իջանք բակը։

Մզլած, զորց յերկինք. Աշնանային բարակ, շատ նոսր անձրև եր մաղում։ Գետինը բոլորովին խոնավ

զեռ չեր թրջվել Տխուր յերկինքը կատիտանի զայրաւից դեմքի հետ մեր կրծքից մի խոր հառաջ դուրս քաշեց, վորը մենք սակայն չկարողացանք արտահայտել. շրթունքներս կրծում եյինք, վոր արգելենք մեր հապը կամ հեռցի բարձր ձայնը:

Ինչպես ոռումքի շուրջը շղթարված մարդիկ, վորոնք պատրույզի այրվելը դիտում են սարսափից քարացած դեմքով, մենք լուս անշարժ շարվեցինք, յերեսներս դարձրած դեպի կապիտանը, և հուսահատ փութկուտը թյամբ սպասում եյինք նրա պայթելուն. և նա պայթեց վորոտագին ձայնով, վորի յելևեջները ոռումքի փշանքների նման տարածվեցին մեղ վրա, և մենք գիտակցությունը կորցրած, աչքներս մթնած, փշաքաղվեցինք ամրող մարմնով:

— Կանգնեցնեք... ուղի... ի... դ....

Ինչպես յերկարաձիգ ցանկալատի ձողեր, իրար միացած, կանգնած եյինք մենք անշարժ:

— Հա-պրա-Յօ! — լսվեց յերկրորդ հրամանը. մենք շրջվեցինք դեպի աջ, և գիտակցությունը վրաներս յեկավ:

— ԵԵ-Գօմ, մարշ!... — վորոտաց նորից ձայնը, և մենք սկսեցինք վաղել — անընդհատ, արագ, յետ ու առաջ: Հրացաններն ուսներիս ճոճվում եյին, աջ ձեռքներս արագությամբ գոտկատեղի վրա յետ ու առաջ եյին գնում-դալիս, և մենք վաղում եյինք:

— Հրացաններն ուղիդ պահեցնեք... մեկյերկու, մեկյերկու... Գլուխներդ բարձր... — մեր վոտքերի համաչափ թխթխկոցի հետ յերեմն վորոտում եր նրա ձայնը, հորդ կրկուտի հետ վորոտացող չարագուշակ ամպի գոռոցի նման: Յեկ մենք վաղում եյինք շնչասպասու... մինչև ցանկալատ, վորտեղ լսվում եր նրա ահաբեկող ձայնը՝

— Կրу... գօմ... մարշ! — և մենք՝ վորորդից փախչող յեղջերուի պես, վորի առաջ հանկարծ անդունդ և բացվում, աչքներս մթնած, անգիտակցորեն շրջվում եյինք կրունկներիս վրա դեպի յետ և վաղում մինչև զորանոցի բարձր պարիսպը՝ հելվալով, անընդհատ, համաչափի...

Վոչ մի անգամ մենք այդչափ չեյինք վաղել: Մնձրել հորդանում եր, գետինը ծածկվեց ցեխով, վորի մեջ ճպի-ճըփում եյին մեր յերկարաձիս կոշիկները: Անձրեկի կաթիլները արագությամբ խփում եյին յերեսներիս, վարոնց հետ խառնվելով քրախինքը, առվի նման ցած եր հոսում: Մենք սակայն զրկված եյինք իրավունքից և հնարավորությունից՝ քրախնքներս սրբելու: Հոգնեկ եյինք մինչև վոսկորներիս ծուծը, թրջվել եյինք ամբողջ մարմնով — շորերի վրայից և տակից: Գոլորշին սպիտակ շղարշի նման գլուխներից վեր եր բարձրանում, ինչպես յառախուղը խոնավ յերկրի մակերևույթից գարնան արեկի ճառագայթների տակ: Վոչ վոք սակայն չեր մտածում կանգնելու մասին, Շատերը սայթքաբում, վայր եյին ընկնում, բայց այդ ել չեր ողնում: գաղաղած կապիտանի սպառնալից հայացքը՝ ընկնողին իսկույն վոտքի յեր հանում, և նա շարունակում եր վաղել...:

Իմ աչքերն հանկարծ փակվեցին, առաջս մթնեց, ծնկներս գողզողացին, հրացանի կոթը ձեռքիցս քիչ եր մնում դուրս պղծնի. կարծես յերազի մեջ լինեյի և հանկարծ լսեցի շատ պարզ, բարձր՝ իմ ազգանունը.

— Ակնապով...

Մի գող անցավ մարմնովս և ինձ սթափեցրեց. հրացանս ուղղեցի, կոթը սեղմեցի: ձեռքիս մեջ և շարունակեցի հեկինք վաղել, յերբ նորից հնչեց ձայնը — Ակոպնիվ... Քայլերս մեծացրի և ինձ այլ ևս չհնազանդ-

վող վոտքերիս ույժ տվի. բայց նորից լսեցի իմ ազգանունը, և այս անդամ ֆելդֆերելն եր խոսողը.

— Ակոպով, չեք լսում, ի՞նչ եւ:

Յես յես նայեցի դողալով:

— Դուքս յեկ շարքից, — հրամայեց կապիտանը: Յես չհասկացա թե ինչ եր կատարվում. դուքս յեկա, մոտեցա նրան, և նա ձայնը ցածրացնելով ասաց.

— Ազատ ես, գնա զորանոց...:

Անբացարելի յեր ինձ համար այս. ձգվեցի, յերկարացա բթածայրերիս վրա, գլուխս կուցրի, ուզում եյի... չզիտեմ ինչ ասել յերը նկատեցի, վոր կապիտանն ինձանից հեռացել և և հետեւում եւ վազող շարքերին: Այդ բոպեյին յես յերջանիկ եյի, յեթե նույնիսկ նորից ստնեյի շարքի մեջ և վազեյի, վորովհետեւ յերկու բոպե զոնե շունչ եյի քաշեր Շվարել եյի Փելդֆերելը մոտեցավ և ասաց շատ վորոշակի.

— Գնա, հրացանդ ցած գիր, ազատ ես: — Այն, այդ յերազ յեր. յես այլ ևս չեյի վագում, հայհոյանքի ու թքի տարափը չեյի զգում գլխիս վրա տեղացող, և այժմ ել գնում եյի հանգստանալու: Արագ քայլերով և դողդոջուն ծնկներով աստիճաններից վեր յելա, հրացանս տեղը դրի և տարածվեցի մահճակալիս վրա ու աչքերս փակեցի: Ի՞նչ զգացմունք եր տիրել ինձ — չզիտեմ. միայն մի մնութ, անհասկանալի նախազգացում մտքիս առաջ հեռու, միդապատ հորիզոնի վրա յերեացող ուկ կետի նման շարժվում եր գետի ինձ:

Յես շնչում եյի ծանր... կախաղանից աղատված, բայց նոր զատավճիռը դեռ չլսած մարդու անորոշության զգացումով:

Զկարողացա յերկար պատկել. վեր կացա, մոտեցա պատռհանին. շարքելը վազում եյին նույն արագությամբ, բայց առաջին հայացքից կարելի յեր նկատել, վոր նրանց

վոտքերը թմրել եյին: Առջեկց վազում եր աջ թեր պարագուխ (правофланговый) յերկարահասակ կորսունը, նրա կողքին՝ կնճուադեմ ու չիշոտ Մարչենկոն և մյուսները՝ նրանց յետեկց: Կորսունը, վոր յերքեք հոգնել չգիտեր և բոլոր խաղերի մեջ ամենախիզախն եր, հազիվ եր կարողանում գլուխն ուղղի պահել. նրա հրացանի սիրնն ել եր որորվում այս ու այն կողմ: Միջին շարքերը հետևում եյին նրանց՝ բութ հայացքները գամած միմյանց ծոծրակին: Իսկ վերջին շարքերում, վորտեղ ավելի կարձահասակիներն եյին և թուլակաղմները, կատարյալ անկարգությունն եր տիրում: Սրանք նման եյին խրտնած նախիրի յետեկց վազող ահարեկ հորթերի. վորմանք վոտքերը խփում եյին առջևից վազողների կրունկներին, վորմանք հուսահատ ճիղ եյին թափում մյուսներին հասնելու. և նրանց սվինները քամու զիմաց տարութերվող տերեազուրկ ճյուղերի նման ճոճվում եյին, դիմուկ իրար, կամ չափազանց հեռանալով միմյանցից:

Լզարիկ Լիինը կծկված հսկա հրացանի տակ, այլևս ույժ չունել մի ձեռքով պահելու այն, և հաճախ աջ ձեռքը գողաբար մոտեցնում եր նրա կոթին: Հայտնի լոգիրները (Պալր, Բաժրալ) շարունակ վայր եյին ընկնում ու նորից վոտքի յենում, լսելով կապիտանի զայրածայն հայհոյանքները:

— Վազեցնք կարգին, յես ձեր բոլորի հոգին կհանեմ, շանսատակ կանեմ, թեկուղ բոլորդ ել վայր թափեք, պիտի վազեք, — գոռում եր նա փնչացնելով, ձայնը խոպոտած: Յեվ նրանք վազում եյին հուսահատ անձնատվոթյամբ, աշնան գորեղ քամու բերանն ընկած գունատ տերենների պես:

Հոգիս լցվեց մի անբացարելի գառնությամբ, մի տարորինակ ցանկություն զարթեց իմ մեջ — կարծես նախան-

ձում եյի նրանց. և յեթե վստահանայի, պատրաստ եյի հրացանս վերցնելը ցած իջնել և խնդրել կապիտանից.

— Զերդ բարձր ազնվություն, թույլ տվեք ինձ նորից շարքերը մտնել... Մինչև անգամ այդ բառերը ասում ու կրկնում եյի մաքիս մեջ, դասը չփայող աշակերտի անվատահությամբ: Բոլորի տանջանքը — խմբական տանջանքը թոյլ չեր տալիս ինձ միայնակ վայելել իմ «յերջանկությունը»: Նավի շուրթին կանգնած նավատարի պես, վորի բոլոր ծառայող ու ճանապարհորդող ընկերները ջուրն եյին թափելնավի վրայից, յես նայում եյի պատուհանից՝ մեկ հեացող շնչառառ շարքերին, մեկ՝ կապիտանի կապտած ու դողացող շրթունքներին,

Բայց ահա Կորսունը, մինչև անգամ Կորսունը տատանվեց, հրացանը ծովեց. Նա աշ ձեռքը մոտեցրեց նրա կոթին — ուղղելու, սվինը դիպալ կողքից վազող Մարչենկոյի ովինին, և յերկուսը միասին փուլեցին զետնին: Յերկրորդ դոյլը նրանց վրա տարածվեց, և այդ ժամանակ լսվեց կապիտանի ուժին, խլացուցիչ ձայնը.

— Կանգնեցեք...

Շարքերն արձանացան:

— Յես բոլորիդ շնչառառ կանեմ, մինչև յերեկո կվագեք այսպիս, վաղն ել կվագեք, մյուս որն ել...

— Ըմիր-հօ!... վոչ վոք չարժիլի. ԽԱԼԵ-ՅՈ!... (դեպի ձախ): Բոլորը շրջեցին զետի ձախ և հայացքներն ուղղեցին կապիտանին, վոր բռունցքի մեջ գնդած թաց թաշկինակով քրտինքը սրբում եր մոայլ ճակատից:

— Ի՞նձ նայեցեք բոլորդ անշարժ: — Նա մոտեցավ հեալով աջ թեին, Կորսունին նայեց և այդպես հերթով գնաց մինչև վերջին կարգը Հեռացավ շարքից արագ քայլերով, կանգնեց նրանից 15 քայլ հեռու, զինվորական ճշտապահությամբ շրջվեց կրոնկների վրա, շարքերին հառեց արյունով լցված աչքերը և բհ.

րանը լայն բանալով գոչեց որհասական ձայնով, յուրաքանչյուր բառը հատ-հատ շեշտելով.

— Ո՞վ ե վերցրել Սկաբյաղի փողերը, թող դուրս գա շարքից...: Մինչնդային, խոր լուռթյան մեջ խորասուզվեցին նրա բառերի վերջին հնչյունները: Մի սարսուռանցավ շարքերով, և այդ սարսուռը իմ աչքերից յերախտագիտական արցոնք հնձ իր տաք շնչով, ինչպես պարուբուց ինձ իր տաք շնչով, ինչպես պարուբում ե առաջին ճանապարհը ճյունի տակից նոր դուրս յեկած ճնծաղիկի գլուխը, Կողեյի այդ բուկելին ցած իջնել մոռանալ զինվորական ամեն կարգապահություն և շնորհակալություն հայտնել կապիտանին, վոր կես ժամառաջ ինձ աղատիկ և մեղաղըյալի նստարանից:

— Վոչ վոք չէ դուրս գալիս — լմվ...: Ուղիղ...

Սյո անգամ նրա ճայնի մեջ զայրույթի հետ դուրս հոսեց մի խոր թախիծ.

— Կաղեցնք...

Նորից վաղեցին շարքերը... մի քանիսը նորից վայրընկան. և յես աշքերս լայն բացած, հետաքրքրությամբ հետեւում եյի նրանց վատքերին, անզգայաբար որորում եյի իրանս նրանց իրանների նման և սպասում եյի այս տարօրինակ ճակատամարտի ահեղ վախճանին:

— Կանգնեցնք, — նորից հնչեց ճայնը, այս անգամ միքիչ մեղմացած: Յեկ կապիտանը մի քանի քայլ մոտենալով շարքերին, ասաց համոզիչ ու հաստատուն ճայնով.

— Տղայք, յեղբայրներ, ուղիղ տասը տարի յե ծառայում եմ դորաբանակում, և ինձ ստորադրյալ վաշտի մեջ այսպիսի խայտառակ դեպք չի պատահել: Ցուրաքանչյուր զինվորական՝ սկսած հասարակ զինվորից մինչև բարձրաստիճան զորապետը, պարտավոր և զինվորական պատիվը անարատ պահել: Յես մինչև որս յերջանիկ եյի

զգում ինձ, վորովհետև համոզված եյի, թե իմ ձեռքի տակ յեղած բոլոր ծառալողները ազնվության կանոններից չեն շեղում: Բայց այս խայտառակ դեպքը կմնա անջնջելի իմ հիշողության մեջ և հանգիստ չի տա ինձ, վորովհետև այսորվանից մեր վաշտի անունը խայտառակված ե, և բոլորը ինձ մատով ցույց կտան ասելով: «Ահա կապիտանը այն վաշտի, վորի մեջ կատարվեց խայտառակ գողությունը. մյուս կողմից՝ յես բոլորիդ վրա ոլետք և կասկածեմ: Սակայն ով ել վոր և գողը, թող չկարծի, թե իր արածը կմարսի և ինքը նորից կարժանանա իր տան ու ընտանիքի տեսությանը: Յես ամեն հնար գործ կդնեմ և կգտնեմ նրան, և այն ժամանակ աստված հեռու տանի, թե ինչ կրա նրա վլուխը, լավ է այդ մասին չժտածեք, վորովհետև չեք կարող յերևակայել այն վիճակը, վոր սպասում ե նրան, Յես ամեն ջանք գործ կդնեմ և նրան ամենախիստ պատճի յենթարկել կտամ. աքսոր կուղարկեմ, բոլոր վաշտերի առաջ կիսյատառակեմ: Կորքան ուշ գտնեմ գողին, այնքան ել վատ կլինի թե ձեզ՝ և թե նրա համար: Մինչև նրան գտնելը յես դժնիք կդարձնեմ ձեր զորատունը.... — Այստեղ նրա ձայնը բարձրացավ և գոռաց:

— Իսկ վորպեսզի այդ ամենը չկատարվի — իմ անունը չխայտառակի, գուք չչարչարվեք, հանցավորը շատ խիստ պատիժ չուտի, ամենքի առաջ թող գուրս գա և խոսառվանի նա, ով կատարել և այդ գոլությունը....

Աշնան անզոր ճառագյթները, ամպերի արանքից վախկոտությամբ դուրս սողալով, ընկան ողի մեջ շարված գլխարկների թաց հարթությանը, գունատ ստվեր ձգելով գետնի վրա. դա մի յերկար, ատամնավոր պարսպի ստվերի յեր նման, վոր ամենկին չեր շարժվում:

— Կրկնում եմ յերկրորդ՝ և վերջին անգամ. ձեզ համար ել վատ կլինի, ինձ համար ել. թող քաջություն ունենա դուրս գալ նա ով դրամատնից վերցրել և Սկարյադի փողերը, նրա գրքույկով:

Վոչ վոք շարժվեց. անշունչ ու լուռ փայտերի վրա ցցված կմախքների նման, զինվորները անզգա հայացքով նայում եյին նրան: Այդ ժամանակ կարծես մի հրաբուխ զալարվելով կապիտանի ներսում, պատրաստվում եր գուրս ժայթքել: Նա դողաց ամբողջ մարմով, յերկու ձեռքը կանթեց աջ ու ձախ կողմից գոտեկատեղի վրա, աջ վոտքը առաջ զրեց, հեգնող հաղթական դիրքով կանգնեց, զլուխը թափահարեց և շըթունքները լայն բանալով, ամբողջ ուժով գոռաց.

— Ուրե... եմի...

Նրա ձայնը կերկերաց, նա տատանվեց և հաղիվ կարողացավ իրեն պահել վոտքի վրա: Զինվորների իրաններն առաջ յեկան, զորաշարքը կարծես տարուբերվեց իրեւ մի հսկա շոգենավ, վոր պատրաստվում ե ճանապարհ ընկնել. հանկարծ վերջին շարքերը խըլուտացին: Բոլորը նայեցին այն կողմը և միաձայն, անզիտակցորեն ատամների արանքից մի խլածայն, զըսպամած մոնչոց արձակեցին:

— Ա՛... ա... ա... իվանենկոն....

Զլսեցի՝ ինչ ասաց իվանենկոն. միայն տեսա, թե ինչպես աջ ձեռքով հրացանն ուղղահայաց կպցրած իր կարճահասակ մարմին, այդ գունատ զինվորը աչքերը ցած գցած կանգնել եր կապիտանի առաջ և մահապարտի նման կցկտուր բառեր եր արտասանում:

Կապիտանի կուրծքը բարձրացավ, իջավ, և ինչպես հսոցի միջից՝ նրա բերանմից գոլորշախառն վինչոց ար-

ձակվեց. Նայեց զինվորներին, աջ ձեռքը մեկնեց դեպի շարքերը և ապա արագ տանելով դեպի զորանոց, ասաց մեղմ ձայնով.

— В казарму, ребята... (դեպի զորանոց, տղայք): Միմյանց հրելով ու խեղդուկ ճիչերով զինվորները աստիճաններից վեր սլացան:

Կապիտանը կորանոց ջմտավ. Փելդֆերելը մոայլ՝ ընչացքները կրծելով, բարձրանում եր իվանենկոյի յետից: Իվանենկոն մտավ զորանոց, հրացանը տեղը դրեց և ամբողջովին կասկարմիր դեմքով մեղ նայեց:

— Այ դու գող անասուն, — հարձակվեցին նրա վրա զինվորները բուռնցքները սեղմած,

— Զես ամաչում, — գոռոմ եր Մարչենկոն, — ավագակ...

— Մրանով ճակատդ կջարդեմ այ, — ցույց եր տակիս պայտած կրունկը Սուսանովը:

Իսկ Կորսունը մոտեցավ նրան, շրթունքները սեղմեց իրար, կոկորդը խաղացրեց, յերեսը մոտեցրեց նրա յերեսին և բարձրաձայն ճիշտւուանելով, մի ահազին գունդ թուք շարտեց ուղիղ նրա ճակատին:

Մյուսները հաղթանակող վողերությամբ հետեւ վեցին նրան:

Իվանենկոն լուռ. Թեով սրբում եր յերեսից թուքը, վոր քթի յերկու կողմից զուգահեռ առուների նման հոսում եր դեպի բերանը: Մինչև անգամ վախլուկ Ռվեյանը, վոր նորակոչ հայերից եր և ուռւերեն ամենին չգիտե՞ր, սիրտ առավ և նրա վրա հարձակվեց ասելով:

— Այ, տի սկատին, արեսան, դենքի վարի հա, վոտ տերե դենդի. (ուզում ե ասել — այ դու անասուն,

բռնավոր, փող ես զողացել հմ... այ քեզ փող), և ցույց տվեց բռունցքը, անվստահությամբ զինվորներին նայելով:

— Իօնչ ե պատահել ձեզ, անպիտաններ, կորեք, — ասաց կատաղությամբ Փելդֆերելը և, ապա դաւնալով Իվանենկոյին, թակարդն ընկած վորսին նայող վորսորդի անտարբերությամբ ասաց.

— Իսկ քեզ հետո կտեսնենք, պատվական յեղբայր: Խոսակցության առարկան այդ որը իվանենկոն եր:

Դեպքն այսպես եր պատահել Սկարյադն այն բախտավոր զինվորներից եր, վորոնք տանից յերբեմն յերբեմն փող եյին ստանում: Զինվորներն առհասարակ շատ. սակավապետ են, և նրանցից շատերը ամսական 2—5 ոռութիւ ստանալով տանից, կարողանույն տարվա վերջը մի փոքրիկ գումար տնտեսել. իսկ դրա համար յուրաքանչյուր գնդում կար առանձին զինվորական դրամարկղ, վորանեղ զինվորները պահ եյին տալիս դրամը: Սկարյադն ամսական չորս ոռութիւ յեր ստանում տանից, և մեկ ու կես տարվա ընթացքում կարողացել եր տնտեսել 30 ոռութիւ: Գրքույկը նա պահում եր սնդուկի մեջ իր մյուս իրերի հետ:

Քննությունը ցույց տվեց, վոր իվանենկոն ծածուկ վերցրել եր Սկարյադի գրքույկը սնդուկից, և ներկայացնելով գանձապահին, ստացել եր նրանից Սկարյադի փողերը և ստորագրել եր նրա վոխարեն: Նա ստորագրությունն այնպես եր նմանցրել վոր վոչ մի տարբերություն չկար նրա և Սկարյադի իսկական ստորագրության մեջ: Գանձապահը, վոր նոր եր յեկել մեր գունդը, դեռ զինվորներին չեր ճանաչում: Քըն-

— Պետք ե պատասխանել, так точно, ваше вы-
сокоблагородие (հրամանք ես, ձերդ բարձր ազնվու-
թյուն), ուղղեց նրան գնդապետը:

Իվանենկոն գլխով նշան արագ և զրթունքները շար-
ժեց այնպիս, կարծես այդ բառերը կրկնում եր մտքում:

— Հապա ինչնէ այդչափ փոքր ես յերեւում, հարց-
ըեց գնդապետը:

— Հանգուցյալ հայրս շարունակ գլխիս եր խփում,
ձերդ բարձր ազնվություն, զրա համար կարճ մնացի.
մայրս միշտ ասում եր նրան. «Այ մարդ, ել տեղ չկմ
խփելու, վոր հենց գլխին ես տալիս»: բայց նա չեր
լսում. գիտե՞ք, նա այնպիսի ուժեղ բռունցք ուներ,
վոր մի անդամ մայրս ուշաթափվեց այդ բռունցքից. —
ասաց իվանենկոն այնպիսի յեղանակով, կարծես գան-
գատվելով պարծենում եր:

Գնդապետը ժպտաց, իսկ մենք բարձրաձայն ծիծա-
ղեցինք:

— Վորտեղացի յես, — շարունակեց գնդապետը:

— Վյատկայի նահանգի «Ալլովկա» զյուղից, ձերդ
բարձր ազնվություն:

— Հայրդ վաղմուց ե մեռել:

— Լավ չեմ հիշում; կարծեմ տասը տարեկան եյի յերբ
հորս գլխին փորձանք յեկավ: Մեր գյուղացի հարուստ
ցորենավաճառ Պարշինի վորդին, հայտնի լոթի Սիխոյը
պարտքի տեղ մեր ձին տարավ ու մորս մի գիշեր
ջաղացում անպատվեց, հայրս զիմեց դատարանին,
բայց այնտեղ նրան այնքան եյին թակեր, վոր զարդից
տուն չեկավ, ամբողջ գիշերը ողետանը խմել եր, ու
նրա փետացած դիակը փողոցից տուն բերին:

— Ամուսնացած ես, թե ամուրի:

Նությունը յերեան հանեց նույնպես, վոր իվանենկոն
յերկար ժամանակ Սկարյադի ազգանունը գրել եր,
վորպեսզի ընտելանա ստորագրությանը, վորովհետեւ
նրա թղթերի մեջ յերեացին մի քանի անգամ գրված
էետևալ բառերը.

— «Ստացա լիովին և ոռորի գումարը — Վասիլ
Սկարյադ», Նշանակում ե գողությունը կատարելու հա-
մար հանցափրը յերկար ժամանակ մտածել և նախա-
պատրաստվել եր:

II

Իվանենկոն վաղուց հայտնի յեր իր փշացած վարքով:
Նրան չեյին սիրում, վորովհետև ծույլ եր ու բթամիտ,
անշնորհք կազմվածքով, և վաղուց զինվորների շրջա-
նում «գող» մականունն եր վաստակել:

Յերկրորդ տարին եր, վոր իվանենկոն ծառայում եր
մեր գորաբանակում: Յերբ մեզ վաշտերի բաժնանկուց
հետո, մենք մտանք զորանոց և առաջին անգամ մեր
հրամանատարը այցելեց մեզ, իվանենկոն ինձնից գե-
պի ձախ 4-րդ շարքումն եր կանգնած: Գնդապետը՝ մի
շատախոս ողեղունչ և կատակաբան ծերունի՝ մեզ հետ
ծանոթանում եր, հարցնելով մեր ծննդավայրի, հայ-
րենիքի և ընտանեկան հանգամանքների մասին: Յերբ
նա մոտեցավ իվանենկոյին, նրա դեմքի վրա մի ժպիտ
խաղաց, և թեզ դնելով նրա ուսին՝ հարցըց:

— Տարիքդ լրացրել ես:

— Կոնեհօ! (իհարկե), — պատասխանեց իվանեն-
կոն այնպիսի դեմք ընդունելով, ինչպիսին կըն-
դունեմ գիմապիհավարտ պատանին, յեթե մի անձա-
նոթ շրջանում հարցնեյին նրան. «կարդալ գլխեք,
պարոն»:

— Ուզում եյի ամուսնանալ, բայց Զինայի ծնողները նրան ինձ չտվին. Արլովին ինձնից լավ համարեցին, ունա, ասում ե, քաջ տղամարդ ե. Սաշկան ինչ նրա թայն ե — գնրը, աղքատ յերեխա, ողի խմել անգամ չգիտեա: Թեև յես հենց այդ գիշերը գնացի ողետուն ե առաջին անգամ ամբողջ կես շիշ խմեցի, այնպես վոր հաղիվ տուն բերին ինձ, այնուամենայինիվ Զինային ելի Արլովին տվին. Հարժար աղջիկ մեկ ել կատյան եր. գիտե՞ք նա...

— Լավ, — ընդհատեց նրան գնդապետը, վախենալով թե նա մինչև յերեկո իրենց տան պատմությունն ու իր գլխի արկածները կպատմե, — այստեղ կմոռանաս Զինային ել, կատերինային ել, և կմտածես միայն ծառայությանդ մասին:

— Հրամանք ես, ձերդ բարձր աղնվություն, կմոռանամ:

— Կարդալ գիտե՞ս, — շարունակեց գնդապետը:

— Տառերն հազիվ եմ ջոկում, ձերդ բարձր աղնվություն:

— Դպրոցում չես յեղել:

— Ընդամենը 4 ամիս մնացի ուսումնարանում: Ուսուցիչ Սկարպիոնը ասաց, վոր ինձնից մարդ չի դուրս գալ, կանչեց մորս և թեից բռնելով դուրս շպրտեց:

— Ինչո՞ւ չիցիր սովորում:

— Գլուխս պինդ եր, բան չեր մտնում. ուսուցիչը միշտ գանգատվում եր, և մայրս ել վկայում եր, վոր յես դուռմ եմ:

Մենք բարձրաձայն քրքջացինք:

— Դղում, դղում... — ասաց գնդապետը ժպտալով և միտքանի անգամ մատով խփեց նրա գլխին:

Ենիլ նրա անունը մնաց ոչդումք:

Իսկ յերբ մի անգամ նա ֆելդֆերելի սեղանի վրայից մի բաժակ ողի գողացավ խմեց և կիսատ շշի գլուխը ջուր լցրեց, բոլորը ծաղրելով ասում եյին.

— Դղում ե, բայց ողիի համը լավ գիտե տղեն. միամիտ ե ձևանում, բայց գիտե ինչպես գողանա ողին, վոր չիմացվի:

Նա շատ կեղտոտ եր պահում իրեն, ամեն որ առավոտյան այցի (СМОТР) ժամանակ յերեյտորը* նրա ձեռքերի, վոտքերի, կամ շորերի վրա կեղտ նկատելով, ասում եր.

— Скатина, баран... (անասուն, վոչխար), միթե չես կարող մաքրել Մի առավոտ ամբողջ կես ժամ նա՝ իր կեղտոտ փողկապը ատամների մեջ առած, կանգնավազ տվեց (бег на месте): Նա սկզբում շատախոս եր և միշտ պարձենում եր, վոր գնդապետն իրեն հետ շատ քաղցր ե խոսել. բայց համարյա ամեն որ կրկնվող պատիճները նրան սակավախոս դարձրին: Եֆրեյտորը շարունակ նրա ծնոտի տակին բոռնցքով խփելով ասում եր.

— Ե՞ն, ջրշուն, ծառայել չգիտես, յիս քեզ ցույց կտամ, թե գնդապետը քեզ հետ ինչպես քաղցր խոսեց: Վերջերքը նա համարյա լրու եր: Յեվ գնչ վոր ել չեր ուղում իմանալ թե. նա ինչու այդպես լոակյաց ե: Ընդհակառակը շատերը գոհ եյին, վոր այդ կեղտոտ, ծույլ, գող և գորում արարածը իրենց այլնս չե մո-

* Եֆրեյտորը հասարակ, բայց փորձված զինվորներից եր. Նա յերեմի փոխարինում եր յենթասպային և սովորեցնում եր նոր զինվորներին. Նա ուսադի՛ների վրա ուներ մի-մի սպիտակ յերիզ, գորով տարբերվում եր հասարակ զինվորից:

տենում։ Իսկ յերբ նրա սնդուկից գուրս յեկավ Լեինի կորած փողկապը, այնուհետև բոլորի համար պարզվեց, վոր նա իսկական գող ե. և շարունակ խփում ելին նրա գլխին, ասելով։

— Գոյզ զդում, բողի դավակ, հալրդ այնքան և բոնցքահարել, վոր հուսահատությունից խմել և ումեռել քո դարդից — հայրասպան. — և բոլորը ծիծաղում եցին։

Վոչ վոք առհասարակ նրան չեր սիրում և չեր ընկերանում. իսկ դրամարկղի դեպքից հետո արդեն, բոլորն սկսեցին ատել նրան, վոչ միայն այն պատճառով, վոր նա մի խոշոր գումար եր գողացել այդպիսի ստոր յեղանակով, այլև նրա համար, վորի պատճառով կապիտանը սաստիկ բարկացել եր և աղելի հաճախ եր մեզ չարչարում։

Իվանենկոյի վրա յերկու պահապան նշանակեցին, վոր չկարողանա փախչել, նրան ազատեցին մեզանից, և այլև զբաղմունքներին ու խաղերին չեր մասնակցում. Նիհար, նախկին կարմրությունը կորցրած այտերով, նա առավոտները զարթնում եր և սպասում եր հայնոյանքներին։ Բոլորն եյին հայնոյում նրան, վիրավորում, շորերից քաշում, ճգող, անպիտան բառերը շպրտում նրա ճակատին, իսկ նա՝ համր — ճըպճպան աչքերը դարձնում եր մեզ և խղճալի դեմք ընդունում։

— Տեսնո՞ւմ ես, ինչ խեղճն ե. կատու ե դառել. այ յես քո հերն անիծեմ..., — ասում եր հսկայահասակ կորսունը, քաշելով նրա ոձիքից։

— Վինց մտար սնդուկը և վերցրիր գրքույկը, Վյատիկայի մուկ, — գոռում եր հաստիկ Պիխունը, — խոսիր

ե, ինչու ես՝ լրում. գանձապահին լավ խարեցիր համ.., լեզուդ բացվել եր. Այժմ անմեղացել ե, վարդապետ և ուզում դառնալ. տես, քոսա միրուքն ել յերկարացնում ե. Եհ յեղբայր, քեզ վոչ թե վանք, այլ դիսցիպիլնարոնի բատալյոն պիտի ուղարկել. այնտեղ հոգիդ դրւս կգա որական 12 ժամ հրացանի տակ վազելով, մյուս աշխարհումն ել հոգիդ բոցերի մեջ կվառվի և այս իծամիրուքդ կիսանձվի։ Յեկ Պիխունը քաշեց ուժգնությամբ նրա մազերից։ Մի խեղդված ո՛չֆա միայն դուրս յեկավ իվանենկոյի անշարժ շրթունքների արանքից։

Նա նստած մահճակալին, սնդուկը կողքին դրած, իրերը խառնում եր և կարգի գցում։

— Տես ե, տես ե, այս յերկար վոտի փաթթանները, ով գիտե, ումից ե գողացել. թուրքի խանութից ես թոցը հմ, ավազակ. — աղաղակեց Մարչենկոն, — ամոթ, ամոթ քեզ, գեռ զինվոր ել ես. զինվորի պատիվը վոտի տակ տվիր. կապիտանին մինչև անզամ ամոթահար արիր քո արարքով... ասում են, վոր քո պատճառով նա ել չի կարող ստանալ խոստացված շքանշանը...։

Նա փաթթաններն ու սրբիչը դրեց սնդուկը, այնտեղից հանեց մի գլուխ սխտոր և մի կտոր սև հաց, սխտորը մի քանի անգամ ամուր քսեց հացին ե, ձախ արմունկը հենելով սնդուկին աջ ձեռքով հացը բերանը տարավ։ Նա կծում եր հացը, ապա մի փոքրիկ կտոր սխտոր ե, աչքերը ցած գցած, ծամում եր։

— Հարամ ըլի այն հացը, վոր ուտում ես, — գոռաց Պիխունը, և մինչ իվանենկոն հացը բերանը կոխած պատրաստվում եր կծել, նա գլուխը թափահարեց և ուժգնությամբ շունչ քաշելով, թքեց նրա հացի վրա։ Իվանենկոն լուռ՝ թեով սրբեց հացը, նրա աչքերից

արցունքներ՝ զլորվեցին քթի յերկու լողմերից հացի վրա, և նա արցունքախառն սխտորոտ հացը շարունակեց կծել ու ծամել հառաչելով:

Նա մի զարմանալի լոռւթյուն եր պահպանում և վոչ մեկի հայեցանքին չեր պատասխանում: Ու նրա որը՝ որ չեր: Մի շաբաթ մնաց այնուհետև զորանոցում, և այդ շաբաթվա ընթացքում ել գինվոր չմնաց, վոր նրան չթքեր ու չհայեցեր: Իւկ նա տանում եր բոլորը լուռ, գլխակոր, և նրա պատասխանը լինում եր կամ մի խոճալի հայացք, կամ մի խեղդուկ, ծանր հառաջանք...

Մեր գնդի գատարանը վճռեց նրան յերկու տարի կարգապահական բաժանմունքը (дисциплинарный батальон):

Կերպին որը, յերբ նրան տանում եյին զորանոցից յերկու հրացանավոր պահականեր, նա մի տիսուր հայցք ձգեց զորանոցի վրա, աչքերը ճպճալ ցրեց, բերանը բաց արակ, կարծես ուզում եր մի բան ասել, բայց շրթունքները սեղմեց ատամներին և աչքերը, ցած գցեց:

Եերկու կաթիլ արցունք գլորվեցին նրա նիհարացած այտերի վրայով: Նա դանդաղ իջավ սանդուխքից բակը: Առաջին անդամն եր, վոր անձրեկ հետ ձյան հատիկներ եյին թափվում: Յերկինքն ամբողջապես սպիտակ-գորշ գույն եր ստացել, «Աքսորականի որ», — սրախոսեց անհոգությամբ գինվորներից մեկը:

Բակի մեջ նա կանգնեց, յետ նայեց — յերեխ մի բան ասելու նպատակով, բայց զայրույթ նկատելով մեր դեմքերի վրա, նորից զլուխը շուռ տվեց և ատամների մեջ մրմուալով առաջ գնաց:

Նրա վերջին, անձրեսախառն ձյունի մեջ նկարվող հայացքն այնքան խղճալի եր, վոր սիրոտ մմլվեց. մի պմբողջ շաբաթ քննելուց առաջ շարունակ այդ դեմքն եր պատկերանում աչքերիս առաջ: Աչքերս բաց եյի անում, մտքով սլանում եյի նրա յետնից և նրա վիճակի մասին մտածում. փակում եյի աչքերս, դեմս կանգնում եր իվանենկոն շինելի մեջ կծկված, ձեռքերը թերերի մեջ հաղցրած, գորշ, արտասվող յերկնքի տակ, ցեխոտ գետնի վրա, յերկու պահակ աջ ու ձախ կողմում, վողորմագին հայացքն ինձ ուղղած... Աշխատում եյի այդ պատկերն հեռացնիլ աչքիցս, սակայն նա չեր հեռանում, մինչև քունը չեր թմրացնում ջարդված մարմինս: Բայց յես մի որ, շատ հետո հասկացա, թե ինչո՞ւ այդ պատկերը յերկում եր ինձ ու տանջում:

Անցավ բավական ժամանակ, և մենք իվանենկոյին միանգամայն մոռացանք: Ել վոչ վոք չեր խոսում նրա մասին. կարծես այդ փոքրիկ մարդը մեզ հետ չեր ել ծառայել ամենեին:

Ծեկ յես ել մյուսների հետ դեպքը մոռացության տվի ու նրա պատկերը չնշեցի հիշողությանս միջից. Ե գուցե այլևս յերբեք չմտաբերեցի նրան, յեթե մի անսպասելի հանգամանք չկիներ:

III

Մեր վաշտում մի հին գինվոր կար: Թեև 24 տարեկան՝ բայց դեմքը խորշումած՝ պառավի տպավորություն եր անում: Զինվորները բոլոր հին ծառայողներին առհասարակ «Դյաղկած» են անվանում.* բայց

* Դյաղկած՝ վերտակացու, ալտենդ նշանակում եւ «լսալֆա»:

նրան բոլորը — թե նոր և թե կին զինվորներն եյին
այդ անունը տալիս:

«Դյաղկա Ստեփան» — այսպես եր նրա անունը. յեր-
բեք մեկը նրան «Դյաղկա» չեր առում, կամ «Ստեփան»,
այլ այդ յերկու բառը միասին «Դյաղկա Ստեփան»:
Մինչև անդամ մեր դաժան ֆելդֆերելը, վոր քիթը
միշտ բարձր եր պահում և յերբեք կատակ անել չեր
սիրում, և նույնիսկ կապիտանը, հաճախ կատակով
նրան այդպես եյին կանչում:

— «Դյաղկա Ստեփան», այսոր քեֆդ տեղը չի յերե-
վում, չինի՞ վատ նամակ ես ստացել: Կինդ հիվանդ
ե, կամ գուցե նոր զավակ ե ծնել և առանց քեզ կը-
նունք են արել, — կատակում եր յերիտասարդ պարու-
չիկ* նիկոլայեկը, վոր ամենից շատ եր սիրում նրան
ձեռ առնել: Մի որ պարուչիկը մի խումբ որիորդների
հետ մտավ մեր զորանոցը և նրանց հետ շրջելով ցույց
եր տալիս մեր կայարանը. պատուհանի մոտ որիորդ-
ներին նա մի բան փսփսաց ժպտալով և ապա յետ
նայելով կանչեց.

— Ստեփան, Դյաղկա Ստեփան: — Յեկ յերը նա
վազելով յեկավ ու ձեռը կնճոռու ճակատին դնելով
կանգնեց նրա առաջ, որիորդները ձեռքերը միմյանց
խփելով քրքջացին. իսկ նրանցից մեկը նորատի և
կապտաչյա՝ բարակ, հստակ ձայնով ասաց.

— Կո-կա, «Դյաղկա Ստեփան», մի բաժակ ջուր
բերես:

«Ստեփան Դյաղկան» թևերը թափահարելով ու
որորվելով, բթածայրերի վրա վազեց և մի քանի ըո-
պեյից բաժակը ձեռքին կանգնեց նրանց առաջ. որի-

* Պարուչիկ նշանակում ե յերկրորդ աստիճանի սպա:

որդը վերցրեց ջուրը, նայեց բաժակի մեջ և ապա տա-
րավ շրթունքներին: Ստեփան Դյաղկան ձեռքը ճակա-
տին դրած, անթարթ նայում եր բաժակին:

— Կին ունիս, — հարցրեց նրան որիորդը:

— Так точно, .. ваше... ва... а... ше... (Հըամանք
ես, ձերդ... ձերդ...), — կմկմաց Դյաղկա Ստեփանը, շի-
մանալով թե ինչ տիտղոս տա նրան... և շատ հետո
ավելացրեց... „панի“ (պանուհի, աղջիկ պարոն): Որի-
որդները կրկչացին:

— Յերեխաներ ել ունիս, — շարունակեց որիորդը:

— Так точно... пани, յերկուսը, աստված չուզեց
վոր ավել ունենամ, յերկրորդի ծնվելու որը ինձ զինվոր
վերցրին. ու շատ լավ յեղավ, թե չե յեթե հիմա է
յերեխա ունենայի, ապրել անկարելի կլիներ...»

— Զիս վախենում, վոր կինդ ուրիշին սիրե, — հարց-
րեց նիկոլասը:

— Այ կահ նե! Վածե բլագօրօնի, չեմ վախում,
Դաշան հոգի չի կորցնի, աստվածավախ աղջիկ ե. բայց
գիտեք, հայրս շատ աղքատ ե, տունը լավ չի կառա-
վարվում, վախում եմ անոզի Սիսոյել՝ մեր ստարոս-
տան նրան ճամբից հանի, գիտեք, նա շատ հարուստ

ե, շատ ել փուչ և վաղուց աչք եր դրել Դաշայիս վրա:
— Խեղճ, — ասացին ծիծաղելով մյուս որիորդները:

— Վոչինչ, դարդ մի անիր, մի քանի ամիս ե
մնում. կազատվեն, կգնաս Դաշայիդ մոտ և ուղածիդ
շափ կհամբուրես յերեխաներիդ ու նրան — կարոտդ
կառնես, — անաց նիկոլասը և դառնալով որիորդներին,
առաջարկեց հեռանալ զորանցցից:

Այսուհետեւ նա շարունակ պարձենում եր, վոր
պարուչիկ նիկոլասի գեղեցիկ հարսնացուն — այսպիս

եր ասում նա — իրենից ջուր և ուզել, և ինքը իր իսկ ձեռքով նրա համար աղբյուրից ջուր և բերել.

«Դյադկա Ստեփանը» մուսաստանի՝ չեմ հիշում զո՞ր նահանգիցն եր. բայց յերկարաձե, նեղ աչքերը, յերեսին տափկած քիթը, խորշոմած, գունատ դեմքը, վորի վրա մի քանի՛ հատ-հատ մազեր եյին յերեռմ, ցույց եյին տալիս, վոր նա Ղազանի թաթարների սերնդից պետք ելիներ:

Նա իրեն իսկ «Դյադկայի» նման եր պահում. բոլորից պահանջում եր, վոր իրեն հետ «հանաք չանեն», յեթե վճչ, ցույց կտա թե ինքն ով եւ Հասարակ բանի համար կորիվ եր զցում, բայց ճիշտ մեծավորի նման՝ ինչն եր կատակ անելով հաշտվում: Շատ անդամ սուտ հիվանդանում եր, վորպեսզի ծառայության չդնաւ. Այդպիսի գեղքերում՝ ֆելդֆերելը, վոր մի ուրիշի վրա սաստիկ կբարկանար և կհայդոյեր, նրան այս խոսքերով եր զիմում:

— Կո Կո (*լինչ ե*), «Դյադկա Ստեփան», ելի ծուլությունդ բռնից, եծերդ յեկան, յեղբայր, այդպես ծառայել չի լինի, — և անցնում եր նրա մոտով:

«Դյադկա Ստեփանը» ողիի հետ շատ բարեկամ եր և, միշտ շուկայից վերադառնալիս, ձախ ձեռքը թագցը բած եր լինում շինելի թեկ մեջ. այդ նշան եր, վոր նրա թեկ մեջ կես շշանոց և տեղավորված. այդ գըությամբ նա հաճախ մտնում եր ֆելդֆերելի առանձնաւոնյակը և մի քանի ըսպեյից հետո ձեռքերը դուրս ձգաց թեկից, ուրախ վռայուններով դուրս եր գալիս այնտեղից: Յերեկոյան ժամը 9-ի ստուգության (Ու-վերկա) ժամանակ շատ անդամ նա մեղ հետ շարքի մեջ չեր կանգնում: Յերբ նրա ազգանունը կարդաց-

վում եր, մի քանի վայրկյան լոռւթյուն եր տիրում և ապա „Տ” (յես, աստ) բառի փոխարեն լսվում եր որպահի ձայնը.

— Հիվանդ եւ — իսկ ֆելդֆերելը գլուխը լուս շարժում եր: Քանի, քանի անգամ նա հրացանը ուսին ժամերով բակում կանգնել եր պատժված հարբեցողության պատճառով: Մի քանի անգամ կարցեր* եր նստել և շատ անգամ հերթից դուրս որապահություն եր արել. բայց պատիմներից հետո նա կրկին նոյն «Դյադկա Ստեփանն» եր, Յեվ վոչ վոք չեր ել փորձում նրան նախատել մյուս պատժվողների: Նման, Բոլորը զիտեյին, վոր նա եր ֆելդֆերելի համար ողի գանուը:

Իսկ նոր զինվորները նրա ձեռքից աղատում չունեցին, Բոլորին հայհոյում եր ու հրամայում ինչպես մի իշխանավոր: Առավոտը, յերբ զինվորները թեյամանը ձեռքերին շարվում եյին միծ ինքնայեռի շուրջը տաք ջուր վիրցնելու, հանկարծ յերեռում եր «Դյադկա Ստեփանը» մեծ զեղին պղնձե թեյամանը ձեռքից կախ ընկած. մյուս ձեռքով սև հացի ահագին կտորը բռնած, աղահարար կծելով ու արագ ծամելով մոտենում եր նա դանդաղ. Բոլորը զիտեյին, վոր նա հերթի սպասելու չե, ուստի թույլ եյին տալիս, վոր ամենից առաջ նա վերցնի ջուրը: Յեթե մեկը չեր զգուշանում և թեյամանը թողնում եր ինքնայեռի ծորակի տակ, այն ժամանակ «Դյադկա Ստեփանը» վոտքով զին եր հրում

* Կարցերը զորանոցի մոտ գտնվող մի բանդ եր. վորտեղ բանտարկվում եյին թեթև հանցանք գործող զինվորները առանց դատի — իշխանավորներից վորեե մեկի հրամանով. Ֆելդֆերելը երավունք ուներ մինչև 1 որ կարցեր նստեցնել զինվորին:

նրա թեյամանը և իրանը դնելով նրա տեղը, բարկացած ասում եր բերանի հացով թուշն ուղղրած։

— Ե՛, յեղբայր, գեռ վորքան պիտի ծառայես, վոր «Դյաղիկա» դառնաս։ — Ցեզ վոչ վոք վոշինչ, չեր ասում նրան այդ ապօրինության համար, վորովհետեւ գիտեյին, թե նա ինչպիսի հայույանքներ եր թափելու, բերանից թոցնելով թքախառն հացի կտորները։

Իսկ նրա քունը՝ հոչակված եր։ Հենց վոր զբաղմունքները կերպանում եյին և զինվորներից յուրաքանչյուրը մի վորնե աղատ պարապմունք եր ձեռք առնում — վոմանք շոր եյին կարկատում, վոմանք գիրք կարդում, վոմանք ել զորանոցն ավելում կամ հրացանը սրբում, «Դյաղկա Ստեփանը» անուշանուշ խոմփացնում եր։ Ցերեկոյան ստուգումից հետո անմիջապես քնում եր նա։ Կամ քնած խոմփացնելիս, կամ մեկն ու մեկին ծաղրախառն հայհոյելիս, կամ հարբած, որորվելով ման գալիս կլիներ նա — ուրիշ կերպ չեմ մտարերում նրան։ Նա տանից վոչ մի կոպեկ չեր ստունում։ Նրա սոճիկն եր միայն շամիսը 45 կոպեկ, սակայն նա միշտ հարրում եր, և հայտնի չե, թե վորտեղից եր ողի գտնում։ Նա հայտնի յեր և իր ժլատությամբ, կոպեկի համար այնպես աղմուկ կըարձրացներ, վոր ամբողջ զորաբանակը նրա շուրջը կհավաքվեր։

Ցես սաստիկ ատում եյի «Դյաղկա Ստեփանին»։

IV

Մի չտեսնված փոփոխություն յեկավ «Դյաղկա Ստեփանի» վրա իվանենկոյի հայտնի դեպքից հետու նախ մենք նկատեցինք, վոր նա յերեկոյան ընդհանուր աղոթքից հետո, իր սովորությանն հակառակ։

Փոխանակ անմիջապես դեպի անկողին վագելու, դանդաղ քայլերով մոտենում եր զորանոցի ձախակողմյան պատի վրա շարված պատկերներին և աստվածածնի մեծ, դեղին շրջանակավոր պատկերի առաջ ծունկ չոքելով, գլուխը կանթեղի տակի ստվելի մեջ պահած՝ լուռ աղոթում եր…… «Դյաղկա Ստեփանը» հոգին միտն և գցել, — հեգնում եյին մոտից անցնող զինվորները։

Առավոտները թեյ վերցնելիս նա հերթի յեր սպասում, վոր ավելի զարմանալի եր։ Մի որ՝ ընդգամենը 4 ամիս զինվորություն արած և յերգումն ել չտված Ստեղծենկոն ինքնայինից ջուր վերցնելիս, յերբ նրան տեսավ կանգնած, իր թեյաժանը դեն քաշեց և նրան ճանապահն ավելով։

— Դյաղկա Ստեփան, ջուր վերցրեք։

Իսկ նա գետնին հառած աչքերը նրան զարձրեց և անսովոր մեղ ու թյամբ ասաց։

— Վոչինչ, թող լցվի, յես հետո կվերցնեմ։ — Այս չտեսնված բան եր, և բոլորի զարմանքը շարժեց։

Նա համարյա ամեն որ կանգնում եր յերեկոյան ստուգմանը, շատ սակավ եր հիվանդանում և կարծես ողից ել ձեռք եր վերցրել. մինչև անգամ նորությամբան նրան հարբած չտեսանք։ Բայց ամենազարմանալին այն եր, վոր նա ել առաջվա պես չեր քնում, և գիշերները նրա խոմփոցը անընդհանուր չեր լսվում։ Նրա հին սովորություններից միայն ժլատությունն եր մնացել և նույնիսկ կրկնապատկվել եր. նրա չխսելն ել ժլատությամբ եյին րացատրում։

Այս բոլոր փոփոխությունները շատ զարմանալի եյին, բայց վոչ վոք ուշաղրություն չեր դարձնում, և իսկի չկիտեյինք ել, թե իսկապես վմբ որից սկսեց նա փոխ-

վել Այժմ միայն, յերբ ինձ համար ամեն բան պարզ է, յես կարողանում եմ աղոտ կերպով դեպքերն հիշել և նրա փոփոխությունը կապել իվանենկոյի արած հայտնության որդիա հետ. այժմ միայն յես զարմանում եմ, թե ինչպիս յես այն ժամանակ չնկատեցի, վոր «Դյաղլա» Ստեփանը մյուս զինվորների հետ իվանենկոյին չեր նախատում: Այսպիսի դեպքերում առաջին ծաղրողն ու հայհոյողը միշտ նա եր, իսկ այդ որը նա մի անկյուն քաշված սպավորի տեսք եր ստացել: Եեվ այժմ միայն հարց եմ տալիս ինձ, թե ինչպես յես չզարմացա իվանենկոյի գնալու որը, տեսնելով «Դյաղլա» Ստեփանին» սղատշգամբում կանգնած լուռ, առանց նրան հայհոյելու: Ո՞վ գիտե, գուցե իվանենկոյին աղգական եր, կամ նրա խիստ պատիժը տեսնելով համոզվել եր, վոր զինվորական ծառայության հետ հանաքանել չի կարելի. ինձ համար անբացատրելի յեր այդուհայց յես սկսեցի զարմանալ և լուրջ կասկածել նրա փոփոխության մասին շնորհիլ մի պատահական դեպքի:

Սվինը կաշվե պատյանով գոտիցս կապած, որապահություն եյի անում Կորսունի հետ. յերկ-յերկու ժամ քնում եյինք և նույնքան ժամանակ ել հսկում յուրաքանչյուրս: Անուշ քնի մեջ եյի, յերբ կորսունը իր քնկոտ, հաստ ձայնով զարթեցրեց ինձ.

— Ակռապով, Ակռապով, ժամը 1-ը խփեց արդեն, վեր կացեք...

Յես, վոր առանց հանկելու մեկնվել եյի մահճակալիս, վրա, վեր թռա, աչքերս տրորեցի և նրան փոխարինեցի:

Շուրջս համատրած խոմից եր, Անցա յերկ-շարք ձգված մահճակալների միջով, նայեցի աջ ու ձախ

քնած ընկերներիս, հրացաններն համարեցի և կորսունին ուղարկեցի քնելու: Մի յերկու անգամ անց ու դարձ անելուց հետո, վերցրի: Լերմոնտովի „Գերօն հաշում ամերիկա աշխատավոր կամաց անուշ աղջիկ աշխատավոր մարմարիչը»: բայց մի քանի թերթ շրջելուց հետո տեսա, վոր աչքերս խփվում են, գիրքը փակեցի և վեր կացա: Դուռը բաց արի — դուրս յելա. սպատիկ ցուլը եր, պարզկա, անլուսին — մութ գիշերի: Աչքերս տրորեցի և մի յերկու րոպե սառ ողի մեջ թարմանալուց հետո ուղում եյի ներս մտնել յերբ հանկարծ մթության մեջ մի սպիտակ մարմին ստվերացավ աչքիս առաջ սկսեցի դիտել տեսողությունն լարած. նա մոտենում եր ինձ: Զինվորներից մեկն եր, վոր զինելի մեջ փաթաթված դուրս եր գնացել: Շինելը յերկու ձեռքով մարմնին փաթաթած, սեղմել եր վորի վրա, բայց կրծքին յերեսում եր սպիտակ շապիկը: մոտեցած, նայեց ինձ և լուռ անցավ:

Այս սովորական բան եր, և յես ուշադրություն անգամ չդարձրի, թե ով եր: Յերբ դուռը բաց արի ներս մտնելու, զորանոցի ծանր — տաք ողը յերեսիս դիպավ, և Ի՞նչ վատ ոդ ես, սկսել եյի մտածել, յերբ հանկարծ նկատեցի, վոր դըսից յեկած զինվորը շինելը վրայից վերցրած՝ պատրաստվում եր մտնել մազե: չոր ծածկոցի տակ: Դա «Դյաղլա» Ստեփանն եր:

Յես մոտեցած խացողի լամպին և պատրույգը ցած քաշեցի: Նստեցի ճրագի մոտ փայտյա նստարանի վրա, արմունկս ղրի կեղառոտ սեղանին, զլուխս հենեցի ձեռքիս և մտածունքն՝ րի աշխարհն ընկա, աչքս շարունակ ժամացույցի վրա: պահելով: Թառասուն յերեք ռոպե յեր անցել, յերբ մի խշիշոց լսեցի: զլուխս բար-

ծրացրի և նայեցի գեղի զոբանոցի խորքը՝ մի զինվոր եր, վոր կոշիկներն հագած՝ գրաթաթվում եր շինելով, դուրս գնալու համար Ծերք մոտովս անցավ, յես ճրագի աղոտ լույսի ու թանձր, խեղդուկ՝ ողի մեջ նկատեցի «Դյաղկա Ստեփանի», գունատ գեժքը: — Կրկին նա, — անցավ մտքովս:

Նա վերադարձավ, պառկեց: Անցավ՝ եթի կես ժամ, մի քամի գինվոր ելի դուրս գնացին ու յեկան նույն ձեռվ. Մնում եր ճիշտ յերեք քառորդ ժամ, վոր յես զարթեցնեյի Կորսունին ու ինչոք հանգստանայի: յերկ տեսա, վոր. «Դյաղկա Ստեփանը» նորից գրաթաթվում և շինելի մեջ: «Ճերեկի հիվանդ ե». մտածեցի յես Նա վերադարձավ և լուռ պառկեց: Յես վեր կացա տեղիցս, սկսեցի զորանոցի յերկարությամբ հրացաների շարանների առաջով անցուղարձ անել, շուտ-շուտ ժաման ցոյցի յերկար սլաքին նայելով: «Անհամբերությամբ սպասում եյի, վոր ա դ յերկու ը սլաքը բարձրանա, հասնի 12 թվանշանին, և այն՝ ժամանակ 3-ը կիսիեր ու յես կզարթեցնեյի Կորսունին: Ավելի արագ քայլերով սկսեցի անցուղարձ անել, և այս անգամ հրացանների առջևից անցա ու գնացի մինչև զորանոցի վերին պատը: Վերադարձին՝ աջ կողմս մի խուլ գլթփթոց լսեցի — նման ստորերկրյա: Ջրի հոսանքի ձայնին. նայեցի «Դյաղկա Ստեփան» եր նստած, գլուխը ցած՝ զեղի աջ ծուած. անցա նրա առաջով, յերկար չնայեցի: Ծերք նորից վերադառնում եյի, տեսա վոր յերկար սլաքը յերկու րոպե միայն առաջ եր գնացել և գեռ 28 րոպե մնում եր մինչև յերեքը: Հենց այնպես, ժամանակս շուտ անցկացնելու համար, մոտեցա «Դյաղկա Ստեփանի», վոր դեռ նստած եր և հարցրի.

— Ի՞նչ ե, «Դյաղկա Ստեփան», ինչո՞ւ չես պակռւմ, հիվանդ հոչե՞ս:

Նա շրմունքները շարժեց, նայեց ինձ, բերանը ծրում ըստեց, կարծես ուզում եր մի բան ասել: բայց աչքերը շուռ տվեց և լուռ նայեց ճրագին: Նրա գունատ ցեմքը սաստիկ աղոտ լույսի տակ չգիտեմ ինչո՞ւ իմ մեջ զարթեցրեց իվանենկոյի: կարմրությունը կորցրած, մանր գիմագծերի պատկերը: Այս հիշողությունը զարմանալի յեր նրանով մանավանդ, վոր վոչ մի նմանություն չկար այս յերկու անձերի վոչ արտաքինի և վոչ բնավորության մեջ:

— Փորդ հոչչի ցավում, «Դյաղկա Ստեփան», — նորից հարցրի յես: Իսկ նա նայեց ինձ, հետո ճրագին և ապա աչքերն ուղղելով դեղի առաստաղը՝ կուրծքը ուղեցրեց ու մի խոր հառաջ արձակեց:

— Վաղը գնա բժշկի մոտ, «Դյաղկա Ստեփան», ինչպես յերեւմ և հիվանդ ես, — նորից պնդեցի յես:

Նա թեք ընկավ կողտ՝ խոտով լցված բարձի վրա և նորից հոգոց հանելով ասաց, կարծես սիրտ առնելով իմ մեղմ և բարեկամական խոսակցությունից:

— Վոչ, պարն Ակոպով, հիվանդ չեմ, վոչ ել փորս և ցավում: միայն գիշերը սարսափելի յերկար ե, մարդու քուն չի տանում: Ելի ափսոս չե ամառը, դեռ քունդ չտուած՝ մեկ ել տեսար արելի ճառագայթը պատուհանից սկսեց աչքերդ ծածկել: — Առաջին անգամն եր, վոր նա ինձ հետ՝ խոսելիս սպարոն եր ասում — յես զարմացա: Գիշերվա յերկարությունից եր գանգատվում քնկու «Դյաղկա Ստեփանը» այդ ավելի զարմանալի յեր, բայց ինձ տարորինակ չթված, վորովհետեւ յես ել անհամբեր բոպեներն եյի համարում, թեև քնի

սաւտիկ կարոտ եյի. Ուզում եյի հեռանալ, յերբ նա
ուղիղ նստելով հարցը իրեն անսովոր խղճալի ձայ-
նով:

— Դուք կարգացած մարդ եք, աշխարհից շատ բան
գիտեք, պարո՞ն Ակոպով — ոժոխքում մեղավոր հոգի-
ները քննւմ են, թե գիշեր-ցերեկ կրակի բոցերի մեջ
տանջվում են արթուն, — Ես աղջեցի.

— Են Դյանկա Ստեփան, Եղ վորտեղից հիշեցիր:
դժոխքը վորն ե, ինչ գատարկ պառավական բաների
մասին ես մտածում. քննիր: — Բայց նա կարծես շլսելով
իմ ասածները, խոսքը փոխեց խսկույն:

— Ասում են, վոր կարգապահական բատալիոնը
զժոխքից ել վատթար ե, ճիշտ եւ Այստեղ, ասում ենչ
զինվորների հոգին հանում, առավտից մինչև յերեկո
հրացաններով վագեցնում են:

— Ճիշտ ե, — ասացի:

— Բայց գիշերները նրանք հանդիստ կքննեն չե, —
հարցը նա միամիտ յեղանակով:

— Ի հարկի, — պատասխանեցի յես, — հոգնած մար-
դիկ են, պառկեն թե չե, քնները կտանի:

Այստեղ Շյանդկա Ստեփանը նորից հառաչեց: Մտած-
մունքի մեջ ընկանք՝ յես ել, նա ել, և մի բոպէ մեր
մտածկոտ հայացքները հանդիպեցին միմյանց, սակայն
նա աչքերը թարթեց և յերեսը շուռ տվեց. ապա ասաց
դառնազին ձայնով:

— Խեղանդկանկո, հիմա վորքան կտանջիկ Գի-
տեք, նա շատ բավ տղա եր, մեզանից վոչ վոք նրան
չեր ճանաչում և իզուր տեղը ծաղրում եյինք. դրա
համար նա՝ ել վոչ վոքի հետ չեր խոսում. նա շարու-
նակ գանգատվում եր, վոր ինքը աղքամա ե, հարքեւ-

ցողի տղա, զրա համար բոլորն արհամարհում են իրենն
«Մեր գյուղումն ել» — ասում եր նա, — ծաղրում եյին ինձ
և շշանսատակ յեղած հարբեցողի վորդի եյին անվա-
նում: Մայրս, — ասում եր նա, — ամեն որ աղոթք եր
անում աստծուն, վոր իր հոգին առնի և ինքը չար
գյուղացիների ձեռից ազատվի. գյուղի տղերը միշտ
ծեծում եյին ինձ: Յերբ զինվոր ընկա, շատ ուրա-
խաց, վոր, ազատվեցի այդ անիծածների ձեռքից:
Բայց այստեղ ել, — ասում եր նա, — շշարողացաց ազատ-
վել. և այդ իմ մեղքից ե. յես համ աղքատ եմ, համ
գդում, այզպես ել հողը կտնեմ: Դրա համար ել նա
բոլորից վախում և քաշվում եր: Քանի անգամ յես
նրան իզուր տեղը հայհոյել եմ և նույնիսկ բունցքով
խփել եմ, իսկ նա վոչինչ չի ասել... Յես հիմա զար-
մանում եմ, թե ինչու եյի նրա հետ այնպիս վարվում,
քանի վոր յես ել նրա նման գյուղում աղքատ եյի
ու անտեր: Խեղանդկանից Բայց նա այժմ հան-
գիստ քնած կլինի, չե: Տեսնես նա քնած ժամանակ
ինչ յերազ և տեսնում: Գիտեք, պարոն Ակոպով, յես
երեկ գիշեր ինչ սարսափելի յերազ տեսա...:

Դընգ, գընգ, գընգ... խփեց ուղիղ յերեք ան-
գամ ժամացույցը և յես նայիլով մեծ սլաքին, ասացի:

— Քնիր, «Դյանկա Ստեփան, յես ել պիտի քնեմ...
Յեղ վեր յելա:

— Պարոն Ակոպով, դուք վորքան լավ մարդ եք.
այդ ուսումի շնորհիվ ե, չե. յերանի ձեզ, վոր ուսում
եք առել. ամեն բան զիտեք և բոլորն ել ձեզ հարգում
ու քաղաքավարի, մարդավարի են վարվում ձեզ հետ:
Մինչև անգամ կապիտանը ձեզ հետ գդուք-ով ե
խոսում: Հիշում եք, ինչպես կապիտանը ձեզ դուրս

բերեց՝ շարժերից և չարչարանքից աղատեց. յես այն ժամանակ հասկացա, վոր նա համոզված եր, թե դուք գողություն չեք անիլ և շատ շատ նախանձեցի ձեզ. քողորի վրա կասկածում եր, բացի ձեզանից.... Յեզ ձեր ծառայությունն ել քիչ ե — տարի ու կես՝ աչքդ խփիր, դեռ չըացած տարին գլորվեց. Յերեք տարի ինձ նից հետո եք յեկել, յես զեռ այստեղ պիտի փթնմ, իսկ դուք արդեն տանն եք. Ե՞ս, յեղբայր, անուսում մարդու կյանքը կյանք չե....

Հեռացաւ Կորսունին զարթեցրի և շտապով տեղս մտաւ:

Ինչի համար եր այդ խոսակցությունը, ինչու Դյաղկա Ստեփանը չեր քնում, ինչիւ հիշեց Իվանենկոյին ու գժոխքը... Ժամանակ չունեցա այդ մասին մտածելու, և յերբ աչքերս բաց արի՝ տեսա, աղոթարանը սպիտակին և տալիս պատոհանից, և մոտս կանգնած ե քնաթաթախ, ուռած աչքերով, պապղուն դեմքով Կորսունը. Ժամը 5-ն եր արդեն, Նորից սիինը կապեցի և սկսեցի զարթեցնել զինվորներին. Յերբ մոտեցա «Դյաղկա Ստեփանին», տեսա՝ աչքերը կարմրած, խոր քնի մեջ: Նրան ել զարթեցրի:

— Հին ծուլությունդ կրկին մտաբերեցի՞ր, անպետք, հազիկ ուղղվել եյիր, — զոռաց բարձր ձայնով ֆելդֆերելը. Մատները խփելով յերկար սուսերի կոթին:

«Դյաղկա Ստեփանը շարքից զուրս յեկած, հրացանը ձեռին, անխոս կանգնած եր նրա առաջ, գլուխը կախ գցած:

— Վոչխամը ե դառել, խոսին ել մոռացել ե... պառակ, կորիք աչքից, լոգերու — «Դյաղկա Ստեփանը»

հրացանը տեղը դրեց. Կալունութիւնը քայլերով գնաց, քերանքիվեր փռվեց մահճակալի վրա:

Այս անգամ նա չեր կեղծում, լուրջ հիվանդ եր: Մի քանի անգամ բժշկի մոտ գնալ գալաց հետո, մի որ վկայականը ձեռին ներկայացավ ֆելդֆերելին և իրավունք ստացավ իրերը կարգի զցել ու հիվանդանոց գնալ: Առ վորի հետ չխոսեց հիվանդանոց գնալիս: Հրացանը պարագաներով հանձնեց հերթապահ դինվորին, կոճկեց շինելը, զոտին անփութությամբ կապեց, զլիսարկը կոխուց գլուխը, ձեռքերը դրեց շինելի գրպանը և, առանց մեղ նայելու, դուրս յեկավ զորանոցից:

Բոլորս մոռացանք «Ստեփան Դյաղկային»: Միայն յերբեմն — առողջացած զինվորները հիվանդանոցից զորանոց գալիս պատմում եյին, վոր «Ստեփան Դյաղկանը բոլորովին փոխվել, նիհարել վոսկոր և կորել «մելզշերներն ասում են, վոր նա յերկար չի ապրի, բայց չեն ել հասկանում, թե ինչ հիվանդություն ունի»:

— Ե՞ս, յեղբայր, յես ճանաչում եմ նրան, — ասաց մի որ Մարչենկոն, — սուտ հիվանդ ե ձեանում. և զի գիտե, քաջախ և խմել, կամ թութունի ջուր և անուշ արել, վոր մեղ նման հրացանը վերցրած փողոցները չըչափչի. շատ ե ծառայել մարդը, — հեզնից նա, — հո, նել ե, ուզում ե մի քիչ հանգստանա:

Յես կարծես զգում եյի, վոր Մարչենկոն սխալվում եր, բայց վոչինչ շասացի:

Նրա մասին խոսք լինելիս՝ զինվորները — մանաւանդ յերդումն արդեն ընդունած նոր զինվորները, սաստիկ հայհոյում եյին նրան: Յեզ վոչ չեր փորձում պաշտպանելու Այժմ միայն յես ցավում եմ, վոր

Նրա մասին վհչ մի լավ խոսք, պաշտպանելու վոչ մի փորձ չեմ արել Յեվայդ ցաման զգում եմ այն որից, յերբ վերջին անգամ տեսա նրան այդ դրության մեջ, հիվանդանոցից զորանոց դառնալոց հետո....

V

Անցալ մեծ պասից ամբողջ վեց շաբաթ, և մենք վերջապես աղատվելու եյինք ձկան շորվա ուտելուց:

Անհետացան մեծ պասի հետ և գորշ յերկնքի մութ կնճիռները: Մանուկ ճառագայթները շեկ ասեղների պես վոստվոստալով ցցվեցին սպիտակ սալանի վրա: Զյան հատիկները չդիմանալով նրանց չարաճճի խըստութերին, ծիծաղից թուլանում եյին ու պսպղուն աչքերը փակելով անհետանում: Յերկիրը հետզհետե բաց եր անում իր խոնավ, սև կուրծքը: Նոր ծիփերը գաղտագողի, անշշուկ՝ աշխիկները դուրս եյին հանում հողի տակից և զարմանքով պնդշամուշ նայում արեին: Պղտոր առուները խոխոջալով անցնում եյին փողոց ներով: Գարռւնն իր գալ սարշավակի, և գարնան հետ մեր որերը գլորիվում եյին հապճեպով:

Դանդաղաշարժ մեծ պասի ու թմրած ձմեռվա հրաշ ժեղար մեր սրտերից ջնջեց միորինակ տաղտուկը: և յերհաներիցս անհետացրեց յերկնքից և գորշ թախիծը: յերհաներիցս անհետացրեց յերկնքից և գորշ թախիծը:

Մի ամբողջ շաբաթ մենք պատրաստություն եյինք տեսնում զատիկը դիմավորելու: Անկողինները դուրս ցցեցինք, ներքնակների և բարձերի հարդերն ու խոր գցեցինք, ներքնակների գորանոցի հատակն ու պատուհանները լվացինք և, յերկու մեծ խմբերի բաժանված սկսեցինք յեկեղեցի հաճախել: Հրեաներն եյին այդ վայելի արգահատելի:

Թուաներն ու վրացիները գնում եյին ոռւաց յեկեղեցին, իսկ հայերն ու լիհացիք հայոց: Զինվորական կարգապահական խստություններն ել այդ շաբաթ թուլացել եյին:

Այդպիսի մեծ տոներին հիմանդանոցում յեղած այն զինվորները, վորոնք համարյա առողջացած են, կամ վորոնց հիվանդությունը թիթե ե, բժշկից իրավունք են ստանում և զալիս են զորանոց: մյուսների հետ տոնը դիմավորելու:

Ներքնակները նոր հարդով լցրած փոել եյինք արևի տակ և մենք պատի տակ շարված տաքանում եյինք ու զրոցում: յերբ հանկարծ կարաչենկոն գոռաց:

— Ստեփան Դյադկան, Դյադկա Ստեփանը, տղերք... դժոխքի շուն ե դարձել, նայեցնք:

— Զատկի ողին միտն եղացել խոզը, — սրախոսեց Վասիլի վը:

— Ի՞նչ ես հայնոյում, եշակ, ամոթ չեմ, — բարկացած նախատեց Շակաշվիլին, ցից ատամիների արանքներից թուքը ցայտեցնելով: Բոլորն ընդհատեցին հըռ հողը և լորշ դեմք ընդունեցին:

Ես նայեցի ու առաջ տեսա մի կատարյալ կմախք: աչքերը փոս եյին ընկել: տափակ քիթը, վոր առաջ հազիվ նկատվում եր, բարձրացել և ցցվել եր հողակոշի նման, վորի կողքերից անձրևաջուրը քերիլ ե հողը: կնճիռները շատացել եյին և ակոսները խորացել: իսկ ցանցառ մազերը թրջված լաթի պես կախ եյին: ընկել: իրոք ծիծաղելի յեր «Դյադկա Ստեփանը», բայց ավելի՝ արգահատելի:

Սակայն նա վոտքերը դնում եր գետնին շատ հաստատ, քայլերը անում եր մեծ-մեծ և արագ: Յերկու

գուրք՝ ընկած այտոսկրների արանքում վիսացող շըր՝
թունքների վրա ժպիտն հիշեցնող մի բան եր յերեռմ,
դեղին ժայռի մի ծակոտիռմ բան գունատ վարդի
նման Իսկ խոր ընկած աշքերում մի բան եր փայլում,
վոր հիշեցնում եր թանձր ամպերի մի պատճանական
ճեղքվածքից գուրս սպրդած արեի դողդոջուն ճառայ-
գայթիւ:

Նա լուռ մտավ զորանոց: Մյուսների հետ յեկեղեցի
եր հաճախում:

Գիշերվա ժամը 12-ին ոռւս զինվորները հագնվեցին
և ֆեղփերելի առաջնորդությամբ ուղերվեցին յեկե-
ղեցի: «Ստեփան Դյաղկան» վերջին շարքերում կորա-
գլուխի հետեւում եր նրանց:

Հետեյալ որը, առավոտյան նրանք վերադարձան
հաղորդված, և մենք պատրաստվեցինք ընդհանուր
թաթախում անել զորանոցում:

Մաքուր հագնված, կոշիկներս սրբած, փայլուն-մո-
մած գոտիներով, մեծ կակարդները գլխարկներիս կըպց-
րած մենք շարվեցինք յերկու շարքով զորանոցում:
Ֆեղփերելը իրանը ուղիղ պահած, ձեռքերը հանդարտ
շփելով միմյանց, անց ու գարձ եր անում մեր առաջով,
սրան կամ նրան ժպտադեմ թեթև նկատողություն
անելով: Յածրաստիճան սպաներն արդեն հավաքվել
եյին. սպասում եյինք կապիտանին: Զինվորները միմ-
յանց հետ փափում եյին, աչքի տակով նայելով պատի-
տակ դրված մեծ սեղանին, (վորի վրա հպարտորեն
բարձրանում եյին չորս հատ մեծ, կապտագույն շշեր՝
լի ողիով) և ապա նայում ֆեղփերելին: Շշերի կող-
քին — սեղանի վրա, աղյուսի կտորների նման, բլրածե-

դարսված եյին միմյանց վրա պատքեքի ղեղին կտոր-
ները: Կողք փոքր սեղանին դրված եր խաշած ձվե-
րով լի մեծ կոնքը, գորի առաջ զարսված եյին մի-մի-
րով լավաշի մեջ փաթաթված ապուխտի բարակ շեր-
տերը: Ամբողջ յոթ շաբաթ սև հաց կրծող ու ձկան
անհամ շորվան խփշող շրթունքներից ջուր եր վաղում
այդ բացառիկ տեսարանի հանդեպ:

Ֆեղփերելը վազեց ղեպի գուռոր: Սպաներն շտապով
շարվեցին մեր աջակողմը, և բոլորից աջ կանգնած
պարուչիկ ի լանովը ձեռքը ճակատին տանելով գուռաց:

— Ըմիռն...

Գուռը բացվեց և կապիտանը ներս մտավ: Չողշո-
դուն, — վոսկեթել ուսա իրներով (ԷՊՈԼԵՏ): Ֆեղփե-
րելի զեկուցումն ընդունելուց հետո, ուա չափածո քայ-
լերով առաջ յեկավ և, ձեռքը ճակատին դնելով, ուրախ
ու հանդիսավոր ձայնով ասաց:

— Յօրօնօ երացի...

— Յօրանյ շելամ, աշ-օք-րծմ!..., — թրթուն
ձայնով, մի մարդու նման պատասխանեցինք մենք:

— Շնորհափորում եմ ձեր սուրբ զատիկը, քաշեր...

— Խոնարհաբար շնորհակալ ենք, ձերդ բարձր աղ-
նվություն, — աղաղակեցինք մենք նորից:

Նա ձեռքը ճակատից վերցրեց, դրեց կողքից կախ
ընկած յերկար սուսերի կոթին, նայեց սպաներին,
ապա մեզ և ասաց:

— Ալսոր յես բախտ ունիմ ձեզ շնորհափորել և
միենույն ժամանակ իմ զննանակությունն հայտնել
ձեր անբիծ և սրտագին ծառայության համար: Թեև
տար առ ընթացքու յեղել են ղեպեր, վորոնք ինձ
սաստիկ վրդովել են, ինչպես գող իվանենկոյի խայ-

տառակ հանցանքը, բայց յես միաթարված ևմ նրանով, վոր նման գեպքեր այլևս տեղի չեն ունեցել, և հոյս ունիմ, վոր այսուհետեւ ել չեն կրկնվելու. Յես համոզված եմ, վոր դուք կշարունակեք ձեր ծառայությունը ի վասու հայրենիքի. ուսում...

— Ուսա, ուսա...—բարձրանում ու իջնում եյին մեր կրծքերը, հիմն ի վեր թնդացնելով զորանոցը։ Աւժգին արձագանքի վերջին ալիքները խլածայն վոլորումներով նոր եյին նիրհել մեր ականջներում։ Ամբողջ զորանոցը՝ մի քանի հարյուր շնչավորներով, անձայն նկուղի տեսք ստացավ։ Յեկ բոլորս՝ գլուխներս թնքած գեպի սեղանը, ականջ եյինք զնում մեծ շնկց բաժակի մեջ վոստոստող ողիի քըլթքըլթոցին։

Կապիտանը ձեռքը սուսերի կոթին դրած, պատրաստվում եր ֆելդֆերելի ձեռքից իրեն մատուցվող ողիի բաժակն ընդունել։ Հանկարծ նաև բերանը կիսաբաց, հետաքրքիր հայացքով նայեց գեպի վերջին շարքերը։ Հանդարտ ծփացող ալիքների նման՝ մի շշուկ անցավ մեր շարքերով։ Նայեցինք այն կողմը, և բոլորս ապշեցինք։

Վոլորածն մի կեղտու թուղթ դողացող ձախ մատների մեջ սեղմած, շարքերի առաջով անցավ կմախքանման «Դյաղկա» Ստեփանուց, կրունկները անհայտաչափ տըխկտիսկոցով հատակին խփելով, և արագ քայլերով մոտեցավ կապիտանին։ Կապիտանը ինձնից գեպի աջ հինգ քայլ հեռավորության վրա եր, և յես տեսա, թե ինչպես այլագունված «Ստեփան Դյաղկան» կուրծքը դուրս ձգելով ցցվեց նրա առաջ, աջ ձեռքը դրեց ճակատին, սկզբում դողացող բայց հետո հաստատուն ձայնով ու բարձր ասաց.

— Ձերդ բարձր ազնվություն, մի շատ կարևոր խնդիր ունիմ։

Կապիտանի թերթերունքները արագությամբ հեռացան միմյանցից, աչքերի գնդակները դուրս թռչելու չափի բարձրացան, բիբերը փայլեցին արևի ճառագայթն հանկարծ վրան ընկած սաթի նման։ Նա հայացքը մեղուղեց վայրկենապես, և ապա կարծես զարմանքը զըսպեկով, աչքերը նորից սեենեց նրա վրա ու հեգնական յեղանակով հարցրեց։

— Նո՞ւ... ինչ կրամայես, «Դյաղկա» Ստեփանու։ — Ու հեգնական շեշտը «Դյաղկա» բառի վրա եր։

Այդ ժամանակ «Ստեփան Դյաղկայի» ողի մեջ կամար կալված արմունկը դադարեց դողալոց, նրա յերեսին մի թեթև կարմրություն յեկալ։ Նա թուքը կուտավեց, ծնկներն ամուր սեղմեց միմյանց և բարկություն արտահայտող՝ բռնազբոսիկ ու զինվորին անվայել հանդուզն ձայնով վորոտաց։

— Ձերդ բարձր ազնվություն! Մեծ, շատ մեծ, մահացու մեղք եմ գործել։ Յես մահվան արժանի յեմ... Խիզնաինձ հանգիս չի տալիս. մեղքի մեջ եմ գցել ձեզ եր ընկերներիս ել... Սկարյաղի փողերից իվանենկոն տեղեկություն չունի, յես եմ գնացել վերցրել, կեղծ ստորագրությունը յես եմ տվել։

— Ի՞... ի՞... նչ, ի՞... ինչ... պե՞... ես..., — հագիմ կարողացավ արտասանել կապիտանը, ապուշ կտրած։

Մենք գլուխներս տնկեցինք, իրաններս դեպի առաջ ծոեցինք ե, կուրծքներս կացնես մի անյերնոյթ գերանի զեմ. տված, աչքներս չոեցինք. «Դյաղկա» Ստեփանի շրթունքներին։

Նա հազար և, կարծես մի ահազին բեռ ուսերից վայր գլորելով, շնչեց ուժգնությամբ, ապա սկսեց կանոնավոր ու հաստատուն բառերով խոսել, ինչպես խոսում եր ֆելդֆերելը՝ զեկուցում տալիս.

— Ձերդ բարձր ազնվություն, ամբողջ յերկու ամիս չարչարփում եյի, վորապեսզի կարողանամ ձեռքս Սկարյադի ձեռքին նմանեցնել: Փողերի մի մասը ողու տվի, իսկ 18 ուրբին պահեցի, վոր կնոջս ուղարկեմ, վոր վաշխառու Սիրողովի պարտքը տա ու խլած ձին յետ բերի, բայց չկարողացա ուղարկել: Իվանենկոյի աքսորից հետո ձեռքս չըսնեց այդ անել: Ասեցի՝ ավելի լավ ե ձին ել կորչի, ՚Խաշան ել տունն ել յես ել, քան թե նա ենտեղ տանջվի իմ տեղակի: Յես եմ գողացել, աստված ե վկա, յես եմ գողացել Ահա այն թղթերի մի մասը — ինչ վոր կարողացել եմ գտնել — վորի վրա յես սովորում եյի ձեռքս նմանեցնել Սկարյադի ձեռքին. Իվանենկոյի տեսրակի մեջ իմ թղթերից ե սխալմամբ ընկել, նա չեր կարող այդ ձեռվ գրել: Իվանենկոյն գիտեր, վոր յես եմ գողացել իր խոստովանությունից դեռ մի որ առաջ պատահմամբ իմացավ և հորդորում եր ինձ՝ տանել փողերը Սկարյադին տալ, բայց յես չլսեցի նրան, իր խոստովանությունից հետո նա ինձ ծածուկ ասաց, վոր վոչ վոքի չհայտնեմ յեղելությունը. — Վորովհետեւ, — ասում եր, — դու մեղք ես, սկզբից չես խոստովանել, պատիժդ շատ մեծ կիխի, տաժանակիր աշխատանքի կուղարկեն, կին ունիս, յերեխաներ ունիս — մեղք են. տունդ պարտքի մեջ խրված՝ կկործանվի, թե վոր քեզ փորձանք պատահի: — Բայց յերդվիր, վոր այլս այդպիսի բան չես անիլ — Յես յերդվեցի:

— Ի՞նձ պատժեցեք, յես հանցավոր եմ, ազատեցեք իվանենկոյին, նա մեծ բան արավ, նա ուզեց փրկել մի խեղճ ընտանիք կործանումից: Նա գիտեր, վոր յեթե մեր ձին տանեն, տանեցիք սոված կմնան, նա գիտեր, վոր յեթե ինձ աքսորին, տունը անտեր կմնա... Նա ուրիշի հանցանքն իր վրա առավ, տեսնելով ընկերների դուք տանջանքը, ու վախենալով, վոր հետո կրացվի, և ինձ սաստիկ կպատժեն: Յես եմ արել, աստված ե վկա, յես եմ ա... ա... ըել...»:

Այստեղ նրա ձայնը խզվեց, և նա խզված ձայնով ասաց, ձախ ձեռքը մեկնելով կապիտանին.

— Ահա փողերը, վոր լրացրել եմ կողիկներս և սպիտակեղենս ծախելով...

Կապիտանի կոպերը խփվեցին ու բացվեցին. Նրա աչքերում վայլող զարմանքը փոխվեց զայրույթի. և նրա ուրախ ու բացառիկ մեղմություն ստացած ձայնը նորից փոխվեց ցասկոտ վորոտի.

— Կողուտ շուն, — գոռաց նա կատաղորեն. — մուրառառ անասուն, վոր հարամեցիր զատիկը... ուզում եյիր կնկանդ փող ուղարկես, վոր շնություն չանի, քեզ հավատարիմ մնա: Ա՛յ դու իշի հետոյք... յես քեզ են որը զցեմ, վոր կնիկդ վորձ շանը քեզանից գերազանե:

Ապա դառնալով որապահին, ասաց, մատով ցույց տալով անտարբեր Շյաղկա Ստեփանին:

— Ավելիր, այստեղից այդ աղբակույտը:

Որապահը ձեռը ճակատին դրեց, ապա շուռ յեկավ, պաշտոնական քայլվածքով մոտեցավ Շյաղկա Ստեփանին. ու մինչ նրանք դնապի դուռն եյին գնում, կապիտանը աշխատելով տոնը փոխել, վերցրեց ողութաժակն ու ասաց.

— Տղայք, իմում եմ նորին կայսերական մեծության
կենացը... ուռամ...

Եթև չկարողացա իմանալ, թե ինչ պատահեց ինձ.
միայն բգերիս վրա լճացած հեղուկի միջով տեսա
պուած կանգնած մի արհամարված կմախք, վորին ուղում
եյի փաթաթվել ու պինդ համբուրեր Հիշեցի իմ հեր-
թապահության գիշերը, «Դայդկա Ստեփանի» խոսակ-
ցությունը և զգացի այն, ինչ վոր կզգար մեկը առա-
վուածան տեսնելով շեմքի մոտ փուլած սովամահ աղ-
քատի դիմակը, վորին յերեկոյան մերժել եր ծ կոպեկ
տալու, կարծելով թե ողիի համար ե ուղում...

Ի՞նչպես խմեցինք կենացները, ի՞նչպես շրջվեցինք
դեպի աջ, և, զոյգ-զույգ մոտենալով սեղանին, ստա-
ցանք պասքեն ու ձուն. ի՞նչպես մեր գնդապետն այ-
ցելց մեզ և 25 ուռըի ընծայեց տոնի առթիվ... վո-
չինչ, վոչինչ չեմ հիշում: Աչքերիս առաջ կարծես մառա-
խուղ եր, իսկ գլխիս մեջ ինչվոր դժբանոց եր լսվում:
Ստքիս առաջ մնացել ե միայն այն վոսկրացած մար-
մափ պատկերը, վոր որապահի առաջն ընկած, վստահ
քայլերով դիմում եր դեպի գրասենյակի դռւուրի

— Խեղճ իվանենկո, իսկ մենք նրան թքողող
արինք, — ասում եյին զինվորներն զգացված: Իսկ յերբ
խոսք եր լինում «Դյադկա Ստեփանի» մասին, ասում
եյին, — ի՞նչ իմանաս մարդու հոգին... — ապա ալելաց-
նում եյին հառաչելով: — Ե՞ս... յեղբայր, ի՞նչեր, ի՞նչեր
չի անում քեռի կարիքը...

Չիմացա այնուհետև թե ինչ պատահեց, վորով-
հետև մի քանի որից հետո յես հրաժեշտ տվի զորանո-
ցին և գնացի տուն: Արդյոք նրան աքսորեցին, ար-

դյոք իվանենկոն վերադարձավ, կամ ի՞նչպես ընդու-
նեցին նրան զորանոցում: Միայն մի ժամանակ անց-
նելուց հետո, լսեցի, վոր իվանենկոն վերադարձել և և
զինվորները նրան սիրում ու գուրգուրում են: Յեվ ել
վոչվոք չեր կարծում թե նա ուղում ե:

«Դյադկա Ստեփանի» մասին ել ասացին, վոր նա
կարգապահական բատալիոնում դիմանում ե բոլոր
տանջանքներին, առողջացել ու լցվել ե: Ամեն առա-
վուու, ասում են, ընկերներին պատահելիս ժամանակ
քրարի լույս և տալիս և ձեռքերը միմյանց շինուած
միխթարում ե այդ տիրադեմ տանջվածներին: Շատ
անգամ, յերբ աքսորականները յերկար չարչարանքից
հետո, վուները փոսծ շարվում են զորանոցի պատի
տակ իրենց դժբախտ որը լալու, հանկարծ, — պատմում
են, — յերեսում ե «Դյադկա Ստեփանը», մեջքը հենում
ե պատին, վոտները տարածում ե գետնին և, թեթև
խփելով ուռած ու կարմրած վոտներին, ասում ե.

— Այդպես, դիմացեք մինչև վերջը. — ապա զառնում
ե ընկերներին: և ավելացնում

— Ե՞ս, յեղբայր, դարդ մի անեք, մի հուսահատվեք,
այս ծանր որերը կանցնեն. սրանից վատթար որեր եմ
տեսել: Մենք տանջվում ենք յերեկը, իսկ յերեկվա
տանջանքից հետո՝ վորքան քաղցր ե գիշերվա յերկար
ու հանգիստ քունը: Եերեկվա տանջանքը անքուն
գիշերների տանջանքի հետ անկարելի յե համեմատել,
անկարելի...

ՔԵՌԻՆ

(Հինգորի հիշատակարանից)

I

Մեր գնդում բոլորը նրան մականունով եյին կանչում։ Հայերը ասում եյին Քեռի, իսկ ոռ սները՝ Կեռի։

Առաջին անգամ նրան տեսա Ղարաքիլիսայում, վորտեղ հավաքվել եյին նորակոչ զինվորները, յերկաթուղով ճանապարհվելու դեպի մեր ծառայության տեղը։

Նոր եր մթնում։ Ուշ աշնան խոնավ որ եր։ Յերկինքը իսկը մեր սրտերի նման եր, — գորշ ամպերով ծածկված, լուս ու տիսուր, բայց անձրև չկար։

Թեև բոլորն ել զինվոր՝ բայց տարբեր հագուստներով մի խայտարղետ ամբոխ եյին ներկայացնում։ Վումանք չուխա ունեյին և զինվորի դեղին յերկարավիդ կոշիկներ, վումանք տրեխներ եյին հագել և շինել առել ուսերին։ շատերն ել գլխներին փափախ եյին ծածկել, վուներին սևացրած, բայց ներկը տված դեղին կոշիկու հագել եյին անուսաղիր շինել։

Պետք ե ընթրեյինք ու ճանապարհվեյինք։ Բակի մեջ չորս հաստ յերկար, հաստ ու կոպիտ փայտե սեղաններ կային, վորոնց մոտ դրված յերկար նստարաններց յուրաքանչյուրի վրա շարվեցինք քսան-յերեսուն հոգի։ Բակի մի անկյունում տախտակե տանիքի տակ տեղավորված եր բաց խոհանոցը։ Մի քանի զինվորներ պղնձե կոնքերի կանթերից բռնած՝ խոհանոցից շորվա եյին կրում դեպի սեղանները։ Սպան՝ ակ-

նոցավոր ու մոայլաղեմ մի յերիտասարդ, վոր ըստ յերեռյթին դժգոհ եր իր վրա դրված պարտականությունից, յետ ու առաջ եր քայլում չորս սեղանների քառանկյունի տարածության մեջ։ Ձեռքերը յետել դրած, նա յերբեմն մոտենում եր սեղաններից մեկին կամ մյուսին և սեղանի յերկարութիւմը գնալով, տհաճությամբ աչք եր ածում ուտենիկիքին և ուտողներին։ Զինվորները փայտե ահազին դդալներով լի շորվան փոռացնելով քաշում եյին բերանները, վորի ժամանակ գլուխները վեր եյին ցնցում ու աչքերը ճոռթում։ Թեև ուտենու արագությունը կատարյալ եր, բայց սպան ելի մի քանի անգամ ասաց։

— Դե, տղերք, շուտ, զոչաղ շարժվեցեք, ժամանակ քիչ և մնում։ Ուտողներն առանց նրան նայելու շարունակում եյին իրենց գործը յեռանդով։

Հանկարծ զինվորները հրհուացին և դիմացիս շարքին նատողները գլուխները յետ դարձրին։

Յես նայեցի, նույնպես ժապացի, թեև այդ որերում ժպիտն ինձանից փախել եր իսպառ։

Մի յերիտասարդ, գլխին ահազին փափախ, վորի յերկար մազերը ծոր-ծոր ընկած եյին ճակատին, արագ մեր սեղանին եր մոտենում։ Յես չափեցի նրան մի հայացքով գլխից մինչև վոտք Շինելի աջ թեր հանել եր, իսկ մյուս թեր ուսի վրայից բերելով առել եր ձախ առամների մեջ։ Թեիր հետ միասին ատամներով բռնել եր մի մեծ ու հասա վոսկոր։ վոսկորի մեծությունից այտերի տակ, յերկու մեծ կնճիռներ եյին գոյացել, հոնքերը բարձրացել եյին ու աչքերը ճոռթել։ Յերկու ձեռքով կանթերից բռնած, կոնքը կպցը եր փորին ու վազում եր։

— Այդ ի՞նչ ես տանում, — հարցրեց սպան ժպտալով, վոր մեր սեղանի մոտ եր այդ ժամանակ:

Եերիտասարդը դլուխը թափանարեց փափախի ծուպերը ցնցելով, քրքջաց, բայց բան չկարողացավ ասել վորովհետեւ բերանի վոսկորը խանգարում եր: Նա ժոտեցավ մեր սեղանին, կոնքը բարձրացրեց, մի դինվորի գլխի վրայով թափով զրեց սեղանին, և մարմինը դեպի վեր ձգելով, կուրծքը սեղմեց դինվորի գլխին ու «չըրըմի» վոսկորը թռղեց ամանի մեջ: Շորպայի ջուրը թռավ չորս կողմը նոսողներին ապականելով:

— Ի՞նչ ես անում, վայրենի, — գուաց սպան ծիծաղելով, և իսկույն ծիծաղը զսպեց ու ցանկանում եր բարկության խոսքը ասել, բայց յերիտասարդը չթողեց նրան մինչև լարկության խոսքին հասնել ու վրա բերեց հրհուալով.

— Կանչ բլորդի (ваше благородие), բեշկեշ, բեշկեշ, վոտ, խարոշի բեշկեշ...* Յել հանկարծ աջ ձեռը պարզած դրեց փափախի ճակատին, իբրև հարգանքի նշան և անում: Սպան շուռ յեկավ, գնաց մեղանից, իսկ դինվորները շարունակում եյին հրհուար Յերիտասարդը ձեռը ճակատին բռնած, շուռ յեկավ և շինելը հագած թեռվ ցեխերի մեջ քաշ տալով, մեր սեղանի յերկարությամբ արագ-արագ գնաց ու եկավ, վրա-վրա ասելով.

— Ռազ-դվամ, ռազ-դվամ,
Խփեմ ճվամ,
ռազ-դվամ, ռազ-դվամ,
Ճեռս պաչի, դարձի լվա...:

* Բեշկեշ՝ դինվորները անվանում են անմիս վոսկորի կտորները, վորոնք կերակուրի մեջ են լինում: Այս յեն շատ հետո իմացա, յերբ զորանոցում մի քանի անդամ ճաշել եյի:

Մի քանի անդամ կըկնելով գնաց յեկավ, ապա քրտնած ու ծիծաղկոտ՝ դրալն առավ ու ընկավ ամանի վրա: Մեկ մեր ամանից եր վերցնում, մեկ մյուս ամանից, բայց ամեն անդամ գդալը մի դինվորի գլխի վրայով եր տանում, կերակուրը տանելիս արմունկը առջնի նստողի գլխին եր խփում, լիքը գդալը յետ տանելիս, կերակուրը գլխներին և ուսերին չըռչըռացնում: Զինվորները և ծիծաղում եյին և բարկանում, բայց ծիծաղը հաղթող եր:

II

Չսպասեցի դինվորական գնացքին: Մարդատարով մեկնեցի Թիֆլիս: Իրավունք եյի առել Թիֆլիսում բարեկամներիս մոտ միաւ, մինչև դինվորները կհավաքվեյին և ապա միասին ճանապարհ կընկնեյինք ծառայության տեղը: Յերեք որն անցավ մի ըռպեյի պես...

Կես գիշերին մոտ եր, յերբ կայարան գնացինք: Կայարանի շինությունից շատ հեռացանք, մի քանի ուրեմներ ցատկեցինք, մինչև կանգ առանք մեր գնացքի առջև: Նորից մտածմունքները պաշարեցին ինձ: Բարեկամներիս յերեք որվա հրաժեշտի ջերմագին հյուրասիրության քաղցր տպափորություններն անցան և նորից տիրությունը պատեց հոգիս:

Զկար ճանապարհվողի այն ուրախ հուզմունքը, վորով ամեն անդամ լցվում եյի յերկաթուղուն մոռանալիս: Առջեմիս գնացքն ել գնացքի նման չեր: Կոյը պատուհաններով մի ավերակ տուն լիներ կարծես հեռավոր մի վայրում: Իսկ յերբ կարդացի վագոնի պատին դրոշմած մեծ տառերով՝ „36 հյույսի վագոնի լուսական գործարան” (36 դինվոր կամ 8 ձի), այդտեղ մի-

այն, առաջին անգամ, զգացի կարծես այն ծանր վիճակը, վոր նվաստացնում եւ մարդու հոգին: Իրեն սպասող ամենաղաժան վիճակի մեջ ել մարդ փնտուում եղանել մի ոգտակար, սփոփիչ բան: Յեկ յես լավ իմանալով ու հազարավոր անգամներ լսելով զինվորական ծառայության դժվարությունները, միշտ մի գաղտնի ուրախություն եյի գուրգուրում իմ մեջ, թե զինվորությունը ինձ շատ ոգուտներ կտա, ու միշտ կը կնում եյի «Զկա չարիք, առանց բարիքի» առածը: Բայց այժմ, կանգնած այդ համառոտ ու աղջու գրության առջև, գլուխու խոնարել եմ կրծքիս ու գիտակցում իմ վոչչությունը: — Ուրեմն յես մի մասնիկն եմ ձիու, մի քանի ինձ նմանները մի ձի յեն... Յեկ ծանր մտածմունքներից կոկորդս խեղդված, չիմացա՝ ինչպես տախտակե շարժական սանդուղքով մտա վագոն:

Վագոնը, վորի մեջ ամեն տեսակ ապրանքներ կամ անսառւններ են լցվում, հարմարեցրած եր զինվորների համար, այսինքն աջ ու ձախ պատերի յերկարությամբ տախտակե նստարաններ նեյին կապված, իսկ առջևի և հետեւի պատերին լայն տախտակներով քնելու տեղեր շինված: Բայց ներս մտնողներն այնքան շատ եյին, վոր մի մասը հազիվ կարողացավ բարձրանալ այդ թախտերին: իսկ մյուսները շարվեցին նստարաններին, կամ ուղղակի հատակի վրա նստեցին: Յես իսկոյն զգացի, վոր վագոնի մակագրությունը սխալ եր. 8 ձին իրենց այստեղ շատ ավելի ազատ կղզայն, քան մենք, վորովհետև վոչ թե 36^ա այլ 46, գուցե և 56 հոգի յել լինեյինք այդտեղ: Յես այն բաղդավորներից եյի, վորոնք արժանացան յերկորդ հարկին, Յերկու մոմ հազիվ աղոտ լուսավորում եյին ընդարձակ վագոնը:

Վագոնը շարժվեց, գնացքը մեկնում եր. դրսի ձայները խանում եյին հետզհետե:

Մի քանի ըուպեյից ոդն արդեն ապականված եր: Շատերը, մանավանդ հատակի նստածներից, անմիջապես խոմփոց բարձրացրին: Արթուն մնացող ոռւսներն յերկու խմբով թղթախաղ սկսեցին, իսկ հայերը մի քանի խմբերի բաժանված, փսխուկով իրենց դարդերն եյին պատմում իրար: Յես փորձեցի կարդալ, բայց թրթացող մոմի աղոտ լույսի տակ բառերը ցրվում եյին, և վագոնի ցնցումներից տառերը միջատների պես խրժվելում եյին աչքերիս առաջ, ու միտքս հեռուները սլացած չեր կարողանում վորսալ նրանց: Շորերիս կապոցը որի թերիս տակ ու պարզված հենվեցի նրան, Հինգվեց հոգի հայ տղաներ, հենց առջես, շրջանաձել նստեցին և մի կեղտոտ մեծ աղլուխ փոեցին տախտակին ու պանիր, հաց, կալբաս և գինի հանեցին: Սկսեց ուրախ ընթրիքը: Սփոցի գլխին բազմած եր Դարաքիլիսայի հերոս ծանօթ յերիտասարդը, մեջքը վագոնի պատին հենած ու ժամանակով միշտ անպակաս:

— Կամաց, ստարչին կբարկանա, — ասաց սեաղեմ, քառակուսի մորուքով մի յերիտասարդ:

— Ստարշի, մստարշի յես չեմ իմանում, — պատասխանեց բերանը ծուելով սփոցի վերև նստած յերիտասարդը, — ինձ Քեռի կասեն, խմենք ու քեֆ անենք... Ե՞ֆ, Ե՞ֆ, Ե՞ֆ կախեթու գինի ա... Քեռին քսան տարեկան ա դարձել, ես մեռնի համը չի տեսել, որհնվի սալդաթ հնարողը:

— Ե՞տ ա, ելի՛, երնեկ քո տիպը Չը, բա իսկի դարդ չունեմ, — ասաց որորվելով քառակուսի մորուքով յերիտասարդը:

— Դարդս վմբն ա, — ասաց Քեռին շիշը բերանին տնկած. — այ դարդ՝ կը կը կը, կը, այ ստարշի՝ կը, կը կը...

— Եհ, ասում ես, ամա կըտեսնես ինչ բան ա սալդաթութենը. ռողգով վոր ջանդ կդադեն, նոր կկլկացնես...

— Դաղեն, — քմծիծաղ տվեց Քեռին բուռնցքը աջ ու ձախ քերով շրթունքներին: — Քեռին դաշլից չի վախի, ավելացրեց ու դատարկ շիշը դրխկացրեց տախտակին և խռպոտ ու անդուրեկան ձայնով մի յեղանակ զնդնաց:

— Ի՞նչ ես եղտեղ դալմաղալ գցել, բուսուրման, — ցածից ձայն տվեց մեղ ուղեկցող յեֆրեյտորը, վոր թուղթ եր խաղում:

— Ոփ, անիծած սատանա, — մրմուց մի քնաթաթախ սուս, — Կովկասի վայրենին չի թողնի թե քնենք...

Բայց Քեռին վոչ լսում եր, վոչ հասկանում, և հետպհետե տաքանարով, ձայնը բարձրացնում եր:

Ռւնտեր-ոփիցերը, վոր մեր վագոնի ավագն եր, վեր կացավ տեղից և ձայն տվեց.

— Եյ, ի՞նչ եք աղմկում այդտեղ, թողեք հանդարտ քնենք, Ելի...

— Վայ, ստարշի ջան, — գոռաց Քեռին, ձեռքը հենեց տախտակին և փորձում եր վեր կենալ, հանկարծ դրըմի, գլուխը խփեց վագոնի առաստաղին: — Ի՞Փ, — ասաց նա և հրհուալով ցած թռավ քնած զինվորների վրա:

Մի անասելի աղմուկ բարձրացավ վագոնում: Մեկի գլխին եր դիպել Քեռին, մյուսի վոտն եր կոխ տվել, յերրորդի ձեռը, փորը...: Ամենքը քնաթաթախ վեր եյին թռել ու չիմանալով ժւմ, բուռնցքահարում ու հայնում եյին: Հայ լեռների կոպիս ու բարձր քուֆրները խառնվել եյին ոռոսական նուրբ ու բաղմատե-

սակ հայնոյանքներին: Ամեն մեկը ջոկ լեզվով ու բարբառով եր զոռում և այդ խառնաշփոթ նղովքի ու հայնոյանքի մեջ յես պատկերացրի Բաքելոնը: Մյուս քնածներն ել զարթեցին և ժխորը սանտկացավ: Վագոնը դխկդխկալով որորվում եր ու նման եր մի խորտակվող նավի, վորի վրայի բաղմալեզու ճանապարհորդները որհասական անհեծքով ու հայնոյանքներով աշխատում են մյուսներին ծովը գցել, իրենց ազատելու համար: Իրաք քաշքում ու հարվածում են, իսկ Քեռին թռել և յերկար նստարանի վրա, վոտները ճողած կանգնել վափախը ձեռն ե առել, կուզ ու պարզ անելով վափախը թափահարում ե վոտների արանքում ու հրհուում:

Ավագը շիփոթվել եր, Վերջապես դտավ հանցավորին և լուրջ դեմք ընդունելով, գոնաց.

— Հանգիստ կաց, թե չե հաջորդ կայարննում կը-գանգատվեմ սպային և քեղ դուրս կշպրսեմ:

Զիմացա՝ հասկացմավ Քեռին նրա ասանձը թե վոչ, բայց ծիծաղը չընդհատեց. նստարանից ցած թռավ, բռնց ավագի թռնից, ձեռով շիփեց ունը և ասաց.

— Գասպարդին ջան, գասպարին, չեմ սերչմի, իոի, իոի վինո պի — (իրը՝ պարոն ջան, պարոն, ինչո՞ւ յես բարկանում, արի, արի գինի խմենք):

Ավագը թափահարեց թռել նրա ձեռից ազատվելու համար, բայց հետեւ նրան ու զինուն նայելով: բարձրացավ վերն: Վոտները կախ գցած նստեց ու բարձրից ձայն տվեց ավելի բարկացած.

— Են, ի՞նչ եք սագերփ պես կրկոոց բարձրացրել, քնեք, թե չե յես ձեզ ցոյց կտամ: Աղմուկը մեղմացավ: Քեռին պագի հետ քեփի. նստան:

Յես նայում եյի Նրա վայրենի, կարմիր դեմքին, անհոգ վառվող աչքերին, նորածիլ շեկ բեխերին ու նախանձում նրան։ Անիծում եյի ուսումն հնարողին ու նզովում ուսումը, վորը, թվում եր, թե ամեն մի բառի հետ մի կաթ թույն և բերում մեր սրտին ու խորշակի պես թառամեցնում մեր հոգին ինչո՞ւ չի՞նի յես ել այդպես անկիրթ, յես ել չճանաչեյի կյանքի դառնությունները, չսոսկայի նրա դժվարությունների հանդեպ։ Ասում են՝ կախաղանի դիմեն ավելի տանջալից և, քան կախվելը, վորովիետե մահապարտը գնալիս և մտածում և վո՞չ կախվելին։ և վայ նրան, ով շատ և մտածում...։ Յես ել լսել եմ զինվորության տաժանքների մասին, Թերին ել. բայց նա գնում և ուրախ ու անհոգ, իսկ յես թախծու ու սրտամեռ։ Գուցե նա զնորհիվ իր տգիտության չի կարողանում պատկերացնել այդ տաժանքները, վորոնք իմ առաջ ցցվում են կենդանի դեմքերով։ Գուցե յես ել նրա պես ուրախ լինեյի, յեթե իմ հոգին ել նրա հոգու պես վայրենի կուսության մեջ մնար։ Ու յիս որհնում եյի նրա տգետ վայրենությունը, ու չգիտեյի թե նրա հոգու խորքերում ինչեր կան ու ի՞նչ զգացմունքներ են խոսում նրա սրտում։ Այդ որը յես նրան և՝ արհամարում եյի, և խղճում, բայց և նախանձում։

Նա ոռւսերեն չգիտեր, միայն կարողանում եր հասկացնել ավագին, թե պիտի խմել, կամ թե նրա կենացն և խմում, Բայց նրա լեզուն չեր կարող հանդարտ մնալ, ու ճշանակի պես ճըթճըթում եր։

Մտքերս ցրվում եյին. յես կենարոնացա, յերք նրա ընկերներից մեկը հարցընեց։

— Քեռի, բա կնիկդ թնչ արիր. չես կարուտել։

— Կնիկը ս, հրհուաց Քեռին, կնիկս տվի յեղով*, Զորս տարի ա, ելի, մի որվա պես կանցնի, ու կըդառնամ կնկաս կուշտը։

III

Մինչև ծառայության տեղը հասնելը, Քեռին բոլորի ուշադրությունն արդեն գրավել եր, Մինչև անգամ գնդապետի ուշադրությունից չխուսափեց նա, յերք հաջորդ որը հավաքվեցինք գնդի դիվանատան բակը, վորտեղ մեզ պիտի բաժանեյին և ցրվեյին վաշտերը (ոստանները), Բոլորն մի շարքի կանգնեցինք, բավականին սպասեցինք։

Վերջապես յերկաց կարմրերես, կարմունյա, հաստամարմին գնդապեալ և մոտեցավ շարքին։

— Յձօրօօ, բրածու, — գոռաց նա դեռ հեռվից։

Իսկ մենք չգիտենք թե ինչպես պիտի ընդունենք բարել. ամեն մեկը քթի տակ մի կիսատ բառ, մի հնյուն մրմուց կամ մի բացականչություն արծակեց։

Վաշտերից հավաքված ֆելդֆերեների և ունտերութիցերների խումբը միայն կանոնավոր պատասխանեց։

— Յձրանյա желаем ваш... сон... род...։

Ելի Քեռին եր, վոր մեր յերեսը պարզ արավ այստեղ. նայելով ֆելդֆերեների խմբին, նրանց հետ բերանը բաց ու խուփ արավ և, վերջն ել ուրախ ու բարձր ձայնով ավելացրեց մի քիչ քաշվելով։

* Հայ գյուղացիներից վումանք ամառները արոտատեղ են ուղարկում իրենց կովերը կամ վոչխարները — տալիս են յեղով, զընխալորապես քրդերին. պահողները կեցակում, ինամում են անասունին. ոգտվում նրանից, տիրոջը տալով ստացած յուղի մի մասը, Քեռին այս և ակնարկում, միաժամանակ հեծնելով ունեսը պյուղացիներին, վորոնները կով ու վոչխար ունին յուղով տալու։

— Հզրաստի, վաշի բլըրոդի...

Դնդապետը մի թթու հայցք նետեց, բայց յերեխ հիշելով վոր գեռ կարդ ու կանոնին անսովոր մարդկանց հետ գործ ունի, ժպտուն դեմք ընդունեց ու մի քանի քայլ առաջացավ դեպի Քեռին:

— Կորտեղացի յես, — հարցրեց նա Քեռուն, ու սկըսեց մարդ փնտրողի պես դես ու դեն նայել, վորովհետև Քեռին բերանը բաց ու խուփ եր անում, բայց լուռ եր:

Մի ֆելդիբել մոտեցավ ինձ և հրավիրեց գնդապետի մոտ:

— Ռուսերեն դիտե՞ս, — հարցրեց գնդապետը, շեշտակի նայելով ինձ,

— Այն, դիտեմ:

— Հարցրու սրան՝ վնրտեղացի յե:

— Յերեանի նահանգիցն ե, մեր կողմերից, ձերդ... ձերդ... — ասացի յես, չկարողանալով վերջացնել վորովհետև այդ որերում յես դեռ չգիտեյի, թե սպաներից վնրին ինչ տիտղոս պիտի տալ:

— Իրան հարցրու, — պնդեց գնդապետը:

Յես թեքվեցի Քեռու կողմն ու հարցրի.

— Քեռի, սլալկովսիկը հարցնում ե, վնրտեղացի յես:

— Կորտեղացի... — ասաց Քեռին դարմացած, — մեր գեղացի...

Շարքում կանգնած մի քանի հայեր, վորոնք լսում եյին այս խոսակցությունը, ծիծաղեցին: Յես ել հազիվ զսպեցի ծիծաղս:

— Վնրտեղացի յես, ե, վնրտեղացի. ձեր գյուղի անունն ի՞նչ ե:

— Քոսաքենդ, — սպատասխանեց Քեռին:

Յես բացատրեցի գնդապետին:

— Ամուսնացած ե թե վոչ:

Յես թեև նախորդ յերեկոյից գիտեյի, վոր Քեռին ամուսնացած ե, բայց ելի հարցըի իրեն:

— Հա, ամուսնացած եմ, կնիկս յեղով տվի, յեկասալգաթ:

Դնդապետի ճարպոտ աչքերն ինձ են նայում սպասողական ձևով, ինձնից պատասխան ստանալու, իսկ յես մտքի միջ եմ խորասուզված, չգիտեմ ի՞նչպես թարգմանեմ և ի՞նչպես բացատրեմ նրան, թե Քեռին իր «կնիկը յեղով ե տվել»:

Մի կերպ հասկացը գնդապետին, վոր Քեռին կնիկը թողել ե գյուղում և ավելացը թե չի կարոտում նրան, վորովհետև՝ «չորս տարին ի՞նչ ե վոր, ծառայելու համար, մի որվա պես կանցնի»:

— МОЛОДЧИНА (ապրես), — ասաց գնդապետը և ձեռքի կալիճով նրա կրծքին, շինելի վրա մի մեծ միավոր գրեց:

— Զոմբախե մեղալ կպցրեց դոշիս, — բերանն արշենաչափ բացած հրանում և Քեռին ու մեզ նայում:

Իսկ գնդապետը հեռացել ե նրանից և շարքի ծայրից շինելների կրծքին զանազան թվանշաններ դնելով, անցնում ե: Յես հետո իմացա, վոր յուրաքանչյուր թվանշան ցոյց ե տալիս, թե ով վոր վաշտում պիտի ծառայի, և յերբ իմ կրծքին գրեց՝ 1, ուրախացա կարծես, վոր Քեռու հետ միասին միեննույն վաշտում ենք ծառայելու:

Թուխ գեմքով և սրճագույն մորուքով մի հաստիրան ֆելդիբել գլուխը ցցած ու աչքերը կկոցելով շարքերի յետերից մոտեցավ Քեռուն: Յես հետո իմացա, վոր նա

առաջին վաշտի ֆելդֆերելն երև և մոտեցավ իր ստորագրյալի չարաճճի յեռանդը չափավորելու:

Դեռ գնդապետը չեր մոտեցել ինձ, յերբ մի կարճահասակ, քոնած* ֆելդֆերել առաջս կանգնելով ասաց:

— Խնդրում եմ, յերբ գնդապետը կմոտենա ձեզ, խնդրեցեք, վոր ձեզ չորրորդ վաշտը նշանակի: Այստեղ ձեզ համար շատ լավ կլինի, ամեն հարմարություն կտամ, դիվանատանը կմնաք, այնաեղ կըքնեք և գլխավորապես գրավոր զբաղմունք կունենաք: Յես այնքան տարված եյի Թեռու խոսակցությամբ, վոր ուշադրություն չդարձրի այս լուրջ առաջարկի վրա և հետո, ամբողջ ծառայության ընթացքում, զղջում եյի:

Իսկ այժմ, Քեռու հետեւը կանգնած ֆելդֆերելին տեսնելով, վոր աչքերով ուզում եր կլանել խեղճին, հենց այդտեղ, առաջին անդամ հասկացա իմ սխալը, բայց ուղղելն ուշ եր:

Հինգ խմբի բաժանված, ընկանք մեր ֆելդֆերելների յետեւը և ամեն մի խումբ գնաց իր վաշտը:

— Մնաք բարեկ, տղերք, — յետ նայելով հեռացող ընկերներին, ասաց Թեռին ու ձախ ձեռով աղդրի մոտից ծածուկ մի չանչ ուղարկեց ֆելդֆերելին:

Վաշտում մեղ դիմավորեց վաշտի ավագ սպան, մեկ-մեկ խոսեց մեղ հետ և բաժանեց վզվոդների: Այստեղ ել յեկան մեղ մոտ ունտեր-ոֆիցիերները և յեֆրեյտորները:

Ամեն տեղ, բոլորի հետ խոսելիս Թեռին մի դարմանալի համարձակություն եր ցույց տալիս:

Բայց նա իր կատարյալ շնորհը ցույց տվեց ծաղիկ կտրելու ժամանակ: Այդ որը բոլոր նորեկներին

* չեզու, չոփուր:

հավաքեցին գնդի հիվանդանոցի ընդարձակ սրահը: Մերկացրին, մեկ-մեկ կշռեցին. ապա բժիշկը մոտեցավ յուրաքանչյուրին, իր յերկար, սպիտակ ու բարակ մատներով աչքերը բացեց, նայեց, թուշը կպցրեց կուրծքերին, ականջ դրեց. հետո ինքն ու յերկու ֆելդշեր սկսեցին ծաղիկ կտրել:

Ամոթից գետին եյինք մտնում տկլոր կանգնած բժիշկի առջն. իսկ Թեռու քեֆն յեկել՝ եւ Բարձրացել և Թեռին կշեռքի թաթի վրա, ձեռքերը յերկու կողմից կանթել և ականջներին, հաղթական դիրքով մեզ և նայում հոնքերը բարձրացրած. ապա բերանը ծռում ե, և հոնքերը կիտած ու խորասույզ դեմք ընդունած նայում և կշռաչափին, իմանալու համար, թե վորքան և կշռում:

— Եսենց ել կշեռք կլինի, մրմում եր նա, — սատանի թաթ ա, բան չեմ հասկանում:

Ապա թները տարածեց, թափահարեց և ծնկները ծալած՝ թափ առավ ու կշեռքից թուավ հատակին, ինչպես հմուտ լողորդը թմբից գետին և նետվում: Յեկ թները աջ ու ձախ շարժելով, իրանը կոտրատելով, վաղում և հատակի վրա, կարծես լող և տալիս. իսկ վերակացուն սաստում և նրան աչքերով, ունքերով, ձեռքերով, գլխով...

Թեռին կանգնեց բժշկի առաջ ու կուրծքը դուրս ցցեց: Բժիշկը մատները տարավ, վոր նրա աչքերը բանա, իսկ նա գլուխը առաջ և բերել ու աչքերը ճոռթել, ինչպես յերեխաներն անում են աղքատին ծաղրելիս. լեզվի ծայրն ել յերեկում ե կիսաբաց բերանից,

— Հիվանդ հո չՅա, — հարցրեց բժիշկը. մատը աըխկտիսկացնելով նրա կրծքին ու կողերին:

— Զե, աղա, դու սադ ընսես. ըսկի տեղ չի ցավում:
— Փառք ասածու, — մրմնջաց բժիշկը: Յես իսկոյն հասկացաց բժշկի ներովամիտ ժամանում ու գովարանական մաղթանքը, վորովինեալ մինչև Քեռուն հերթ հպանելը, հիսուն հոգուց ամեն մեկը մի հիվանդություն եր ասում բժշկին. և յուրաքանչյուրն այնպես եր նկարագրում իր սրտի ծակոցներն ու կրծքի ցալերը, վոր յեթե հավատայինք, չորս որից հետո մահ եր սպասում բոլորին:

— Դե հազիր, հազիր շորերդ, — մատների ծայրով յերկու անգամ ճըլըթցրեց Քեռու մեջքին բժիշկը և ավելացրեց, — ապրես, դոչադ տղա, հերիք ե, խելոք կաց...

IV

Սկսվեցին մեր տաժանքի որերը: Զինվորության մեջ ամենաղետվարին շրջանը առաջին հինգ ամիսն եր, յերբ նորեկներին սովորեցնում եյին զինվորական արգեստը: Տաժանելի յե մանավանդ լեզու չիմացողների համար: Զանազան դավառներից ու յերկրներից, տարբեր սովորություններով ու լեզուներով մարդիկ, կարգ ու կանոնի անվարժ, խմբում են միասին դաստիարակվելու, կարգ ու կանոնի լնտելանալու և միապարակվելու, կարգ ու կազմելու համար: Մրանց խառնելով, դադ մի բանակ կազմելու, կարգ ու կազմելու համար: այս խմբերը բաժանում են մի քանի մանր խմբերի: այս խմբերը հանձնվում են զոկ զոկ ռուսուցիչներին, վորոնք սովորեցնում են զինվորական արվեստը:

Եերկու կամ յերեք տարի ծառայած զինվորներ են դրանք, վոր իրենց տոկունության և հմուտ ծառայության համար արժանանում են նորեկներին կըրթելու պատվին: Զինվորների այդ առաջին ռուսուցիչները:

Ները, ուրիշ վոչ մի բան սովորելու կարուտ չլինով, մասնագետներ են իրենց արհեստին և կանոնագրքի սեղմ հոդվածները ջուր են արել ու կըկնել են տալիս երենց աշակերտ ստորադրյաներին:

Զինվորներին կառավարելու համար, նրանց զիսցիպինայի յենթարկելու, միասին շարժվելու և գործելու համար վաշտը բաժանված և չորս վզվողի, վորոնցից յուրաքանչյուրին ավագ ե կարգվում մի ունտերովիցներ: Յուրաքանչյուր վզվողը յերկու բաժանմունքունի, վոր կառավարում են յեֆրեյտորները: Հենց այս յեֆրեյտորներն են, վորոնք և հանդիսանում են զինվորների առաջին ռուսուցիչները:

Եես առաջին վզվողի առաջին բաժանմունքում եյի: Մեր բաժանմունքի ռուսուցիչը յեֆրեյտոր Զվերնն եր:

Եերը այժմ հիշում եմ իմ այդ անմիջական իշխանավորի դեմքը, ծիծաղս չեմ կարող դսպել: Սակայն նրա դեմքը վոչինչ չուներ ծիծաղելի: Սովորական ռուսի դեմք եր՝ սպիտակ մորթով ու շեկ մազերով, աչքերը կապուտ, ունքերը նոսր, յերեսն ածիլած:

Բայց յերը առավոտը վաղ, մարմնամարզությունից հետո մենք շարվում եյինք թախտի յեղին և նա վոտը վոտին զրած բաղմում եր տապուրետին մեր դիմաց, մի այնպիսի դեմք եր ընդունում, վորի նման դեմք կարող եյին ունենալ, ինչպես յես յերեսակայում եյի, չինական բոլդիխանը կամ յեզիլտական փարավոնը գահի վրա, իրենց ստրուկների դիմաց: Նույնիսկ ֆելդֆերելլ թախտերի միջանցքներում ճեմելիս, աչքի տակով նրան եր նայում ու ժապում: Մի ձեռքը ծնկանը հնակազմ կանոնագրքի վրա դրած, մյուս ձեռքով բարակ ու յերկար բեկերը վորորում եր ու թշերն ուղղը-

նում, ապա կոպերը ցած թողած նայում եր իր բեխերի վոլորտն ծայրերին և հարցնում մեղանից մեկն ու մեկին, մեր ամենորյա դասը.

— Ով ե մեր թագավորը:

— Նորին... նորին... — կմկմում եր զինվորներից մեկը, — կայսերական մեծություն Նիկոլայ յերկրորդը, պարոն յեֆրեյտ...

— Ով ե թագուհին:

— Նորին կայսերական մեծություն...

Ցեղ այսպես իրար յետնից՝ սանդուխք սանդուխք իջներվ հարցերը շարում եր նա.

— Ով ե թագավորի մայրը, թագավորի զավակները, զինվորական մինիստրը, կառավարչապետը, կորպուսի հրամանատարը, դիվիզիայի պետը, բրիգադի պետը, գնդի պետը, բատալյոնի պետը, վաշտապետը, կիսավաշտի պետը, ֆելդֆերելը, վզվոզի ավագը, քաֆանմունքի ավագը... բոլորն իրենց տիտղոսներով, անունով, հայրանունով ու ազգանունով:

Ապա բոլորի պատասխանն ստանալուց հետո, դժվար լուծելի հանելուկ առաջարկողի չարաճճի խորամանկութամբ ավելացնում եր.

— Ով ե ձեր ուսուցիչը:

— Հրամանքդ եք, պարոն յեֆրեյտոր, պատասխանում եր հարցաքննողը, նա նայում եր ցած, ինչպես նոր կոշիկ հագնող յերեխան ուրիշի հանդիպելիս, իր վոտներին ե նայում: Այդ ժամանակ եր ահա, վոր նրա դեմքը մի զվարճալի բան եր պարունակում իր մեջ.

Նա դեմքով ու բնավորությամբ ընդհանրապես բարի եր, բայց զինվորական դիսցիպլինան, նրա ասելով, պահանջում եր, վոր մեզ հետ խիստ վազվի, յերք

մեկին պատժում եր, մի լավ հայնոյանք եր տալիս և ասում եր:

— Անխիղճ, չես ամաչում, ստիպում ես ինձ ռեխիդ ջարդելու...

Բայց բոլոր մեր զբաղմունքներից ամենաղեկարն ու տաժանելին այցն եր (СМОТР): Առաջին այցին յետ հետաքրքրությամբ եյի նայում և կարծիմ բոլոր ընկերներն ել նույն զգացմունքով եյին վարակված: Յերկրորդից հետո արգեն, այդ զբաղմունքը դարձավ ինձ համար ձանձրալի, իսկ մյուսների համար նաև դժվարին ու ծանր:

Այցը ինձ համար անցնում եր շատ թեթև և ուսուցիչս չեր ել նայում ինձ, վորովիետու դրա նպատակը մաքրության պահպանումն եր, իսկ յես մուսների նման մի առանձին սեր չունեյի գեղարի կեղտն ու անմաքրությունը, ընդհակառակը ուղղակի ապշում եյի այն կեղտասիրության վրա, վոր ցույց եյին տալիս նորեկ զինվորները: Կեղտի բնից պիտի գուրս յեկած լինեյին դրանք, վոր չնայելով յեֆրեյտորի այնքան յեռանդին, ելի կարողանում եյին ծածուկ իրենց անմաքուր պահել:

Առավոտը ժամը չորսին չոր մազե վերմակը վըրաներից քաշելով կամ վոտներս խտղտացնելով՝ որպահները գոռում են:

— Вставай, вставай, вставай... (վեր կաց):

Մենք քնաթաթախ նստում ենք, շփոթված կանգնում, շտալ-շտալ կոշիկները վոտներս քաշում և մի քանի բոպեյում հագնված, պատրաստ վազում ենք լվացվելու ընդհանուր լվացարանից: Դեռ չսրբված չորս կողմից լսում ենք.

— Շուտով տղայք, պատրաստվեցեք այցին
Վազում ենք ու շարվում բաժանմունք-բաժան-
մունք դորանոցում:

Գալիս եր մեր ուսուցիչը փոքրիկ լամպը ձեռին և
աջից սկսում մեկ-մեկ նայել մեզ:

Ամենից գժբախտը Ստեղծնկոն ե այդ ժամին:

Խեղճի վոտի փաթթանները մաշված են ու կեղտոտ,
շապիկ չունի վոր փոխի, յերեկոյան լվացել ե ու ծածուկ
փոել բարձի տակ, թեև այդ սաստիկ արգելված ե, — բայց
մինչև լույս չի չոբացել, և այժմ նա շապիկը թաց
թաց հագած այցի յե կանգնել:

— Այ դու Չորի, ականջներդ յերկարացը ել ես եշի
նման ու խելքդ թողել ձեր ախոռումը: Մերդ Ռուսաս-
տանի համար զոչաղ զավակ ե ծնել... Այ ժանտախտ
ընկներ ճերդ ու քեզ լույս աշխարհ չըերեր: Ես ինչ ե
փողկապիդ (գալստուկ) կեղտը... թուհ, վրան միջատ
ե... անխիղճ, անսամոթ, — ասաց ուսուցիչը զննելով
փողկապը լույսի տակ և լամպը տակով մի զինվորի,
սկսեց Ստեղծնկոյի ականջների տակերը նայել:

Քեռին, վոր առաջին որը այդ պատկերի դիմաց հըր-
հոռում եր, յերկը որը ծիծաղում, արդեն սովորել
եր ծիծաղը զապել. այս անգամ ժպտում ե, աչքերի
շուրջը կնճոռտում և ձեռքը տանում բերանին, վոր
չփրթկացնի:

— Զշարժվել, — գոռում ե ուսուցիչը բեկի տակից
նրան նայելով. — հերթը քեզ կհասնի, կովկասյան եշ-
սպասիր:

Իսկ Քեռին գիտե իր բանը, վստահ իր մաքրությանը:
Թեև նա ծոյլ ու թմրած չի, բայց դե ամեն որ ինչի՞
շոր ու փաթթան լվանա. պարզերես դուրս գալու

հնարը գիտե, — խորամանկ Կորսունից ե սովորել թե
ինչպիս պիտի այցի կանգնել: Ինչպիս Կորսունը, սա
ել ամեն բանից յերկու ձեռք ունի: Վոտից վլուխ
մաքուր հագնված այցի յե կանգնում, բայց հենց վոր
այցը վերջանում ե, նա մոտենում ե սնդուկին, զգու-
շությամբ հանում և վոտնամանները, վոխում վոտի
փաթթանները, ասլա վոխում ե փողկապը, շատ անգամ
շապիկը, և կեղտոտնները հագնում: Խոկ գիշերները փո-
խում ե բարձի յերեսը. մի կեխտուու լաթի կտորով ել
յերեսն ե սրբում, վոր սրբիչը չկեղտոտվի և առա-
վոտյան բոլորովին մաքուր սրբիչը թեին գցած կան-
գնում ե այցի:

Յեղբեյտորը մոտեցավ Քեռին. — Ի՞նչ ես ոեխդ բաց
արել, կովկասյան եշակ:

Քեռին մի քիչ վախեցած, բաց ժպիտն ելի յերեսին
փորձում ե արգարանար:

— Գասպարին ջան, գասպարին...

— Հոփր, աննամուս, ի՞նչ ես պառավի նմամ փընփն-
թում:

Քեռին դեմքը ծրմում ե, խղճալի դեմք ընդունում
ու մարմնի ծանրությունը քցում ե աջ վոտքի վրա:

— Ուղիղ կանգնիր, — գոռում ե յեղբեյտորը կրակ
կտրած ու սոլառնալից դեմք ընդունած. — ուղիղ, ցցվեր
փայտի պես, ի՞նչ ես պտտվում քամու ջաղացի նման,
անսփաթ կապիկ...

Քեռին քարանում ե ու աչքերը զցում նրա յերեսին:

— Ես՝ ի՞նչ ե սրբիչդ. ի՞նձ խաբում ես հա... — ասում ե
և բոլորովին չգործածված սրբիչը նրա ձեռից առնում
ու յերկուտակ արած՝ յերեսին հարվածում: Քեռին
աչքերը կկոցում ե և բաց ու խուփ անում:

— Ի՞նչ ես մկան աչք շինում, հիմար անսասուն, անշարժ կանգնիր, — գոռում ե նորից յեֆրեյտորը:

— Ապա գալստուկդ տուր տեսնեմ: Քեռին մունդիրի կոճակներն արձակում ե և փողկապը պարանոցից առնելով տալիս ե նրան:

— Ես ի՞նչ ե, ամեն որ դու նույն գալստուկն ես ցույց տալիս համ... յես քեզ ցույց կտամ, թե ինչ ե նշանակում մեծավորի խոսքը չսել: — Ապա սնդուկդ բաց արա... — Քեռին դանդաղ մոտենում ե թախտին, նրա տակից դուրս ե քաշում սնդուկը և բաց ե անում:

Յեֆրեյտորը քրքրում ե:

— Ա՛մ... ես լաթի կտորով ես սրբվում համ. ես կեղտոտտ գալստուկն ես կապում համ. սրանք ել քո վաթթաններն են... Դե լով, արի եստեղ...

Միասին հետ են դառնում: Քեռին մտնում ե շարքը, իսկ յեֆրեյտորը կանգնում ե մեր դիմաց:

— Վերցրո՞ւ սրանք բերանդ, — գոռաց յեֆրեյտորը:

Քեռին ատամներով բռնեց փողկապի, սրբիչի և վոտի փաթթանների ծայրերը:

Ուսուցիչը հրամայեց.

— Бег на месте, бегом... — Քեռին կուրծքը դուրս ցցեց, ձեռները բռնցքաձել հալվաքեց գոտկատեղին, կեղտոտտ լաթերը ատամներից կախած, քիթը քշտեց ու դունչը ցցեց:

Յեֆրեյտորը նայեց մյուս բաժանմունքի յեֆրեյտորին, կզակը հալվաքեց, թշերն ուղղրեց ու գոռաց.

... Марш!

Քեռին սկսում ե վազել միենույն տեղում: Վոտներն արագությամբ բարձրացնում ու դնում գետնին, կուրծքը ամբողջովին առաջ ե գցել բոունցքները գոտկա-

տեղի վրա տանում-բերում ե շորերին քսելով: Քրտինքը ծլծլալով թափվում ե ճակատից, լցվում ե աչքերն ու բերանը: Բայց նա իրավունք չունի սրբելու:

— Կանգնիր, բավական ե... — ձայն տվեց յեֆրեյտորը, այ դու գոմեց, տես ինչպէս քրտնեց...: Դժար ե համ, եհ յեղբայր, սա ծառայություն ե, հանաք մասխարություն հո չի. բա ուսուցչին խարելը հմշուն ե...:

Յես տեղումս անշարժ կանգնած խղճում եմ Քեռուն, ու հոգիս լցվում ե ցավով, վոր չեմ կարող նրան այդ ըոպեյին գոնե խոսքերով միսիթարեմ: Ու աչքի տակով նայում եմ զորանոցի դրանը, թե գուցե մի սպա մտնի և յեֆրեյտորի յեռանդը նվազի: Բայց սպան չկա, և յեֆրեյտորը շարունակում ե իր այցը մյուսներին ել:

Միակ միսիթարությունը այդ որերին այն եր, վոր զրազմունքից անմիջապես հետո շարվում եյինք ընդարձակ բակի պատի տակ, մեջքներս տալիս եյինք պատին, վոտներս յերկար փոռում ե իրար վիշտ պատմում ու տան կարոտը քաշում:

Ամենից գարդոտը Կարիբով Ստեփանն եր:

— Ա՛խ, յի՞րը կըլինի, ես տանջանքից ազատվենք, — առաց նա տարածվելով գետնին. — քնեյի, աչքերս բացեյի ու տեսնեյի մեր հերթիկն ե վերես:

— Ուրիշ բան չեյի ուզի, — վրա բերեց Վոսկանովը, — ինձ թե լիներ, սնդուկս զնեյի մեջքիս ու թոչեյի մեր սարերը...

— Ուզածդ քիչ ա, — ծիծաղեց Քեռին, — աչքածակ, թե ես ուզես տունդ, հերիք չի, սնդուկդ ել ես տանում: Զի լինի՞ սնդուկդ թողնես եստեղ ու գնաս: — Ապա ալելացրեց, կիսալուրջ դեմք առած.

— Դրուստ եմ ասում, տղերք, զարմանալի մարդիկ եք, մարդ եղքան թամբալ կլինի...

— Հայա ինքն ա խոսում, — վրա պրծավ կոսկաշնով, — թե թամբալ չես, ձեռդ հկոտրվեր, վոր փաթթաններդ լվանայիր ու եսոր ենքան չքրտնեյիր... հոգիդ դուրս եկավ ե:

— Ու՞մ հոգին դուրս գա. ետինց բաները թեռու հոգին դուրս չեն բերի. ծառայություն ա, կվաղենք ել, կլանք ել, կծիծաղենք ել. որ ա, կմթնի, կերթա, ինչս պակսեց, վոր եսոր ենքան քրտնեցի. յեփրեյտորի հոգին դուրս գա. ենքան կամանդ անի... չեյի լվացել կլվանամ, մեծ բան մ....

Որապահը դուրս յեկավ և գոռաց.

— Դե, տղերք, ավելները վերցրեք, զորանոցն ավլեցեք! Զորանոցը մաքրելուց հետո պիտի սկսվեր մեր բուն զբաղմունքը — զինվորական վարժությունները:

V

Նոր եյինք մտել ձմեռը: Յերկար գիշերներ, բայց քնի կարոտ ժամեր: Թեև ժամը 9-ից, 10-ից պառկում եյինք, բայց 4-ին զարթնելով, միշտ քնի կարոտ եյինք մնում: Վոչ թե որերը, ժամերը, այլ բոլորներն եյիք համարում, թե յերբ կլրանա 5 ամիսը և մենք ել մյուսների հետ կդառնանք իսկական զինվորներ — զինվորի պարտականություններով և «արտօնություններով» թեև այդ արտօնությունները չնշին եյին:

Զմեռվա կարճ որերն ընթանում եյին դանդաղ, և մենք կիսամութ զորանոցի պատուհանների առաջ շարված, հրացանները ձեռներիս, նայում եյինք դրսում պատվող ձյան հատիկներին ու նրանց դանդաղ եջքով հաշվում

ժամանակը: Սակայն վոչ այդ փաթիլները վերջ ունեյին և վոչ ժամանակը: Ու մեղ թվում եր, թե տասնամյակ ենք բոլորել, այն ինչ ընդամենը տասնհինգ որ եր անցել:

Զինվորական այդ սկզբնական շրջանի տաժանքի հետ սկսվում եր զինվորների մեջ նաև մի ախտ, վոր վարակում եր համարյա ամենքին ել: Այդ՝ ծուլության, դալության և խարերայության ախտն եր: Այսքան զրավիչ եր այդ ախտը, վոր քիչ եր մնում ինձ ել վարակեր. ինձ՝ վոր թեե ակամա եյի գնացել, բայց հոժարությամբ հանձն եյի առել տանել բոլոր դժվարությունները:

Ի՞նչ սոսկալի միջոցների եյին դիմում զինվորները, ազատվելու համար ծառայությունից: Թեև խարերայություն բոլորն եյին անում, բայց ամենից աչքի ընկնողները հրեաները, հայերը և թաթարներն եյին: (Դաժան զորանոցի ծանրությունն ալիլի զգալի յեր մանր աղգությունների զավակների վրա, վորոնք բացի զինվորական կյանքի ընդհանուր տառապանքներից, ծաղրվում ու հալածվում եյին նաև իբրև «ոտարազգիներ»: Ուսւները ևս յետ չեյին մնում: Այդ ախտից հեռու եյին մասնավորապես մի քանի լեներ, վոր տըրտնջալ անդամ չեյին սիրում: Յես մինչև վերջն ել չկարողացա հասկնալ, թե արդյոք նրանք դիմանում են այդ ծանրությանը, թե մի ուրիշ պատճառ կա չարտահայտելու համար իրենց արտօնությունը: Միայն այսքան եյի նկատում, վոր նրանք իրենց մի տեսակ հպարտ են պահում:

Կարճահասակ, կոնազլուխ, լայն ու տափակ արկոտ*

* Արկոտ-պեպենոս:

յերեսով Հերցբերգին՝ չեմ կարողանում առանց ծիծաղի հիշել. և «մատակ» մականունը, վոր Փելդֆերելն եր կացրել նրան, վոչ վոքին այնպես չեր սաղի, ինչպես նրան. նրա կարճ վոտների վրա որորվող լայն իրանին նայողը բացականչում եր՝ ճիշտ վոր «մատակ» գոռղի բաժին դառնաս դու:

Նա աղվեսի յոթ հնարն ել գործ զրեց, բայց միշտ ել յերկու վոտքով ընկավ թակարդ: Սկզբում խուլ եր ձևանում. բժիշկն ել, Փելդշերն ել քննեցին, բայց չկարողացան հաստատապես պնդել՝ թե նա խուլ ե կամ առողջ. Նույնիսկ հին սատանա» Զայցեր, վոր հրեաներին սաստիկ ատում եր և իր խորամանկության պատճառով եր արժանացել Փելդֆերելից այդ մականվանը, չկարողացավ Հերցբերգի գաղտնիքը բանալ: Զայցեր Քեռուն ել սկզբում խեթ-խեթ եր նայում, ինչպես բոլոր նորերին, բայց տեսնելով, վոր մյուսների նման Քեռին իրենից ամեննին չի վախում, սկսել եր մարդատեղ դնել նրան:

— Քեռի, տեսնում ես «Թհուղի մատակը» ինչ զալբություն ե անում, — ասաց մի անդամ ճաշից հետո Զայցեր, ցույց տալով Հերցբերգին, վոր նստած հեռու թախտին մունդիրը կարկատում եր: Նա աչքով արավ Քեռուն, ապա պատուհանի գոգից մի թղթե մեծ տոպրակ վերցրած, կատվի քայլերով մոտեցավ Հերցբերգին յետելից ու հանկարծ ուոցրած տոպրակը տրաքացրեց նրա ծոծրակի մոտ: Հերցբերգը սարսափած վոտի թռավ, մունդիրն ու մկրատը գեն շարտելով և բոլորին ծիծաղեցնելով. յերեկոյան Փելդֆերելը մի լավ բռունցք տվեց նրան կզակի տակից, սարսափելի հայհոյանքներ տեղալով գլխին: Հետո սկսեց Հերցբերգի վոտները

ուշել: Մյու գաղտնիքն ել բացվեց, յերբ մի որապահ վերմակը նրա վրայից քաշում եր, զարթեցնելու համար, Բանից յերեաց, վոր հնարամիտ զինվորը ժանդու կոպեկանոցը թաց ջորով կապում և աղղրին ու վերք գոյացնում:

Հայերի ու թաթարների սիրած միջոցը ծխախոտն եր. կամ ծամում եյին, կամ յուրը խմում: Մի այլանդակ դեղնություն եր գալիս դրանց վրա, և գործածողներից շատերը լուրջ հիվանդանում եյին. ինչպես աեղեկացա, դրանցից մի քանիսն այնպես ծանր եյին հիվանդացել, վոր բժշկվելն այլնս անհնար եր և նրանց մահ եր սպառնում:

Բայց ամենից հայտնի յեղավ իր անմիտ հանդգնությամբ ծաղկունքեցի Ավգալովիք: Սա հիվանդանոցում յեղած ժամանակ, յերբ լսել եր վոր բժիշկն իրեն Շուռը և գրել և հաջորդ որը պիտի տանեն դորանոց, կանգնել եր հայելու առաջ և ասեղով ծակել եր աջ աշքի բերը: Նա բոլորովին կուրացավ:

Ցես նախատում ու խրատում եյի զինվորներին, վոր այդքան թուլամորթ ու ծույլ չիննեն. հորդորում եյի, վոր իրենց կյանքի հետ չխաղան: Իսկ Քեռին ուղղակի կատաղում ու հայհոյում եր, յերբ տեսնում եր այդպիսիներից մեկին: Յերբ լսեց Ավգալովիք տիմար արարքը, գլուխը տարուքերեց և ասաց:

— Ախմախ, ախմախ աշքիդ լույսը խավարացնում ես, ծաղկի հո չի, վոր պոկես՝ Ֆլի աեղը բանի:

Մի որ սակայն ինձ թվաց, թե Քեռին ել բռնեց այդ ընդհանուրի սիրած, բայց մտանգավոր ճանապարհը: Մի առավիտ նա այնպես գունատ ու գեղնած եր, վոր ինձ թվաց, թե «թութունի ջուր» և խմել ևմել եր թե

վոչ, չգիտեմ, միայն թմրած ու խոր ընկած աչքերը
ցույց եյին տալիս, վոր ամբողջ զիշերը նա չեր քնել:

Ի՞նչ վողորմելի արարածներ են սրանք, մտածում
եյի յես Քեռուն նայելով. — այս լայն թիկունքի ու
առողջ կրծքի մեջ միթե այնքան վախկոտ ու թույլ հոգի
և գտնվում, վոր կործանի այս աժդահա մարմինը.
և միթե դաժան զորանոցը Քեռու թրվուն կյանքն
ել պիտի թառամեցնի....

Կասկածս ավելի ամրապնդվեց, յերբ յերկու որ անց,
առավոտվա զբաղմունքից հետո Ք ոռու ել տեսա այն
խմբի մեջ, վոր ուղևորվում եր նախնական բուժարանը:
Նա յերկու վոտով կաղում եր: Յերբ խումբը մոտիցս
անցնում եր, յես ձայն տվի Քեռուն.

— Հո՛, Քեռի, ի՞նչ խաբար ե. դու յմէ հիվանդացար:

— Ե՛ն, ել մի հարցնի, վոտներումս հալ չի մնացել,—
ասաց նա և իսկոյն դեմքը շուռ տվից ու շարքի մեջ
ընկալ: Ել յես չտեսա Քեռուն: Նրան այդ որը ուղար-
կել եյին հիվանդանոց:

Մի քանի որից հետո հիվանդանոցից զորանոց դար-
ձած թիֆլիսի ծաղրածու Սերգոն ասաց:

— Դիտեք տղերը, Քեռին գնդվիլ ե.

— Ի՞նչպես թե գնդվիլ — հարցըին մի քանիսը:

— Գնդվիլ ելի, գնդվիլ. այ, ես սոմու պես կոլոր
գունդ ե դարձի:

— Զի կողանում ման գալ, — հարցըեց մեկը:

— Ի՞նչ ման գալ, տեղիցը մի շադ չի կարում անի,
Վոտները կոկել են. պարալիչ ե ստացի. ինքն ասում ե
«իշի քամի ա»: Նա կամ նստած ե, կամ պառկած, ամա
վոտները, ծնկներից, միշտ յերկու տակ ծալած են:
Լուրը հաստատվեց:

Խեղճ Քեռի, — մատածում եյի յես. — հենց առաջին
որից բոլորը նախանձում եյին քո առողջությանն ու
վոտքերիդ աշխուժությանը. իսկ այժմ զրկվել ես զոյզգ
վատքերիցդ և ով գիտե, հավիտյան անդամալոյժ մնաս:
Այս ցավը սաստկանում եր իմ մեջ, մանավանդ յերբ հի-
շում եյի Քեռու միշտ զվարթ գեմքը, անհոգ ծիծաղը և
հաստատամիտ պատրաստականությունը՝ դիմանալու
ծառայության բոլոր գժվարություններին: Ցավս կը կնա-
կի յեր զառնում, յերբ մտածում եյի, թե Քեռին միակն
եր, վոր արհեստական կերպով հիվանդանալուն գեմ եր
և գատապարտում ու նախատում եր հիվանդացողներին:

Անցավ վերջապես հինգ ամիսը հինգ դարի պես,
վոր այսոր հինգ վայրկյան և թվում իմ աչքում:

Մայիսյան արևավառ որ եր: Ամբողջ գունդը հավաք-
վել եր զորանոցից բակը, յերգումն ընդունելու: Մենք
շարվել եյինք վաշտ-վաշտ և գնդի առջնում մի փելդ-
ֆերել բունել եր գնդի գրոշակը, վորին պիտի յերգե-
յինք մաղթանքից հետո: Հիվանդանոցում յեղածներն
ել յեկել եյին յերգումտալու: Յերբ քահանան մաղթան-
քը վերջացրեց, գնդապետը ցուցամատն ու միջամատը
իրար միացըրած բարձրացրեց և սկսեց յերգման խոս-
քերը հատ-հատ ասել բարձրածայն: Ամբողջ գունդը
մատները վեր բարձրացրած նրան հետեւց: Հանկարծ
այդ անհամար մատներից կաղմված ցցերի արանքով
յես նկատեցի մի սայլակ, վորի մեջ ծալապատիկ նստած
մի գունատ զինվոր մատները վեր եր ցցեր աչքերը
հորիզոնին ուղղած: Յես հազիվ ճանաչեցի Քեռուն:

Խեղճ Քեռի, անցավ մտքովս, որերդ համրած են:

— Ե՞ն, — ասաց զինվոր շարժելով յերեանցի Արու-
թյունովը, հանդեսից հետո, յերբ հավաքված խո-

սում խինք — խեղճի բանը պրծած ե. եսոր, յա եգուց կմեռնի:

Բայց այն՝ ինչ վոր տեսա մի քանի որ հետո, սաստիկ զարմացրեց և ինչ վոր լսեցի, ուղղակի ապշեցրեց ինձ: Յեկ յես՝ վոր առաջ արհամարում, բայց միենույն ժամանակ նախանձում եյի թեռուն, համարելով նրան մի անզգա արարած՝ զուրկ մարդկային կրքերից ու մտածմունքներից, այդ որն սկսեցի և հարգել նրան և պատկառել նրա դիմաց: Յեկ հոգուս մեջ նստած մելամաղձության կոշմարը յես դադարեցի վերագրել ուսմանը, վորովհետև տեսա, վոր յուրաքանչյուրի միջ ել գոյություն ունի այն:

Տեսա, վոր այդ արտաքին անհոգության ու անտարբերության տակ թեռու ներսում թագնված են ծանր ապրումներ ու կոկորդը խեղդող մղձավանջ:

VI

Երդումից մի քանի որ անց, գնդին ուղղված որվա հրամանը կարդալով, մեր վզվողի ունտեր-ոփիցերն ասաց, վոր թերին ազատվել ե ծառայությունից: Յերկու որ հետո նրան սայլակով բերին զորանոց, վիրտեղ պիտի հանձններ արքունական իրերը, ստանար իրեն հասանելիք ոռմիկն ու շորեղենները և ուղնորվեր հայրենիք:

Իրինապահ եր: Մեր ամբողջ վաշտը գնացել եր զորախաղի: Զորանոցում մնացել եյինք՝ յերկու որապահ և յես, վոր որվա հերթապահն եյի:

Թերին պառկած եր զորանոցին կից փոքրիկ հիվանդանոցի միակ մահճակալի վրա:

Զանձրալի յե ամբողջ 24 ժամ հերթապահություն անելը, առանց հանվելու, կամ քնելու իրավունքի: Յեկ

յես կարդալուց ել ձանձրացած, լուր մտածելուց եր, մանր-մունը կարգադրությունները վերջացրել եյի ու մի նոր զրազմունք եյի փնտում ժամանակս սպանելու համար: Քայլերս ուղղեցի դեպի հիվանդանոց և դրւուր բանալով ներս մտա: Դուռը բանալիս կարծես վոտնաձայն լսեցի և մի բան հանկարծ թրմփաց մահճակալին: Յես նայեցի ու տեսա թեռուն հուզված ու սարսափած դեմքով: Ինձ թվաց, վոր նա մահճակալից հեռացած եր, այժմ ել վերմակն առնում եր վրան ու ինչվոր մի բան վերմակի տակ թազցնում եր: Յես կասկածանքով նայեցի նրա հուզված ու վախեցած դեմքին և ինձ թվաց, թե նա մի բան ե թոցը ել ու այժմ թագնում ե:

Անպիտան..., անցալ մտքովս. յերեկի մի կնիք, կամ անպիտք իր ե գողացել հայրենիք տանելու համար:

Այս մտածմունքի մեջ եյի, յերբ թերին չափաղանց հանդարդ դեմք ընդունեց ու ասաց:

— Վայ, դու յես աղպեր ջան, յես ել վախեցա թե յեֆրեյտորն ա, յա ունտերը:

Սուսջին փոփոխությունը, վոր նկատեցի թեռու մեջ այն եր, վոր նրա դեմքը մի տեսակ մաշվել ու մեղկացել եր և մեկ ել նրա խոսակցության նախկին կոպիտ ձեերն ու բառերը մեղմացել եյին:

Յես հանգստացրի թեռուն, ասելով:

— Զե, թերի, այստեղ վոչ վոք չկա. բոլորը գնացել են զորախաղի. կես գիշերին հազիվ վերադառնան: Զորանոցում միայն որապահներն են:

— Համ, մարդ չկմ, — ասաց թերին բռնազբոսիկ ժայիտով և ինձ նայեց մի մտերիմ ու թախանձող հայացքով:

— Նստի, աղպեր ջան, նստիր մի քիչ բան պատմի: Յես գնում եմ տուն, ել չեմ վերադառնալու. ձեզ կկա-

բոտնամ, բոլորիդ ել կկարունամ, վոչ ֆելդֆերելը, վոչ վզվողնին, վոչ ել յեֆրեյտորը ինձ չեյին սսկացնի ու ես ոժոխք կաղարմիցը քշի... Ա՛խ, յերանի թե կարողանայի մնալ ու ձեզ հետ մինչև վերջ ծառայել ու ընկերներիս հետ դառն որերը քաշելուց հետո տուն դառնար յինք, միասին, ինչպես միասին եկել եյինք: Վերցրու տապուրեալը, նստի:

Յես տատանման մեջ եյի, ու մտածում եյի, թե Քեռին ի՞նչ լավ քաղաքավարություն և սովորել:

Հանկարծ Քեռին մի խորամանկ հայացք ձգեց դուանը, ականջ դրեց ե, վերմակը զեն՝ զպրտելով, մահճակալից ցած թռավ, ուղիղ կանգնեց հատակին, ձեռքերը կանթեց գլխին ու ծմրկտաց, Յես չեյի հավատում աչքերիս: Նփոթվելուց դեռ մի բառ չեյի կարողացել ասել, յերբ Քեռին վաղեց աթոռը սեղանի առջեկից բերեց զրեց մահճակալի մոտ և վոտները պարզելով ու ծիծաղելով հրնաց իր սովորական, բայց վաղուց մոռացված ծիծաղով:

— Այդ ի՞նչ ե, Քեռի, բժշկվել ես, — հարցրի յես զարմանքով:

— Բժշկվել, համ, համ, համ... թե վոտներս ես հարցնում, իսկի հիվանդ չեն յեղել, իսկ սիրտս, չզիտեմ ոիտի բժշկվել թի չե: Ասում են, վոր սիրտը շուշի նըման բան ա, պարոն Ակոպով ջան... հիմի չգիտեմ, վոր գնամ տուն, եղ փշուրները կկպչեն իրար, թե ինձ ել փշուրնով գերեզման կտանեն...

Յեվ նա հանկարծ ջարդվածի նման ընկավ անկողնուն, աչքերը լցվեցին արտասուրով, ու նա չոր մազե վերմակով ճմոթեց յերեսն ու աչքերը:

Բայց յես ուղում եյի իմ զարմանքին բավարարություն տալ, քան Քեռուն մխիթարել, ուստի հարցրի.

— Քեռի, բա զու հիվանդ չես, վոտքերդ զնդված չելին...:

— Վոտներս... — նորից ծիծաղեց Քեռին և վեր կացավ սեղից, — վոտներս՝ այ, եսպես եյին, — ասաց ցույց տալով բոլորովին ուղիղ պարզած վոտները:

— Բա ի՞նչպես, ուրեմն խարում եյիր բժշկին:

— Բժշկվելն, բժշկին խարելն ինչ ե վոր, — ասաց նա նորից ախրելով, — յես ձեղ բոլորիդ ել խարում եյի, ինձ ել եյի խարում, բայց վոչինչ, յես չեմ վախենում: Յես կդնամ տուն, իմ արածը կանեմ, նրանից հետո ինչ ուղում ե, թող լինի:

Նրա աչքերը փայլում եյին, շրթունքները դողում հայացքը բարկությամբ լի:

— Ի՞նչ ե պատահել, հանգստացրի նրան, — մի լավ պատմիր տեսնեմ՝ ի՞նչպես զու հինգ ամիս խարեցիր բժշկին և վոչ վոք չիմացավ, վոր դու սուտ հիվանդ ես:

«Սուտ հիվանդ» ասելով յես նայեցի նրա չոր ու գունատ դեմքին և կարծես զղջացի ասածիս վրա ու ավելացըր՝ — և ի՞նչպես դիմացար....

— Ի՞նչպես խարեցի, ի՞նչպես դիմացմ... ոհ, եղպես որ իմ թշնամին ել չքաշի՝ ինչ վոր յես քաշեցի: Հինգ ամիս գիշեր ու ցերեկ իմ միսը կերա. զրկվեցի արենի լույսից ու դրսի հովից: Նախանձում եյի են աղերանցը, վոր վոտի կեղտուտ փաթթաները ատամներից կախվագում ու քրտնում եյին. յերանի եյի տալիս են սալդաթներին՝ վոր հրացանից ուսը թուլացած քրտինքի մեջ խաշվում են. յերանի եյի տալիս նրանց, վոր ցըրտից քսմած ձեռներով թվանքի կոթը կրծքին սեղմած, կանգնում են բանտի դռանը ջյունի ու սառնամանքիքի տակ... նախանձում եյի են սալդաթներին, վոր հրա-

ցանով; մի փութ ծանրությունը մեջքից կախ, վազում են լեզուները դուրս գցած, հևալով, և շունչը կտրած ընկնում են յերեսի վրա: Յերանի եյի տալիս. քանի վոր նրանք ծնկները ծալում ու բանում եյին, իսկ յես գունդ դարձած, ընկած եյի մահճակալին: Գիշերը մի թեթև չխկողից՝ կատվի ձեն առած մկան նման, վեր եյի թըռչում քնիցս, վոր չլինի թե հանկարծ վոտներս պարզած լինիմ ու գաղտնիքս բացվի...: Յերանի եյի տալիս իր աչքը ծակող Ավդալովին ու թութունի ջրից դեղին ցավ առած Յեֆիմովին, վոր իսկական հիվանդ եյին դարձել, իսկ յես ուղում եյի ազատվել, վոր տուն գնամ սաղ աչքով, սաղ վոտով ու սաղ մարմնով, զրա համար ել դժվար եր հիվանդ, յերեալը, առանց հիվանդության: Ո՞հ, մի հարցնիր, պ. Ակոպով, մի հարցնիր, լեզուն չի պատմի են տանջանքները, վոր յես քաշեցի: Որիշ մեջ յերկու կամ յերեք բոսե միայն կարողանում եյի վոտներս պարզել: յերբ ինձ իմ խնդիրքով տանում եյին արտաքնոց, յես դուռը պինդ փակում եյի ու մութ արտաքնոցում վոտներս պարզում եյի մի քիչ...

— Լավ, միթե այդքան դժվար եր ծառայությունը, չե վոր դու ամենից քաջն ու սրտոտն եյիր և մեր տղերանցը ծազրում ու նախատում եյիր, վոր չեն դիմանում ծառայության դառնություններին և հուսահատվում են:

— Ծառայությունը... տասը ենպիսի ծառայություն ել կտանեյի, թե վոր բանը գար ծառայելուն:

— Հապա պատճառն ինչ եր, թեուի, — հարցրի յես ավելի ու ալիևի զարմանալով և աթոռս մոտ քաշեցի:

— Կղիմանայի, կղիմանայի, պ. Ակոպով, կղիմանայի, թեկուղ տասը տարի լիներ ծառայությունը, թե-

կուզ են տանջանքների տասնապատիկը տային ինչ ինչ վոր տալիս եյին, թե վոր չլիներ նախշունիս սերն ու վրեժի կրակը, վոր իմ սիրտը վառեց:

Վերջին բառերն ասելիս նա ընկճվեց և գլուխը ցցեց բարձին: — Ա՛խ, Ակոպով ջան, մինչև եսոր վոչվոքի իմ սրտի գաղտնիքը չեմ ասել. քեզ եմ ասում և գիտեմ, վոր լածիդ վրա քար կդնես ու կանցնես:

— Սարերի սիրուն մարալ, ձորերի կարմիր լալա իմ նախշունը մի հատիկ եր ու մեր մահալի նախշն եր: Ամեն ամուսնացող յերիտասարդ նրա դուռը դնաց ու դատարկ յետ դարձավ. յես տեսա նրան խոզանի մեջ ավել քաղելիս ու նրա սե աչքերը գնդակ խփեցին սըրտիս, իմ սիրտը կրակի առջե բռնած մոմի նման հալվեց ու յես թուլացա նրա համար... նա ել ինձ սիրեց: Տասը որ թագուն նրանց գեղի յետնը կեյլի ու Մաջնուն դարձած մենք սիրտ սրտի, շրթունք շրթունքի տված մեղը ծծեցինք իրարից: Քիչ եր մնում, վոր մեր սիրահարությունը բացվի ու աշխարհի առաջ խայտառակ դառնանք. յես ընկա մորս վոտներն ու աղաչեցի, վոր նըրան ուղի ինձ: Լավ աղջիկ եր, եերը աղքատ, բայց վոտի տակ գնացողներից չեր. հարուստների առաջին վիզ ծոռդ խեղճ ու կրակ մարդ չեր: Մի որվա մեջ բանը գլուխ յեկավ ու մեզ նշանեցին: Նշանից մի տմիս չեր անցել, վոր յես սալդաթ ընկա. պապեցին, վոր վոտս կապվի: Դրանից հետո մի շաբաթ մնացի տանը իմ մարալի հետ... Ա՛խ, յերբ միտս եմ բերում, վոր եղ մի շաբաթը իմ կյանքի մեջ կա, ել չեմ ափսոսում, վոր ծնվել եմ Թւ տանջվում եմ. սրանից հետո ել ինչքան տանջանք քաշեմ, աչքիս չի յերեվա: Ճամբա՝ ընկնելու վերջին գիշերը մենք անքուն

լուսացրինք իրար գրկած լաց լինելով. եղ գիշեր նա ինձ ասեց:

— Անաստված, ինձ թողնում, գնում ես, չմոռանա՛ հա՛...

Ցես ասեցի. — Աշխարհքը աշխարհքով կանցնի, յես քեզնից չեմ անցնի. յերկիրը առանց յերկնքի կապրի յես առանց քեզ չեմ ապրի, անուշ ջան, ի՞նչ մտքեր ես անում:

Նա ասեց. — Տես, չկինիմ, չիմանամ՝ թե իմ կարուտից տանջվես ու հիվանդանաս, կամ գլխիդ մի ոյին բերես:

Ցես ասեցի. — Ցես վոր հիվանդանամ, ել քեզ ով գուրգուրի, սիրուն ջան, յես վոր գլխիս ոյին բերեմ ու մեռնեմ, ել քեզ վժնց կտեսնեմ:

Նա ասեց. — Գնա, իմ ումուդ, չոր քարը վարդ դառնա առաջդ, յերկնքի արելը պահապան աչք լինի գլխիդ, չորս տարի կապասեմ, առանց դարդ անելու, ամա վոր լսեցի քեզ մի բան ե պատահել են որը հողը կմտնեմ:

Ցես ասեցի. — Կգնամ, չորս տարի կմնամ, թեկուղ դժոխք ել տանեն, կդիմանամ, կկանգնեմ ես անահուն կարկուտի տակ անվախ ու քու սերը իմ գլխին յերկնքի աղեղնակ կլինի. յես են որը կտիրեմ ու կմեռնեմ, յերբ իմանամ, վոր քո սերը պակասել ե...

Ել ինչ խոսեցինք, չիմացա. շուտ զարթնեցինք. պաշարս ու շորերս կապեցին, յես ճամփա ընկա: Վերջին արտասունքս մարալիս թշերի վրա քցեցի. նրանից հետո ել վոչ լաց եմ յեղել, վոչ տիրել, վոր չինի թե Նախշուն իմանա, ինչն ել տիրի:

Ցեկա ծառայության. ինչպես ամենքդ ել տեսաք, ուրախ եյի ու անդարդ. յերբ միտքս գնում եր մեր տուն,

յես նստած տեղիցս թոչում, վազվզում եյի, հանաքներ եյի անում, վոր չինի թե տիրեմ ու մտածմունքի մեջ ընկնեմ... Ութը տարի ել վոր լիներ, յես որերս եղպես կանցկացնեյի: Բայց քսան որ ել չեր անցել վոր ահա ես սև լուրն իմացա. ուզեցի թե առնեմ, թուչեմ գեղը, թե չկար, ուզեցի փախչիմ ու հասնեմ՝ վախեցա թե կրոնեն, կքշեն... Ես հսարը մտածեցի: Հոյս ունեյի, վոր շուտով կազատեն, չեյի իմանում թե եսքան կուշանամ. ամեն որ մտածում եյի թե յերկու-յերեք որից հետո կազատեն, թե չե, վաղուց փախած կլինեյի:

Քեռին խորը շնչեց, մի վայրենի փնչոց արձակեց ու արտասութից խեղդված աչքերը փակած մի տրորած թուղթ շպրտեց ինձ: Ապա աչքերը բացեց և խղճակի, հայացքով ասաց:

— Ա՛ռ, կարդա պ. Ակուպով, և դու յեղիր եստեղի իմ դատավորը, իսկ ենտեղ, գեղում, յես իմ դատաստանը կանեմ:

Ցես ծնկանս վրա թուղթը հարթելով կարդացի՝ անվարժ ձեռքով, կիսատ բառերով և միտքը հազիկ հասկացնող այս նամակը.

«Իմ անգին, իմ պահապան հրեշտակ ամուսին».

Ցեքս մեղանից հարցանեք, վողջ ենք և անդարդ, կցանկանաք պետական աստվածանից, վոր քեզ ել անդարդ ու սաղ սալամաթ պահի եղ ոտար աշխարհքումը»:

Ցայտ լիցի քեզ, վոր ամոթը դեն ենք դրել, ել ամաչելու ժամանակը գնացել ե. շուտ արա արի. ինչպես ել լինի, արի. յես ել չեմ դիմանում, ինձ սարիցը կցցեմ ու կապանեմ, թե վոր չգաս: Հորյեղբորդ տղեն, Սեփոն ել ինձ հանգիստ չի տալիս. աբուն ու ամո-

թը մոռացել, ինձ ուզում աքեղնից հանի, են շան տղա Սեղրակի ճանգը զցի: Են որը զիշերով Սեղրակի հետ հարբած յեկան մեր տուն, յես տանից փախա գնացի հորանց...»

Տներս քանդվեց, նամուսն ել ձեռներիցս գնում ա... Արի հասի քո ամոթին ու քո նամուսին. յես ես կրակին ել չեմ դիմանա...»: Հետևյալ տողերը անկարելի յեղավ կարդալ. տակը զրված եր՝ «Քո կողակից»:

Ես կարդացի ու ձեռքերս թուլացած, գլուխս կախ զցեցի: Հեղեցի Ղարաքիլիսան ու վագոնի տեսարանը, մտարեցի Քեռու մի քանի որվա կյանքը զորանոցում ու չկարողացա ինձ հաշիվ տար թե այն ժամանակ ի՞նչ եյի մտածում, այժմ ի՞նչ...

Մտքերից սթափվելով հարցրի.

— Սեղրակն ով ե, հորեղբորդ տղան ի՞նչ գործ ունի Սեղրակի հետո:

— Սեղրակը...—ասաց Քեռին գարշանք արտահայտող ձայնով և ներքին ծնոտը ջղայնորեն ցնցելով, — Սեղրակը մեր գեղի առլանն ե, մեր մահալի գեղերի գամբո Ավետի թուլեն: Հերը սաղ գեղերի հարստությունը տունը լցրեց. պրիստավի թասընկերը դարձավ, տղեն— Սեղրակին սարգաթությունից աղատեց, զցեց գեղացիների ջանը: Սեղրակը զուքան բաց արալ ու սաղ գեղը ձեռն առավ: Քանի տարի քաղաք գնալու վեց տարի առավ, հիվանդացավ: Ուզեց ամուսնանա, աչքը դրեց նախշունին, բայց նախշունի հերը աղջկան չտվեց «քաղաքի լոթուն», ինձ պսակեց: Սեղրակ աղեն ինձ դոռով սալդաթ զրկել տվեց, հորեղբորս տղա Սեփոյին ճանկը զցեց, վոր նա ձեռքով նպատակին հասնի: Սեփոյինք Ավետի տղին պարտք ունեցին: Սե-

փոն իմ գալուց հետո մեր տունը կառավարում եր. պարտքը շուռ տվեց մեր տան վրա, յեղները ծախեց, մեծ մասը իր զրպանը զրեց, զարձավ Սեղրակի աչքի լուսը ու նրա համփառնը: Նախշունը նամակի մեջ չի գրել, բայց յես մեր գեղից յեկողներից իմացա, վոր անխիղճ Սեղրակը Նախշունի հորը ծեծել ե տվել, վ'ըջն ել բանտ ե ուղարկել, վորովհետեւ աներս մի որ հարբած Սեղրակին լավ խայտառակել եր գեղի մեջ... վնչինչ, չեն մարսի: Քանի Քեռին սաղե, չի թողի վոր մարսեն:

Նա արագությամբ շունչ քաշեց, ապա վայրենի ծիծաղ արձակեց իր լայն բացված բերանից: Նա խլեց ինձնից թուլթը, տրորեց բուռնցքների մեջ, պատառպատառ արավի և անկողնից ցած թուելով, սկսեց վաղվել սենյակի մեջ ու հրնառալ:

— Ա՛, տես, պ. Ակոպովի վոտներս բոլորովին առողջ են ու գոմեշի ուժ ունին. տես ինչպես վազում եմ. յես ել առողջ եմ, ու վոչ մի հիվանդություն չունիմ. Կը գնամ, վաղը կզնամ— հրամանն արդեն դուրս ե յեկել Նախշունիս զրել եմ, վոր համբերի մինչև իմ զնալը. Կզնամ, դշի թեռվ կհասնեմ Նախշունիս ու... Այ, տես, սրանք կտանեմ հետո... Նա փաթթած շորերի միջից հանեց հրացանի հինգ հատ փամփուշտ:

— Կտանեմ, ճիշտ ե, լավ չեմ սովորել թվանք զցելը, բայց հինգից մեկը անպատճառ կդիպչի Սեփոյի սրտին, մյուսը Սեղրակի պլուճուճակից (ծոծրակից) դուրս կգատ: Թե վոր վոչ մեկը չզիպավ, են վախտը, այ, եսպիս, արծի նման, պատառ-պատառ կանեմ, յերկուսի ել լեշերը շներին կցցեմ... ☺

Ասաց ու կատաղի վոսայունով թռավ մահճակալին և վերմակը գնդելով, սկսեց քըքրել ճանկերով ու

ատամներով։ Բայց ատամները վերմակի մեջ մեխած, փոս ընկած աչքերը արյունով լցված, յերբ նա ինձ նայեց, յես կարծեցի թե վագր և պատրաստվում վրաս ցատկելու, և դողացի ամբողջ մարմնով...

Հանկարծ խմբական յերգի ձայնը լսվեց, Յես ականջս պահեցի դեպի պատուհանը. զինվորները վարժությունից վերադառնում եյին։

Քեռին ցնցվեց, ընկավ մահճակալին՝ մեջքի վրա, և վոտները կծկելով վերմակը քաշեց դիխին։

Յես դուրս յելա վաշտին դիմավորելու.

Հետեւալ որը Քեռուն սայլակով տարան յերկաթուղու կայարան ճանապարհ գցելու դեպի հայրենիք....

1918.

ՆԱՄԱԿ

(Զինվորի հիշատակաբանից)

I

Մեր բաժանմունքի ավագը, յեֆրեյտոր Զվերել, այդ որը տարորինակ տրամադրություն ուներ, Նրա փայլուն, կարծես ճրագուշած յերեսին մի մեղմ ժպիտ եր յերեւմ, բայց այդ ժպիտն այնքան մելամաղձուր եր ու բռնազբոսիկ, վոր կարծես որտում թագնված մի գաղտնի վշտից եր բղխում։

Նա առհասարակ սիրում եր ժպտալ, նույնիսկ իր ստորադրյալների վրա բարկացած ժամանակ, բայց այդ ժպիտներն իրենց մեջ ունեցին մի մեծամիտ արհամարհանք, Նույնիսկ ինձ հետ խոսելիս նա չեր կարողանում թագցնել իր ժպտի մեջ այդ արհամարհկոտ գիծը, Նա ինձ առհասարակ նկատողություններ չեր անում և աշխատում եր նույնիսկ քաղաքավարի լինել հետա, բայց այդ ժպիտը յես միշտ տեսնում եյի նրա յերեսին, յերբ զբաղմունքից ազատ ժամերին խնդրում եյի թույլտվություն քաղաք գնալու։ Դավիս կանգնում եյի նրա առաջ, ձեռքս դնում ճակատիս և խնդրում։

— Պարն յեֆրեյտոր, իրավունք տվիք քաղաք գնամ։

Իսկ նա, սկզբում իրը թե գլխի չընկնելով, ասում եր. — Ի՞նչ եք ցանկանում...

Յեվ ապա աչքի տակով լիտից մինչև գլուխ ինձ չափելով, այդ անդուրեկան ժպիտը դեմքին, շարունակում եր.

— Քաղաք... ինչի՞ համար եք գնում... Դործ ունեք... տեսնք, այնպես արեք, վոր նկատողություն չստանաք. կան շատերը ձեր նորեկներից, վորոնք բերանները բաց, այս կողմ, այն կողմ նայելով, անցնում են, կարծես բերանով ագռավ են վորսում, ու չեն նկատում սպաներին. այդ անխիճները մինչև անդամ չգիտեն թե ում ճակատ (ՅՕ ՓՐՈՒԹ) պիտի կանգնեն, ում հասարակ պատիվ տան: Զինվորական կանոնադիրքը պահանջում ե՝ սինչպես մեծավորին, նույնպես և ավագին պատվել թե ծառայությունը կատարելիս և թե ծառայությունից դուրս, ազատ ժամերին. նկատողություն ստացողը պարտավոր ե գալ և իսկույն հայտնել այդ մասին իր ավագին: — Դե գնացնք, բայց զգնւյշ կացեք....

Սյո նրա ամենորյա քարոզն եր, վոր յես հարյուրավոր անգամներ լսել եմ, և արհամարհական, բարձրամիտ ժակիտը միշտ անբաժան այս խոսքերից, նրա յերեսին տեսել եմ:

Իսկ այսորվա ժակիտը ամենեին նման չեր դրան: Բացի այդ ժապից, նրա մեջ մի տեսակ դանդաղկոտություն եր նկատվում, վոր չեր սազում իր մեծափառությանը: Այդ փոփոխությունը նրա վրա նկատեցի յես դեռ առավոտյան այցի (ԾՄՕՏԲ) ժամանակ: Նա ելի նկատողություններ անում եր. ինչպես միշտ, բայց ասելիքը կարճ եր կտրում: Վոտներն ու ձեռները նայելիս, հագուստները դիտելիս նա ձանձրույթի նշաններ եր ցոյց տալիս և աչքի տակով նայում եր մյուս բաժանմունքների շարքերին, վորոնք նույնպես կանգնած եին այցի համար, և կարծես սպասում եր, թե յմբը նրանք կվերջացնեն զննությունը, վոր ինքն ել ազատվի:

Այդ որը պատժի արժանացավ հաստիկ Պիխունը, վորի յեղունգները կեղտոտ եյին. բայց Զվերել նրան հրամայեց յերկու ձեռքերը բարձրացնել ուղղահայաց ձեռվ և կանգնել միայն, առանց մարմինը իջեցնելու և բարձրացնելու. իսկ ինքը առանց նրան ծաղրելու և հայոյելու, անցավ մյուսներին նայելու: Մի քիչ հետո շարքի ներքնից նայեց Պիխունին և ասաց տխուր ձայնով.

— Ձեռքերդ իջեցրու, կեղտոտ, անխիղճ...

Տրամադրությունը մի քիչ լավացավ բանավոր պարապմունքի ժամանակ: Յերբ սովորական մարմար-զությունը վերջացրինք, նա հրամայեց մտնել զորանոց և պատրաստվել զբաղմունքի: Մենք վոտնամաններիս բարակ փոշին սրբեցինք ու շարժվեցիք նառի (թախտի) յերկարությամբ, վոտներս կախ գցելով: Նա քաշեց տախտակի աթոռը, աջ վոտը նրա վրա դրեց և արմունկը ծնկանը հենած ու թաթը ծնոտին՝ ասաց.

— Տեսնենք, ինչպես գիտեք ձեր պարտականությունները: Ասլա, դու, Մարչենկո, ասա տեսնեմ՝ ով և մեր զորքերի գլխավոր հրամանատարը:

Վոտի թռավ չեռոտ, լայնաղեմ, աջ բեխի կեսը ծաղկից տարած՝ Մարչենկոն և բարձր ձայնով ասաց.

— Նորին պայծառափայլություն գեներալ աղյուտանդ իշխան Գալիցինը, պարոն յեֆրեյտոր:

— Պողոսով, ով և մեր բրիգադայի հրամանատարը:

Ձեռքերը ծնկներին խփելով, ցցվեց թիֆլիսեցի կարմրաթուզ Պողոսովը, վոր հայերից ամենաաչքաբացն եր և աչքերը կկոցելով գոռաց ահագին շեշտերով.

— Եեր բրիգադայի հրամանատարը նորին գերազանցություն գեներալ-մայիսոր Իվանովն ե, պարոն յեֆրեյտոր:

— Այդպես չպետք է ասել — ուսուցիչը նստելով, — հարկավոր չե՛ կըկնել «մեր բրիգադայի հրամանատարը» բառերը:

— Դու, Վարմուս, ասա, ով է մեր գնդի հրամանատարը:

— Նորին բարձր ազնվություն գնդապետ Վոլկովը, պարոն յեֆրեյտոր, լուրջ ու չափված տոնով պատասխանեց լեհացի Վարմուսը:

— Լավ: Ապա Ֆեոդորով, ասա ինձ. յեթե ճանապարհին պատահի մեր գնդապետը և ինքը հարցնի քեզ՝ թե ով է ձեր գնդապետը, դու թնչ կպատասխանես:

— Յես կասեմ «հրամանքդ եք, ձերդ բարձր ազնը վություն», պարոն յեֆրեյտոր, պատասխանեց ինքնագոհ ժողովով Ֆեոդորովը:

— Լավ, Ավգալով, դու ասա, ով է մեր թագավորը:

— Հրամանքդ եք, պարոն յեֆրեյտոր, — շտապով վրա բերեց ջրավից աչքերով Ավգալովը, բառերը քթի մեջ գցելով:

Բոլորը փոթկացրին, թեև անկարելի յեր ծիծաղել զբաղմունքի ժամանակ: Յես զարմացա, վոր Զվերել մի քանիսի «դունչը չջարդեց» այդ ծիծաղի համար. մի քանիսի «դունչը չջարդեց» այդ ծիծաղի համար. լընդհակառակը, ինքն ել ժպտաց և ապա դառնալով Ավգալովին, ասաց.

— Անխելք յեզ, միթե այդ ել չգիտես. ինձ թագավոր ես դարձնում, հա... ահա քեզ մի մեղալ զրա համար! — Յեկ նրա խոնավ քթից բռնաց քաշեց, ու տարավ բերեց: Ավգալովը բան չհասկացավ, իհարկե, նրա ասածներից և միայն աչքերը սարսափից խփեց, գլուխը քթի հետեւց առաջ տանելով դեպի յեֆրեյտորը. ու

աչքերը բաց անելով ապշեց, վոր յեֆրեյտորը այսոր վոչ հայեցեց և վոչ ել խփեց:

— Լավ, Ավգալով, ասա տեսնեմ, պահապահն զինվորը թնչ պարտականություն ունի, պոստին կանգնած ժամանակ:

Ավգալովը, վոր ուսերեն հազիվ եր սկսել հասկանալ, զիսի ընկավ «պահապահն» և «պոստ» բառերից ու վրա բերեց:

— Զաստվոյի նա պոստ՝ նե կուրի, նե պիտ, նե կուշատ, գասպաղին յեֆրեյտոր:

— Ապրես, Ավգալով:

Ավգալովը վրգեց ու նստեց:

— Ես, — ասաց յեֆրեյտորը կեղծ դժգոհությամբ ու ժպտալով. — հապա քեզ վոր գովում են, ասում «ապրես», թնչ պիտի պատասխանես:

Ավգալովը կանգնեց վեհափառ լուսթյամբ:

— Դու ասա, Զեկմարյով:

— Պատ ստարտ, գոսподին եֆրեյտօր, — պատասխանեց Զեկմարյովը:

— Նու, Ավգալով, կրկնիր:

— Բաստրաս, գասպաղին յեֆրեյտոր, մըմուց Ավգալովը և կրկին զարմացավ, վոր ծնոտը ազատ մնաց ուսուցչի բռունցքից:

— Ի՞նչպես բարի յեր այսոր մեր ուսուցիչը, — ասաց Պիխունը ինձ պարապմունքից հետո. Պիխունը, վոր որական առնվազն մի հարված ու յերեք հայհոյանք եր վաստակում. — և մարդ ել թնչ լավ տրամադրություն և ունենում պարապելու, յերբ վրադ չեն բղավում ու չեն ծեծում:

Յեփրեյտորի փոփոխության դադանիքը կամաց-կամաց սկսեցի հասկանալ որվա ընթացքում, թեև բոլորովին պարզվեց ճաշից հետո միայն, յերբ զբաղմունքները վերջացրած, ամեն մեկը քաշվել եր գործին:

Յեփրեյտորն ինքը փոխվել եր ու փոխվել բայց փոխվել ելին նաև ֆելդֆերելը, զգվողի ավագները և մյուս յեփրեյտորները. սրանց փոփոխությունը հատկապես Զվերենի վերաբերմամբ եր, Ֆելդֆերելը դիվանատուն վագելիս, կամ գուրս յելնելիս, յերբ պատահում եր Զվերենին, աչքերը մանրացնելով ժպտում եր ու սուսերը սրունքին շնկացնելով սլանում: Ունտեր-սփիցեր Մահուրինը իր հաստ և կարճ մատներով Զվերենի ձեռքը բռնած՝ ինչ վոր պատմում եր ու ծիծառում: Իսկ չորրորդ վզվողի ունտեր-ոփիցեր «Ալիլիպուտ» Զայկինը աչքը ճառում եր նրան պատահելիս, ծիծառում և մի քանի անգամ ել ձեռը վերե պարզելով, թեթև հարվածեց նրա թիակին: Սրանց այդ հանդիպումների ժամանակ յես մի քանի անգամ լսեցի «մագարիչ» բառը:

Որը շաբաթ եր: Ճաշից հետո մենք զբաղմունք չունեյինք, դուրսն ել սաստիկ անձրև եր ու փողոցները ցեխ, ուստի յեկեղեցի ել չտարան:

Յես մի անկյունում նստած կարդում եյի, յերբ մեկը առաջ կանգնեց ու ձեռը զրից ուսիս:

Յես մատս տողին դրած, զլուխս բարձրացրի: Առջես կանգնած եր Զվերենը իր այդ որվա տարորինակ ժպիտով:

— Պարհն Ակոպով, գնանք դիվանատուն մի քեչ ժամանակ անցկացնելու: (Նա ինձ զբաղմունքից դուրս

միշտ «պարոն» եր ասում, իսկ զբաղմունքի ժամանակ ուղղակի ազգանունս եր տալիս):

Ել «չե» չասացի, վորովհետև ինձ համար նրա փոփոխությունը լուրջ հետաքրքրության առարկա եր դարձել:

Հասարակ տախտակի սեղանի վրա զրված եյին մի մեծ սկ սոմի, փոան սպիտակ հաց, պանիր, մի մեծ կտոր յերշիկ և մի հաստ շերտ սպիտակ խոզի ճարպ, Յերկու հատ գինու և մի քանի հատ ել թեյի կեղտակալած բաժակները շարված եյին ողիյով լի շշի կողքին, իսկ սեղանի մոտ, հատակին դրված եր մի շտոփ լիքը գինի:

Ֆելդֆերելը, վոր գրասեղանի մոտ նստած զրում եր, շուռ յեկավ և ասաց.

— Ահ, յեկաք... դե նստեք, նստեք, շնորհավորենք Զվերենին նոր ժառանգի համար:

Գաղտնիքը միանգամից պարզվեց ինձ համար. բայց ելի տարրորինակ թվաց Զվերենի բռնազրոսիկ ժպիտը:

Մենք շարվեցինք սեղանի շուրջը: Ինձ համար այդպիսի ժամանցները հաճելի եյին նրանով, վոր այդ ժամերին վերանում եր մեր միջից այն պաշտոնական հարլաբերությունը, վոր թե աղատ ժամանակները և թե մանավանդ զբաղմունքի ժամերին այնպես խստությամբ եր գործադրովում:

Ֆելդֆերելի թուխ դեմքը նեղ ու կայծոտ աչքերով, վոր ուղղակի սարսափ եր տարածում ամբողջ վաշտի վրա, սկսած վզվողի ավագ ունտեր-ոփիցերներից մինչև վերջին նորեկ զինվորը, այդ ըոպեյին լիքն եր մեղմությամբ ու սովորական մարդկային ժպտով: Նրա հայացքը վորից քաշվում եյին նույնիսկ մեր վաշտի

սպաները, այս բոսկելիս ծակող ու լրջացնող տեսք չուներ:

Մահուրինը, վորի միայն ձայնից դողում եյին մեր վզվողի զինվորները, յերբ նա վորոտազին հրաման եր արձակում իր վզվողի հետ պարապելիս, այժմ հաճոյախոս կատակարան ե դարձել:

Իսկ Զվերել, իր անմոռանալի ուսուցիչ Զվերել, իր անհամ-սպանիչ կատակները մոռացած, արհեստական լրջությունը թողած, ուղղակի փայլում ե, կարծես առջև մոմ վառած յուզաներկ պատկեր լինի:

Նա նստեց իմ դիմաց, շարվեցին և մյուսները: Զվերել բնեխերը վոլորեց, վոլորեց, մինչև վոր նրանց յերկար ծայրերից ողակներ շինեց այտերի վրա: Ասլա ողու շիշը վերցրեց, բերանի զմուռը փշրեց դանակի կոթով, ու շին բերանը դեպի հատակը բռնած, ափով ամուր խիեց վոռքին: Խցանը դուրս թռավ, և նա վոտքի յենելով, սեղանի վրա կռացած բաժակները լցրեց:

— Վերցրեք, Վալերիան Անստոնովիչ, դարձավ նա ֆելդֆերելին:

Մյուսներն ել հետեցին ֆելդֆերելին և բաժակները վերցրած պահեցին ձեռներին ու նայեցին Զվերելի փայլուն յերեսին:

— Նու խմենք: Զվերել, կենացդ, շնորհավորում եմ ժառանգիդ աշխարհ դալը:

— Բարի ժառանգ լինի, — ձայնակցեցին մյուսները և շուր տվին բաժակները:

Բայց ինձ սաստիկ զարմացնում եր Զվերելի անփույթ ու անաշխույժ վերաբերմունքը:

Մի քանի բաժակներ իբրար յետելից դատարկվեցին թեթև բարեմաղթություններով:

Քանի յերրորդ անգամն եր արդեն, վոր յես այդ մարդկանց «քեֆը» տեսնում եյի: Այդ քեֆերը մի մեծ տարբերություն ունեյին մեր կովկասյան քեֆերից: Մեր քեֆերի ժամանակ յերգն ու աղմուկը, նվազն ու բլրլոցը առաստաղն են վերցնում գլխիդ վրայից: Իսկ այստեղ վոչ կովկասյան աշխույժ յերգը կա, վոչ խառնաշփոթ աղմուկը: Մարդկի խոսում ու խմում են հանդարտ, և յեթե կողմնակի դիտող լինի, նրան կթվաթե մի մեղմ, հանդարտահոս գետ ե անցնում առջեռվը, թեև յերբեմն այդ գետն ել հանկարծ հանդիպում ե ժայռերի ու ցաւկուա գոյցունով հարվածում նրանց: Միայն այստեղ ամեն բաժակից հետո կատար հայոցական խոսքեր նույնիսկ կենացներում կցված: Վերջում այդ հայոցանքներն այնքան բազմանում են, վոր շատ անգամ նույնիսկ կովի յեն փոխվում:

— Այս քանինը յեղավ, Զվերել, — հարցրեց Մահուրինը:

— Սա յերկորդն ե: առաջինը աղջիկ եր, իսկ սա տղա: Յերկուսին ել չեմ տեսել: Յերբ յեկա ծառայության կատայուշն արդեն յերեխով եր, յերգումը նոր եյի տվել, վոր նամակ ստացա, թե ազատվել եւ Մայրը նամակ եր գրել: ասում եւ «Այնքան սիրուն ե ու քեզ նման, վոր կարծես քո պատկերն ե փոքրացրած»: Կերա ե անունը — Կերոչկա հոգուն մատաղ, վերցրեք խմեք իմ սիրունիկ Վերոչկի կենացը:

Նա մի ումպով դատարկեց ողու բաժակը: մյուսները հետեւցին նրան:

Ողու շիշը դատարկվեց և գինին յեկավ ասպարեզ: Կովկասյիները գիտեն իրենց բերանի լազաթը, ասաց Փելդֆերելը: — խորովածն ուսում են ու կարմիր 7*

գինին անուշ անում... թեև մեր Սմիրնովկին բան չի հասնի:

— Սատկած Սերգոն գրա համար և շարունակ գինու շիշը շինելի գրպանը գրած զորանոց գալիս.— վրա բերեց Զայկինը:

Գլուխներս արդեն պտտվում եյին:

Զվերեի աչքերը լայնացել ու պսպղում եյին կարմիր, տարորինակ փայլով, նա ամենից շատ եր խմում: Հանկարծ դարձավ Մահուրինին, ճակատին մեխած բռունցքը պսպղուն մազերի վրայով սահնցրեց մինչև ծոծրակը, և գլուխն իջեցրած մինչև արմունկը, թշերն ուոցրած, ատամների արանքից մի փնչոց արձակեց ու ասաց:

— Արկադի Վալենտինովիչ, դուք լինեցիք իմ տեղը, ինչպես կվարվեյիք:

Մահուրինը ձկաձև յեղունգները խաղացրեց սեղանի վրա, աչքերը մանրացրեց և նենդ ժպիտով պատասխանեց.

— Գնացած բանի յետեկց չեն ընկնի, Զվերե... Մեր նախկին ստարօստի կինն ել յերեք յերեխա բերեց, յերբ մարդն աքսորի մեջ եր:

Զվերեը նայեց ինձ գլուխը թեքած, և ջրալի ժպիտով ասաց.

— Յերեակայտեմ եք, պար՞ի Ակոպով, չորս տարի յե, քացակա եմ տնից, կնոջս յերեսը չեմ տեսել և հանկարծ յերեկ նամակ եմ ստանում, թե տղա յե բերելու... Այ բուսուրմանի աղջիկ, տեսնես ում հետ և ժամանակ անցկացրել, Գալուս որը փաթաթվեց ինձ, լաց յեղավ և ասաց «Նիկոլայ Վասիլեկիչ, տես ինձ չմուանաս, հա, յես ել քեզ չեմ դավաճանի. նամակ շուտ-շուտ գրիր...»: Ասենք յես ել եմ մեղավոր, չորս տարվա մեջ խեղճին

ընդամենը 8 ոուրլի փող եմ ուղարկել: Ավել ել չեյի կարող ուղարկել. ամսական մի քանի կոպեկ զինվորի ոոճկով և ավելորդ կոշիկներ ու հաց ծախելով ինչ փող կարելի յե յետ զցել վոր կնոջտ ել ուղարկես: բայց ինչպես յերեսում ե, անխիղճը դավաճանել ե ինձ:

Ֆելդֆերելը ծիծաղելով ասաց. — Իսկ դուք զբանեք տերտերի ու տիրունու պատմությունը: Այդ պատահեց մեր վոլոստում սրանից յերկու տարի առաջ: Անա թե ինչ,

— Ուրյադնիկ Ստեղանովի կինը շատ զեղեցիկ եր ու վոլոստում ասելիք. տերտերն ել՝ աչքից զոր: Մի քանի անգամ յեկեղեցում քարոզ ասելիս աչքի տակով լավ տնտղում ե: Այդ որերն ել, — ասում են, — կաչաղակի նման նրա լեղուն բացվել եր. ամեն մի դատարկ բանի համար շուռ եր գալիս դեպի ժողովուրդը և խրատներ կարդում: Մարինան ել — ուրյադնիկի կինը, հենց մի գլուխ միենույն տեղում, նրա աչքի առաջ ցցված, ձեռքով իր կուրծքն եր հարդարում:

Մի անձրեսու որ ել Մարինան փողոցից անցնելիս տեսնում է տերտերին ու խրվում ցեխի մեջ և աղաղակում ե. ռոգնեցեք, քրիստոնյաներ, ոգնեցեք. խըրվեցի, խեղղվեցի...»: Տերտերը փարաչան հավաքած վազում է ու նրա թելիցը բռնած ցեխի լճից գուրս քաշում: Մինչև ցեխից աղատվելը բավական ժամանակ է անցնում, և նրանց մեջ խոսակցություն ե տեղի ունենում, ժամադիր են լինում: Նույն յերեկոյան ուրյադնիկ Ստեղանովը ծառայության զործով տանից հեռանում է և տերտերը ծածուկ գալիս և նրա տունը «որհնելու»: Դիշերը քնում ե այնտեղ ու քնած մնում:

— Այ դու խորամանկ, աչքածակ, տեսնիւմ ես, — հրհնաց լիլիպուտ Զայկինը:

— Դեռ սպասեցեք, այդ չի մաղալուն, ընդհատեց նրա քրքիջը ֆելդֆերելը. — ինչպես ե պատահում, ուրյադնիկը փամփուշտները մոռացած ե լինում տանը և կես գիշերին վերադառնում ե տուն։ Հանկարծ տերտերն ու Մարինան լսում են դռան թխթխկոցը. Մարինան շփոթված վեր ե կենում ու, առանց իրան հաշիվ տալու, դուռը բաց ե անում։ Մինչև ուրյադնիկի ներս մտնելը, տերտերը սարսավահար դուրս ե փախչում, բայց չի կարողանում շորերը հագնել ու շապկանց վազում և զեղի լիբնց տուն։

— Այ քեզ բան, — փոթկացրին բոլորը միասին և սեղանը կենդանացավ բաժակների չըխչըխկոցով։

— Դեր սպասեցեք, ե... իսկական մաղալուն հետո ե գալու, — ասաց վոգնորված ֆելդֆերելը և գինու բաժակը դատարկելով շարունակեց։

— Տերտերը իրենց տանից զնալիս բանալին հետը վերցրած ե լինում, վորով հույս ուներ, թե դուռը դրսից կրանա և տիրուհուց ծածուկ ներս կմտնի։ Բայց սատանական բան ե, ելի, ուրյադնիկի տանից փախչելիս, վարտիկը թողնում է այնտեղ. իսկ բանալին վարտիկի գրպանումն եւ Տերտերը գալիս կանգնում ե դռանը ու չի համարձակվում դուռը թակել. և այդպիս տկլոր պազում ե խոտի զեղի տակ ու դողում մինչև լույս։ Տիրուհին զարթնում ե, տեսնում ամուսինը չկա, գլխի յի ընկնում թե բանն ինչ ե. դուրս ե գալիս տանից, դուռը կողպում ե ու վազում ստարուսի մոտ, գանգատվում։ Տիրուհու ձայնի վրա ամբողջ գյուղը հավաքվում ե, և գաղտնիքը բացվում ե, բանն այն ե՝ ուրյադնիկը իր կնկա վրա ե գանգատ տալիս, տիրուհին՝ իր մարդու. և յերկուսը միասին՝

ձանապարհ են ընկնում սայլակով, գնում են 200 վերստ, բողոքում են առաջնորդին և դատաստան պահանջում։

— Բա ասում եք, կնկան հոգի կա... — գոչեց Մահուրինը. — կնիկը հոգի ունենար, Աղամին դրախտից արտաքսել կտամբ։

— Հետո, առաջնորդին ի՞նչ ե անում, — ընդհատելով Մահուրինի խոսքը, դիմեց ֆելդֆերելին Զայկինը աշքերը լայն բացած։

— Առաջնորդի... առաջնորդն ի՞նչ պիտի աներ։ Բարկանում ե սաստիկ տեր հոր վրա, վոր նա այդպիսի խամ բան ե բռնել հոգեռականության պատիվը գետնովը տվել։ Սպառնացել ե իր ծխից զրկել և Անդրկովկաս կամ Թուրքեստան ուղարկել աղիատների (ասիացիների) շրջանում պաշտոնավարելու։

Տերտերը հինգ հատ Յեկատերինա (հայուր ոուբլիանոց) տալով սրբազնին հազիվ ե գլուխն ազատում ու տուն դառնալով ուրյադնիկին փոխել ե տալիս իրենց շրջանից։ Ասենք սրա բանն ել լավ ե գնում, վորովհետև նրան ուղարկում են Յերեանի կողմերը պլիստավիք պաշտոնով։

Ցես ուշադիր հայացքով հետեւում եյի Զվերնի ամեն շարժումներին ու խոսակցությանը, նրա գաղտնիքն իմանալու վայրեյանից սկսած։ Ինձ սաստիկ հետաքրքրում եր, թե այդպիսի մի լուրի հանդեպ նա ի՞նչ ե անելու։ Հարավային բորբ յերկնքի տակ աճած ուղեղումս գալիս խառնվում ու բաղխվում եյին իրար այլանդակ պատկերներ, և յես ուսուցչիս հետ մտքով սլանում եյի նրա հեռավոր հայրենիքը, նրա տանը տեսնելու ահավոր արկածներ. ու ահա կաղզում եյի կարծես դրանց նախաբանը ուսուցչիս առկայծող աշքերում...»

Յեփրեյտոր Զվերկը ատամների արանքից մի խուլ մոնչոց արձակեց, աջ բեխի ծայրը բերանն առավ, բայց իսկույն հանեց և նորից, վոլորաձի, թշին կպցը նելով մոնչաց.

— Բայց հետաքրքիր ե, վոր բուսուրմանի հետ ե հոգին կորցրել Կատյուշ, ե...

Սակայն նա իսկույն մեղմացավ, նախկին ջրալի ժպիտը խաղացրեց յերեսին և ասաց ծորացնելով.

— Բայց դլխավորն այն ե, վոր նամակ ել ե գրել աչքալույս ել ե տվել, նամակն ել ճիշտ են նամակի նման ե, վոր առաջին անգամ գրել եր. «Իմ հույս, — ասում ե, — ունքերն իսկ քո ունքերի նման են».... Այ դու անխիղճ Կատյուշ, չհամբերեցիր, ելի. խիղճդ դեն դրիր....

Յեկ նա կարծես նորից ուղում եր բորբոքվել, բայց հանկարծ բաժակները լցրեց, թեյի մեծ բաժակը առավ ձեռքը, խոպս ու ընկճված մոնչալով ասաց.

— Խմենք, տղերք, հերն ել անիծած.... — Յեկ դատարկեց միանգամից ահազին բաժակը:

— Ժառանգիդ կենացը, Զվերե, — ասացին մյուսները անկեղծ ծիծաղով ու սկսեցին նրա հետ տաք-տաք համբուրգիր....

Ու նա ժպտում եր մեղմ, և նոր վառված լամպի առաջ նրա յերեսը ավելի եր փայլում....

Յերկուշարթի առավոտյան, յերբ նստեցինք բանավոր զբաղմունքի, յես նկատեցի, վոր յեփրեյտորի յերեսից անհետացել եր մելամաղձոտ ժպիտը Իսկ յերբ նա կանոնագրքի կազմը կորսունի դնչին խփելով, յեռանդուն կրկնել եր տալիս նոր հողվածի բառերը, յես տեսա նրա մեջ իր նախկին մհծափառությունը և մի բան ել ավելի....

Յես, վոր արդեն գիտեյի Քեռու պատմությունը, զարմացած եյի մնացել Զվերեի այս անտարբերության վրա. Արդյոք խառնվածքների տարբերություն եր, արդյոք հարավի ու հյուսիսի արևների մէջ եր այս տարբերությունը, թե վարքերի ու կենցաղի վրա ունեցած հայացքների. Արդյոք Զվերեկը զուրկ եր այն բուռն կրքերից, վորոնք հուզվում ու գալարվում եյին Քեռու ներսում, թե գուցե նա ծայրահեղ «աղատամիտ» եր կենցաղի ու սիրո վերաբերմամբ. Քեռի ու Զվերե... յերկար ժամանակ այս յերկուսը չեյին հեռանում իմ մտքից, յերբ մի որ, պատահորեն իմացա պատմությանս շարունակությունը:

III

Տարիներ անցներուց հետո, յես մի որ եքսկուրսիայից վերապառնալով, Զուլֆա գնացող գնացքից իջա Ռւլուխանլու և սպասում եյի Յերեանի գնացքին, Պլատֆորմի վրա անց ու դարձ անելիս հանկարծ նկատեցի մի ծանոթ գեմք, վոր գալիս եր իմ հանդեպ, Յերկաթուղային ծառայողի համազգեստով, նիհար, մանր զիմագծերով մի կարճահասակ մարդ եր, մի հաստ մատյան կոան տակին: Դեմքը թեե ինձ ծանոթ թվաց, բայց յես նրան չճանաչեցի, ինձ հանդիպելով, նա զարմացած կանգ առավ ուղիղ գեմս, ճանապարհ փակելով, ու բացականչեց.

— Ա, պարոն Ակոպով. Վոր քամին ե բերել ձեզ այս կողմը. շորերդ փոխել եք, չճանաչեցի:

Ապա ձեռս բռնելով, ամուր թոթվեց ու նայեց ուղիղ աչքերիս: Յես, վոր զարմացել եյի գետնից հանկարծ բուսած այս անձանաչ «ծանոթի» հայտնվելուց, պահ մի

Նայեցի նրան անձայն, ապա նրա հավի աչքերից ու
յեռանկյունաձև կզակից, իսկույն մտաբերեցի նրա
դեմքը, ու հին ծանոթին հանդիպող մարդու սրտա-
բաց ուրախությամբ գոչեցի.

— Ո՞... պարոն Զայկին. այդ դուք եք: Դուք այս
կողմերում ի՞նչ եք շինում. միթե ծառայությունից
հետո չեք վերադարձել տուն:

— Կոչ մնացի այստեղ, կնոջս ել կանչեցի և այժմ
Յերեանում, ապրանքային կայարանում գրագրի պաշ-
տոն եմ կատարում: Յևս կովկասի կլիման սիրեցի.
տանն ել ապրուստը դժվարացել եր. մտածեցի, վոր
այլ ևս յերկրագործություն անիլ չեմ կարող, այժմ ծա-
ռայում եմ:

— Հապա հիմա մւր եք դնում, — հարցըի յես:

— Յերեան պիտի գնամ. այստեղ պաշտոնական
գործով եյի յեկել, գործերս վերջացրի, այժմ սպասում
եմ գնացքին:

— Լավ ե, ասացի յես, ուրեմն միասին կգնանք:

Ու վերհշեցի զինվորական կյանքս, զորանոցը. մի
տեսակ փափագ զգացի վերակենդանացնել այդ որերը
հիշողությանս մեջ, վորքան ել նրանք դառն լինելին:

Խոսելով մտանք բուֆետ: Յերկու շիշ գարեջուր
պատվիրեցի, ու մի սեղանի մոտ նստեցինք իրար դի-
մաց: Միմյանց կյանքի, ընտանեկան կացության ու
պաշտոնի մասին մի քանի սովորական փոխադարձ
հարց ու փորձից հետո մենք անցանք հիշողության
դարձած որերին: Մեկ-մեկ հիշեցինք զորանոցի կյանքը,
դեպքերը, դեմքերը: Հիշեցինք Փելդֆերելին, ավագ-
ներին, սպաներին, զինվորներից նրանց, զորոնք վորոն
բանով աչքի եյին ընկել:

Այդ ըոպեյին ահա, նորից պատկերացավ իմ առաջ
իմ ուսուցիչ յեֆերյուր Զվերեի վեհափառ, զվարձա-
լիության չափ վեհափառ դեմքը, պլազման, յուղած
թղթի պես փայլուն դեմքը, ապա նրա ընկճած
ժպիտը քեֆի ժամանակ: Ու յես հարցըի:

— Իսկ ինչ յեղավ Զվերեը, վերադարձավ հայրենիք,
թե նա ել մնաց կովկասում:

— Զվերեից... — ասաց Զայկինը, բաժակը զատարկե-
լուց հետո շրթունքները ծպացնելով և պաղունցով
աղը դնելով լեզվի ծայրին. — Այս, Զվերեը, անբախտ
վերջ ունեցավ:

— Ի՞նչպես, — հարցըի յես լարված հետաքրքրու-
թյամբ, — մեռի ե:

— Վաչ, ավելի վատթարը, — ասաց նա խոր հառաչե-
լով և մի շիշ ևս գարեջուր պատվիրելով:

— Հիշում եք մեր փոքրիկ կոնծաբանությունը զո-
րանոցի գրասենյակում, վորտեղ մենք խմեցինք Զվերեի
ժառանգի կենացը:

— Այսորվա պես առաջս և այդ պատկերը և կար-
ծես հենց հիմա լսում եմ Զվերեի խոսքերը:

— Լավ, ուրեմն, վոր հիշում եք: Հենց նույն տարին,
ձեր գնալուց հետո մենք ել վերջացըինք ծառայություն-
ներս ու պատրաստվեցինք տուն գնալու: Շատերը մե-
զանից չուզեցին հայրենիք վերադառնալ. ամեն մեկը մի
պաշտոնի տեղ եր արել: Մահուրինը մտավ ժանդարմա-
կան ծառայության և այժմ կարծեմ Ալեքսանդրսպոլումն
ե, յես մտա այստեղ, մյուսները զանազան տեղերում
նման պաշտոններով: Զվերեը ևս տեղ եր գտել Գանձակի
կայարանում. կարծեմ դեպոյում պիտի աշխատեր: Բայց
նա անմիջապես չանցավ աշխատանքի: Ասաց. «Գնամ

տուն, տանեցոց տեսնեմ, կնոջս վերցնեմ գամ, այս տեղը ձեռիցս չի գնա, վորովհետև դեպոյի բաժանմունքի պետք իմ հայրենակիցը և լավ բարեկամն և հաստատ խոսք ե տվեր, վոր վերադառնալուս ըոպեյին պաշտոնի կլանգնեմ։ Ասաց ու գնաց. յերանի չգնար. կարծես սատանան քաշում եր նրան։

Գնում ե տուն, իսկ տանը փորձանքը նրան սպասում եր։

Նրանց գյուղի ստարոստան, Յակով Վասիլեիչ Ժելտուխինը, հայտնի կնամել, հարբեցող ու ցոփ կյանքի տեր մարդ եր։ Սալզաթների կանայք մանավանդ նրա ձեռքից աղատում չունեին։ Խարում եր անխղճորեն, վորին նվերներով, խոստումներով, վորին ծառայության կարգելով իր գործերում, իսկ ավելի ռպինդերին՝ սպառնալիքներով ու սաստումներով։ Զվերեի կնոջը գործ ե տալիս իր տանը, կարգելով իբրև ջուր բերող և բաղանիքը վառող։

Խարում ե նրան ես, իսկ հետեանքը ձեզ արդեն հայտնի յե։

— Հա, հասկացա, ուրեմն յերք Զվերելը վերադառնում ե տուն, կնոջը նրանց տանն ե տեսնում։

— Կոչ, սպասեցեք, դեռ այդ բոլորը չե։

Յակով Վասիլեիչը մի զգվելի սովորություն ուներ։ Այդ կանանց արատավորելուց հետո, տալիս եր իր յերկու տղաներին, վորոնք պարապ-սարապ թափառելով, այդպիսի կիղտոտ բաներով եյին միայն զբաղված։

Զվերելը յերք վերադառնում ե տուն, այս բոլորն իմանում ե կնոջից, վորը լալով պատմում ե նրան ամեն բան։

Զվերելը մի իրիկնապահ կացինը ուսին, իբր թե գնում ե անտառ վայտ կտրելու այն ժամանակ, յերք

զյուղամիջով ձեռքը գրպանը դրած անցնելիս և լինում ժելտուխինի մեծ զավակը՝ Յեմելյանը, Զվերելը մի ուժգին հարվածով սուր կացինը խփում ե նրա վզի աջ ուսավերեկց մինչև կոկորդը։ Աղմուկի վրա հավաքվում ե վողջ գյուղը, վազում ե և ինքը ժելտուխինը։ Զվերեն ուզում ե նրան ել հարվածել բայց բռնում են և ձերբակալում։

Դատարանը տաժանակիր աշխատանք և ապա աքսոր ե ուզարկում։

— Խեղճ Զվերեն, — բացկանչեցի յես տիուր, — ուրեմն այժմ նա աքսորումն եւ։

— Այո տաժանակիր աշխատանքի, — հատուկ շեշտով ավելացրեց Զայկինը։

Մի մի բաժակ գարեջուր խմեցինք, ապա մի քանի ըսովե յերկուսս ել լուռ նայում եյինք սեղանին դրած մեծ, կեղտոտ աղամանին։

— Բայց չե վոր նա այնպես անտարեր խմում եր «նոր ժառանգի» կենացը, և ինքն ել «մագարիչ» արավ։

— Այո խմում եր, — ասաց Զայկինը թախծոտ շեշտով, — խմում եր անտարեր ու խոսում անվզով։ Բայց ինչ իմանաս այդ բոպեյին ինչ եր կատարվում նրա ներսում։ Նայեցիք, պ. Ակոպով, — ասաց նա ձեռը մեկնելով դեպի պատուհանից հեռացող հեռու հօրիդոնը. տեսեք այդ գորշ ամպերը. վորքան լուս, խաղաղ ե յերկինքը. բայց ինչ իմանաս, այդ ամպերի մեջ այժմ ինչ ուժեր են կուտակված, վորոնք մի քանի բոպեյից հետո ով գիտե, ինչպիսի վորոտումներով ու ճայթյուններով յերեան գան։

— Խեղճ Զվերեն, — կրկնեցի յես, — իսկ յես, պարոն Զայկին, այն ժամանակ նրան համարում եյի զգաց-

մունքից զուրկ, անխիղճ մի անձնավորություն, մի անողոք գաղան, յերբ նա այնպես անխնայորեն հարվածում ու նախատում եր թշվառ նորեկներին:

— Այս հարվածում եր անխնա, — վրա բերեց Զայկինը, — հարվածում ու նախատում եր, վորովիետեինքն ել ծեծված ու նախաված եր: Դուք լսել եք, պարոն Ակոպով, մարդկանց մի տեսակ պատժի մասին, վոր մի ժամանակ սիրում եյին գործադրել Ռուսաստանում կալվածատերերը իրենց ճորտերի վերաբերմամբ, և վորը այսոր ել դեռ շատերը վորոշ տեղեր գործադրում էն: Նրանք իրենց հրամանը խախտող ծառային (ՃՅՈՐՅԱՅԻ), կամ անհնաղանդ ճորտին գցում եյին պարկի մեջ մերկ մարմնով, նրա հետ գցում եյին նաև մի շուն կամ խոշոր կատու, պարկի բերանը կապում եյին և սկսում եյին հարվածներ տալ անսառնին: Ի՞նչ եք կարծում, հետեանքը ի՞նչ կլիներ, պ. Ակոպով:

Ցես սարսափեցի այդ պատկերից ու բացականչեցի.

— Ո՞ւ ո...՝ ի՞նչ սոսկալի տանջանք ե...: Կատուն հո կծվատեր թշվառ զոհին իր ատամներով, մագիլներով...:

— Այս, կծվատեր, — վրա բերեց Զայկինը, — և ծվատում եր...

Այդ մարդկանցից շատերը, վորոնց գուք տեսնում եյիք անգթորեն ծվատելիս խեղճ նորակոչիկ զոհերին, իրենք — այդ ծվատողները պարկի մեջ գցած կատուներ եյին, վորոնց հարվածում եյին անխնա հաստագլուխ մահակով և ստիպում ուրիշին ծվատել...:

Գնացքը յեկավ: Մենք միասին տեղավորվեցինք ու ճանապարհ ընկանք:

Յերեանին չհասած, մի ուժգին փոթորիկ բարձրացավ: Յերկինքը վորոտաց, փայլատակվեց. լսեց մի ահեղ դղրդուն, ապա ամպերի մեջ հրեղեն մի զիգզագ ու սուր ճայթուն: Ապա զլիներիս վրա — վագոնի տանիքին սուր կըտկտոց ու հեղեղ:

Մենք լուռ նայում եյինք բնության այս վեհասարանին: Յես նորից մաքով տեղափոխվեցի զորանոցը, պատկերացը Զվերեին իր հանդարտ ժպտով, ապա տոպրակի մեջ սուր ատամներով և ապա կացինը ձեռին ժելտուխինի վորդուն հարվածելիս կատաղի մոնչոցով...

Վորքան ձիշտ եր ասում Զայկինը կես ժամ առաջ կայարանում, ձեռը պարզած դեպի գորշ ու լուռ ամպերը..., մոտածում եյի յես:


1913

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քողը	5
Քեռին	52
Նայակ	91

Отв. редактор [REDACTED] Техред. Т. Хачавянян
Сдано в набор 4/I-34 г. Подписано к печати 26/I-34 г.
Формат 82×110^{1/32}. Об'ем 31^{1/2} п. л. В печ. л. 46 000 п. зн.
Главлит № В-41876 Заказ № 31 Тираж 2100

Тип. Госиздата ССР Армении, Москва, Армянский, 2.



«Ազգային գրադարան



NL0355260

ԳԻԱ 1 Ր. 75 4.

6391

42468

МАРКАР
В КАЗАРМЕ
на армянском языке

Госиздат ССР Армс

891-71-93
IS - 37